1851

4182

491.99-8
η-29

№ 35 4 4-4 - № 7

Из библиотеки

К. А. Тимирязева

2010

pl.

491.99-8
Դ-29

ՊԱՐԳԵՎԻ

ՄԱՆԿԱՆՑ

498
185-ՊԱ
№ 13293

աշխատութիւնք

Ի Մեծաց Սեբովքեան Պատրիարքաց։

Ի Հայրապետութեան Տեառն Տեառն ՆԵՐՍԷՍԻ Արքեպիսկոպոսի Կաթուղիկոսի ամենայն Հայոց։

Հ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Ս.Ռ.Հ. Публичная Библиотека
7/XI 1922
Ереван, Мясникян
ՄՅԱՍ Ի ՅԱՆԻ ԱՆՎՃԱՐ

ՏԵՂԻՆ։

Ի Տպարանի Ներքինեան Դպրոցի Հայոց ընդարձակեցելոյ յաղնուական Աղայ Գէորգայ Ամիրճանեանց։

Ի 1851 ամ.

2002

11756

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ:

Съ тѣмъ, чтобы по отпечатаніи, представлено было въ Кавказскій Ценсурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Тифлисъ. 10 Генваря 1851 Года.

Ценсоръ Священникъ Іосифъ Орбели.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՏՓԽԻՄԱՅ

Յովսեփայ Աթանասեան

ՄԻՐԻՄԱՆԵԱՆՑ

և

Վարդանայ Բաղդասարեան

ԱՐՇԱԿՈՒՆԻՈՑ

Ի նշան յարգանաց և երախտագիտութեան

ընծայաբերեալ

Հեղինակ Գրոյս։

ՊԱՏՈՒՄՆԵՐ ՏԵՍԼԻՔ

Բաղմադիմի յառաջադիմութիւնք Ձեր յընդարձակ ապարիզն արդար վաճառաշահութեան և յատկական ջերմեռանդութիւն Ձեր յօգուտ հասարակաց արժանացուցին զՁեզ զառաջինն 'ի մէջ հայ վաճառականաց Տիեզերաց ընդունել ՀՕԳԻՈՍՏՓԱՌ ԿԱՅՍԵՐԻՆ, մերմէ զՏիտղոս Պատուաւոր Բաղաքացւոյ. իսկ վասնզի Ձեր յօգուտ հայրենեաց սեփականեն Ձեզ զանուն Հայրենասէր զոր ո՛չ լոկով կոչմամբ, այլ և գործով հանեալ էք և ցանկայք միշտ հանել 'ի հանդէս։

Ըստ այսմ, ո՞ւմ այլ ուսմբ կարէի ես նուիրել զայս իմ առաջնապտուղ քրտանց, եթէ ո՛չ Ձե՛զ միայն, որք ըստ ձերոյսանն բաւականութեան յօժարակամ բերիք յամենայն կարևոր ձեռնարկս յառաջադիմութեան և բարեկիրթութեան հայազգի մանկտւոյն։

Ընկալարո՛ւք ուրեմն, Ողորմած Տեարք, զայս իմ ընծայաբերութիւն 'ի նշան երախտագիտութեան իմոյ առ Ձեզ։ Եղիցի սա յորդւոց յորդիս նոր, թէ՛ և անշուք, յիշատակ անուան Ձերոյ. զի երբ ընթերցցին զայս մատեան դեռահաս մանկունք Հայոց, դիտասցեն, թէ Ձերով աղդասէր գործակցութեամբ անմոռանալի այս իմ դուշնոսքեաց վաստակ, և վասն օգտին՝ զոր քաղեսցեն 'ի սմանէ, Ձեզ եղիցին առաւել երախտապարտ՝ քան ինձ։

Մ. Պապիկոնեանց։

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ըստ այսոց ուսումնարանների մէջ անխոտոր կանոն է դարձել այն սովորութիւնը, որ այրուբենը վերջացնելուց յետոյ տալիս են աշակերտին կարդալու Դոնոն Սաղմոս, Ծեծ Սաղմոս, Կոսկերան և Նարեկ։ Փորձով տեսնուում է, որ այդ սովորութիւնը օգուտ չունի և մանաւանդ վնաս է բերում աշակերտին, որովհետև նոա կարդալով այն գրքերը ամենևին բան չէ հասկանում, և եթէ ուսուցիչը կամենայ նոա հասկացնել բառերը, փոքրիկ աշակերտի համար անկարելի է հասկանալ միտքը։ Վասն զի ի՞նչ պէս կարող է հասկանալ մանուկը այն բանը, որին մեծամեծ դիտուն մարդիք թէ պէտ մեծահատոր գրքերով մեկնութիւն են տուել, բայց շատ բանի վերայ տակաւին չեն կարողացել միտքերը մէկ տեղ դադարեցնել։ Ողորմելի աշակերտք ամենևին բան չհասկանալով կարդում են այն գրքերը, կամ պատժից և ծեծից վախենալով և կամ իրա բնական աշխատասիրութիւնից (որ շատ քիչ է պատահում)։ Այս չհասկանալուց ծագում են զանազան վնասներ։ Մէկ որ շատ երկար ժամանակ է անցնում մինչև որ սովորում է կարդալ, և սորա պատճառն այն է, որ աշակերտը չհասկանալով կարդացած բառերը նեղանում է, ծանրութիւն է համարում իրա համար և միայն 'ի հարկէ տխրեալ թռչունի պէս կրկնում է բառերը, և շուտով դադարում է գրքից։ Որանից հետևաբար սկսում է ծուլանալ, որովհետև ի՞նչպէս կարող է նա միշտ սիրով և տաք սրտով կարդալ են գրքերը, որի բառերը չի հասկանում և որի մէջն դրուածը նրա համար անիմանալի բաներ են։ Գրքի որ մէկ երկու անգամ դասը լաւ պատրաստած չէ լինում, ուսուցիչը սկսում է հարկադրել, պատժել, ծեծել։ Որանից ծագում են աւելի մեծ վնասներ։ աշակերտը սկսում է ատել ուսումն էլ, ուսումնարանն էլ, ուսուցչին էլ։ սկսում է վախչել ուսումնարանից խաբելով իրա ծնողացը, թէ ուսումնարան է գնում, և ուսուցչին, թէ ծնողքը բանի ուղարկեցին, կամ հիւանդ էր, և այլն։ Այս վախչելու ժամանակը նոա գնում է պարապմունքներու և շատ անգամ ծանօթանում է վատ տղերքանց հետ, և նրանցից սովորում է ամենն տեսակ անառակութիւն։ Այսպէս անց-

նում են տարիքը, և վերջապես ծնողքն էլ տեսնելով, թէ ուսման սէր չունի որդին, հանում են ուսումնարանից և տալիս են արհեստ սովորելոյ։ Շատ քիչն է պատահում այսպէս մեծացածներից, որ հաւակ առնելուց յետոյ իրան ուղղի և լաւ մարդ դառնայ. իսկ մեծ մասը մանկութիւնից սովորած պարապ մնալ գալու, արհեստին էլ լաւ չեն հետևում և իրանց բոլոր կեանքը անցնում են դառնութեամբ. շատերն էլ պատահում են, որ վերջը դառնում են անարդ մարդիք կամ մեծ յանցաւորք, և իրանց կեանքը վերջացնում են բանտումը։ Այս երկրորդ՝ գրքի մէջ կարդալով անհասկանալի բառեր, աշակերտը չէ կարողանում ուսանել այն գիտութիւնը և տեղեկութիւնները, որ կարող է և պարտական է ունենալ իրա մանկութեան ժամանակը։ Անչափահաս մանկանց կարդալու գրքի մէջ պէտք է գրուած լինի այն բանը, ինչ որ կարող են նրանք հասկանալ, պէտք է խօսուի այն առարկայից վրա, որ նրանք միշտ տեսնում են կամ կարող են իրանց մտքով հասկանալ, և պէտք է խօսուի այն լեզուաւ, որ նրանց համար հասկանալի է։ Այսպիսի դասական գրքի պակասութենէն աշակերտը 'ի զուր կորցնելով երկու և երեք տարի միայն կարդալու վրա, ոչինչ տեղեկութիւն չէ ստանում էն բաների վրա, որ միշտ տեսնում է կամ լսում է, կամ ինքը իրանից շինում է այն բաների վրա սխալ տեղեկութիւններ։ Տեսակներ շատ չափահաս պատանիք, որ չեն ճանաչել այն սովորական առարկայն, ինչորը լուսաւորեալ ազգերի մանուկները գիտեն։ Ինդուր համար, երբ աշակերտը տարիքը առնելուց յետոյ սկսում է գիտութիւններ և ազատական արհեստներ սովորելու՝ (պատմութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն և այլն), շատ դժուարութեամբ է հասկանում այն բառերը կամ առարկաները, որ լուսաւորեալ ազգաց մանուկները վաղուց գիտեն, և նրա համար նոր բան է թուում այն առարկայի անունը, որ պէտք է վաղուց ճանաչել, և որ գրքի մէջ գրած է առանց մանրամասն մեկնութեան։

Տեսանք ուրեմն, որքան վնաս է յառաջանում այս տեսակ ուսումից և այսպիսի գրքերը տալուց աշակերտին այբուբենարանից յետոյ։ Այն գրքերը, որ այբբենից յետոյ խնդրն տալիս են կարդալու 8 կամ 10 տարեկան աշակերտ-

տին, պէտք է տալ կարդալու 15—18 տարեկան ժամանակը, էն էլ պարզ մեկնութեամբ։ Ընդ հակառակն, եթէ գիրքը լինի գրած պարզ հասկանալի լեզուաւ և խօսի այն սովորական առարկաների վերայ, որ մանուկը միշտ տեսնում է կամ լսում է և կամ հեշտ մեկնութեամբ կարող է հասկանալ, էն ժամանակը աշակերտը նախ՝ սկսով և ախորժանօք կ'կարդայ, վասն զի կարդացածը կ'հասկանայ, և երկրորդ՝ հասկանալով կ'տպաւորի իւր մտքումը այն ամենայն, ինչ որ կ'հասկանայ. ապա ուրեմն միայն կարդալովն կ'ստանայ այն մեծամեծ օգուտները, որ բնաւ չի կարող ստանալ միտքը չհասկացած գրքերից. վասն զի որոնցից օգուտ քաղել կարող է միայն չափահաս ժամանակը։

Միւս աւելի աղդու պակասութիւնը այն է, որ մեր աղգի մէջ համարեա թէ բնաւ չկայ բարոյական կրթութիւն։ Ըստ մեծի մասին ծնողք և դաստիարակք կարծում են թէ՝ իրանց պարտաւորութիւն է միայն կարդալ և գրել և յետոյ քերականութիւն, հաշտաւանութիւն և այլ գիտութիւններ սորվեցնելը. իսկ բարեկեցութեան և պարկեշտութեան կանոնները ո՛չ ոք չէ մտածում տալ և աշակերտը շատ ուշ է սկսում հանդիպել այն կանոնները իւր չափահաս ժամանակը։ Բայց որովհետև իւր մանկութիւնը անց է կացրել անկանոն և անկիրթ, էնդուր համար չափահաս ժամանակվայ խմացածը էլ չէ՝ տալիս նրան իսկական օգուտները։ Ինչպատճառաւ մեր մանկունքը և աշակերտները ըստ մեծի մասին լինում են շատաշրջիկ, կոպիտ խօսող, յիշոց տուող, կեղտոտ, աներկիւղ Աստուածանից և ծնողքից, անամօթ իրանցից մեծերից, կռվասէր, և միով բանիւ ոչինչ կանոն և կարգ չիմացող, թէ՝ և 6 տարեկան ժամանակից սկսած լինելն գրոց աշակերտ լինել։ Մինչև 'ի վեց տարին մանուկը իւր ծնողաց մօտ զարդանում է համարեա՝ թէ կենդանուց նման, միայն կենդանական կարդն կատարելով, և շատ քիչ մանուկ լսում է իւր ծնողքից բարոյական կանոն. էն պատճառաւ ինչպէս իրանց տան ծառաներից, էնպէս էլ դրացիներն տղերքից սովորում է շատ տեսակ անկարգ բաներ, անվայելուչ խաղեր, յիշոցներ և այլն։ Յետոյ ծնողքը տալիս են նրան ուսումնարան, և կարծու-

մեն թէ հնդրով աւարտեցին իրանց պարտաւորութիւնը։ Ուսումնարանումն էլ ուսուցիչք միայն մտիկ են անում նրա ուսանելը, այ կարդալուն և գրելուն. այլ թէ նա ի՞նչ է անում տանը, քուչումը, դասից առաջ կամ յետոյ, եկեղեցումը, փողոցումը, հրապարակումը. ի՞նչպէս է վարվում և խօսում ծնողաց հետ, աշակերտների հետ, իրանից մեծերի հետ, բարեկամների, ծանօթների և ընկերների հետ, իւր եղբարց և քուրերց հետ. ո՛չ ոք չի դիտում և պարտաւորութիւն էլ չէ համարում իրա համար մտիկ տալ, խմանալ և սխալն ուղղել։

Ա. յսպէս անկանոն դաստիարակութիւնից թէ ի՞նչքան մեծամեծ վնասներ են ծագում, ամենեցուն յայտնի է. բայց տխո՛ւր որ մեր ազգի մէջ դաստիարակութեան արհեստը տակաւին չէ՝ կատարելագործեալ և ամենայն ոք փոքր ինչ ուսեալ վստահանում է անունը վարժապետ կոչել և աշակերտներ պահել։

Բան տարիից աւելի պարապելով դաստիարակութեամբ հայազգի և օտարազգի մանկանց, ես փորձով տեսի վերոյիշեալ ուսուցչական ձևերուն (Մեթոդ) և կրթութեան հետևանքը. միշտ տեսել եմ աշակերտի իւր մանկութեան ժամանակից ստացած կրթութեան աղդեցութիւնները և այն կրթութիւնից ծագեալ զանազանութիւնը թէ՝ վարուց և թէ՝ յառաջադիմութեան և աշխատասիրութեան մէջ. վասն այսորիկ ես միշտ լսել եմ շատ երևելի ուսումնականներից և ինքս էլ միշտ դատել եմ, թէ ամենից աւելի հարկաւոր է մեր ազգին բարեկրթութիւնը այնպէս, որ առաջին պարտաւորութիւն դրվի ծնողաց և վարժապետաց վրա միշտ խօսել և ուսուցանել մանկանց բարեկեցութեան կանոնները։

Բայց այսպիսի բարձր առարկայի վրա ընդարձակ և կանոնաւոր դատողութիւն անել և գիրը յօրինել երևելի հեղինակաց և բաղմագէտ անձանց գործ է. վասն որոյ և ես չեմ համարձակվում ձեռնամուխ լինել այսպիսի առարկայի, այլ միայն ցանկալով, աւետարանի մէջ յիշեալ այրի կնոջ նման, իմ նաբարակիտը բերել ընծայ ազգասիրութեան սեղանի վրա, ես վստահացայ։ Հետևելով օտարազգի երևելի դաստիարակաց գրաւոր շաւղաց, 'ի լոյս ընծայել այս փոքրիկ ընթերցանութեան տետրակս Պարզգ Մանուկաց ան-

նուանեալ, միայն այնու նպատակաւ, որ անչափահաս աշակերտները կարդան այբուբենարանից յետոյ։ Այսն որոյ հայելով այն վերոյիշեալ երկու պակասութիւններին, որք թոգաւորեալ են մեր տներումը և ուսումնարաններումը, ես ջանացայ այս գրքի մէջ որքան կարելին էր միաւորել երկու նպատակը, և ենդուր համար նախ՝ այս գիրքը գրեցի պորդ աշխարհաբառ ռուսատանի կողմերումը ընակուած Հայոց գոլծածական լեզուաւ, (որ, կարծեմ, բաւական հասկանալի է այլ կողմերի Հայոց համար ևս), որ մանուկը կարողանայ հասկանալ կարդացածը և հասկանալով ստանալ օգուտ։ Երկրորդ հաւաքեցի սրա մէջ միայն այնպիսի բաներ, որոնք հեշտ իմանալի են մանկանց համար և գիւրաւ մտքին պահելու։ Երրորդ՝ գրքիս սկզբումը դրեցի, իբրու թէ բարեկիրթ սղայի բերնից, բարեկցութեան կանոնները, ցուցանելով թէ՝ Ի՞նչպէս պէտք է որդին կամ աշակերտը վարվի առաւօտուանից մինչև գիշեր տան մէջ, ուսումնարանի մէջ, եկեղեցումը, հրապարակումը, փողոցումը, ծանօթ մարդկանց հետ, ծնողաց հետ, եղբօրների և քուրերի հետ, աշակերտների, դրացիների, իրանից մեծերի և փոքրերի հետ, և այլն. թէ Ի՞նչպէս պէտք է լինի նա Աստուածասէր և Աստուածավախ, ընկերասէր և համեստ, երախագէտ և խոնարհ, հայրենասէր, քաղաքավար և աշխատասէր։ Եւ չորրորդ՝ այս կանոններից յետոյ ժողովեցի զանազան դիտելիաց տեղեկութիւններ, որ կարդալու յետոյ 'ի միասին ճանաչեն և դիտենան այն առարկաները, որ միշտ տեսնում են կամ լսում են, կամ կարողեն հեշտ հասկանալ, և 'ի վերջոյ թարգմանեցի զանազան մանր պատմութիւններ, որ մանկունք զուարճանալով կարդան և ուսանին և ուսանելով զուարճանան, և տեսնելով զանազան օրինակներ լաւ և վատ մանկանց, լաւերին հետևին և վատերից հեռանան։) Ահա սրանք են իմ աշխատանաց պտուղները, յորոց ցանկամ, որ մեր մանկունքը քաղեն արդիւնաւոր օգուտներ։

Բայց որովհետև այս ևս շատ անգամ փորձուած է, որ երբ աշակերտը աւարտում է քերականութեան առաջին մասը և ուսուցիչը պարտաւորում է նրան յօրինել մանր շարադրութիւններ, աշակերտը չունենալով տեղեկութիւն

ՀԻՆԱԿԱՅ առարկաներին վրա և կարդացած լինելով միայն դժուարիմաց գրքեր, չէ՛ ունենում հաւաքած իւր մտաց մէջ այնպիսի իրա համար հեշտ իմանալի առարկաների վրա տեղեկութիւններ, որ կարողանայ նրանց վերայ բան գրել. Էնդուր համար այս գրքին երկրորդական օգուտն այն է, որ աշակերտը մանկութիւնից կսրդալով զայս, հաւաքած կունենայ իւր մտաց մէջ զանազան առարկաների վրա շատ հեշտ իմանալի տեղեկութիւններ և նրանց վրա դիւրաւ կարող է գրել զանազան տեսակ դատողութիւններ, և կամ կարդալով երկրորդ մասի մէջ զանազան մանկական պատմութիւններ, կարող է փոխել նրանց աշխարհաբառից գրաբառ լեզու, կամ թարգմանել հայերէնից յոտար լեզու։

Ուրիշ օգուտներին վրա խօսիլը աւելորդ եմ համարում. փորձը լինելը ցոյց կըտայ օգուտը իւր ժամանակին, եթէ բարեջան դաստիարակները և ծնողքը ջան դնեն այս հեշտ Հանասարհաւ վարժել իրանց աշակերտներին և որդւոյը, և այն կլինի իմ դուշնաբեայ աշխատանաց վարձը։

Մ. Պապիանեանց։

ՄԱՄՆ ԱՌԱՔԻՆ։

I.

Աղաւօտը, որ զարթում եմ, ես շուտով վերը եմ կենում տեղից, շուտով երեսս լուանում եմ խոտակ։ Երեսս լուանալու ժամանակը քինթս և ականջներս էլ խոտակում եմ և մազերս թրջում եմ։ Այս խակի մէկ ժամանակ տաք ջրով երեսս չեմ լուանում, այլ միշտ սառը ջրով, ենդուր համար որ տաք ջուրը վատ է, այլ սառը ջուրը օգուտ է և զուարթացնող։ Երեսս լուանալուց յետոյ երեսս, ականջներս և ձեռներս խոտակ սրբում եմ, դլուխս սանդրում եմ և շորերս հագնում եմ։ Յետոյ դնում եմ պատկերքի առաջին երեսս խաչ եմ հանում, երեք ծունը եմ դնում և աղօթք եմ անում։ Աղօթքները լինճ սորվեցնում են իմ հայրս կամ իմ վարժապետս։ Աղօթք ասելու ժամանակը ես կանգնում եմ ահիւ և ջերմեռանդութենով. ենդուր համար, որ աղօթք անել նշանակում է Աստուծոյ հետ խօսել։ Երբ որ մարդ Աստուծոյ հետ խօսում է, և նրանից բան է խնդրում, պէտք է ահիւ և երկիւղիւ և մեծ ջերմեռանդութեամբ խնդրէ։ Ուրիշ վատ մանկունք աղօթքի ժամանակը հանկստ և ջերմեռանդ չեն կենում։ Դրդ շատ վատ բան է և Աստուած ենդուր հաճար կ'բարկանայ։ Աղօթքի ժամանակը պէտք է հանդարտ կանգնել, ո՛չ ծիծաղել, ո՛չ շարժիլ և ո՛չ ձեռքով կամ ոտքով խաղալ. պէ՛տք է միայն պատկերքին մտիկ տալ և միտքը Աստուծոյ մօտ ունենալ։ Աղօթքի ժամանակը խընդրում եմ Աստուծուց իմ հօրս և մօրս, եղբայրս, քուրերս և բոլոր մարդկանց համար կեանք, առաջնորդութիւն և բաղդաւորութիւն։

Աղաւօտեան աղօթքից յետոյ դնում եմ իմ հօրս և մօրս ձեռքը խոնարհութիւնով համբուրում եմ և ասում եմ Բարի լոյս։ Յետոյ իմ եղբօրներս և քուրերս երեսները համբուրում եմ և նմանապէս ասում եմ Բարի լոյս։ Մինչև որ լինճ իմ ծնողքս թեյ, (չայ) կամ հաց կամ ուրիշ բան չուտեն, ես չեմ ուզում և հանդարտ նստում եմ և սպասում եմ։ Երբ որ լինճ մէկ

բան տալիս են, ես հանդարտ ուտում եմ կամ խմում եմ, ոչինչ չեմ թափում վրէս կամ նստած տեղս և ուտելու կամ խմելու ժամանակը զգոյշ եմ լինում, որ ոչինչ չկոտրեմ։ Ուտելու կամ խմելու ժամանակը չեմ խաղում։ Երբ որ չսպրծ կամ նախաճաշ ուտում եմ, ես իմ հօրս և իմ մօրս ձեռքը համբուրելով շնորհակալութիւն եմ անում։ Յետոյ եթէ դաս ունեմ, նստում եմ կարդալու, այլ եթէ ուսումնարանի աշակերտ եմ, գնում եմ ուսումնարան։

2.

Ուսումնարան գնալու ժամանակը ես շուտով հագնում եմ իմ գիրքերս, թուղթերս, գրիչս և ուրիշ ինչ որ հարկաւոր է, կապում եմ աղուխս մէջ կամ դնում եմ տոպրակիս մէջ, որ տանելու ժամանակը չկորցնեմ։ Տունից որ դուրս եմ գալիս, առաջ երեսս խաչ եմ հանում, և յետոյ սկսում եմ հանդարտ գնալ։ Ճանապարհին չեմ վազում և ո՛չ ոքի հետ չեմ խաղում։ Ուրիշ վատ տղերքը Ճանապարհին փողոցումը (քուչէքումը) վազում են, խաղ են անում, քար են գցում և ուրիշ անկարգութիւններ են անում։ Երբոյ վրա ամէն պատուելի մարդիքը բարկանում են կամ ծիծաղում են և ամաչեցնում են։ Եթէ նրանք չեն ամաչել, էն ժամանակը իրանց ծնողքը կամ վարժապետը կիմանան կամ կ՚տեսնեն կամ կ՚լսեն և նրանց կ՚պատժեն։ Բա ամաչում եմ ամէն պատուելի մարդից և ուզում եմ որ նրանք ինձ գովեն և սիրեն։ Դուք համար ես պէտք է լաւ կենամ և քուչէքումը և տանը ինձ քաղաքավարութիւնով և պարկեշտ պահեմ, որ ամէնքը ինձ գովեն։ Ճանապարհին եթէ ինձ պատահում են իմ ծնողաց Ճանաչ կամ բարեկամ մարդիք, ես քաղաքավարութիւնով դադար հանում եմ և համեստութիւնով ողջոյն եմ տալիս նրանց։ Եթէ ինձ բան են հարցնում, ես առաջ պէտք է լաւ հասկանամ հարցրածը, յետոյ պատասխան տամ։ Պատասխան տալուց բառերը պարզ պէ՛տք է ասել, որ լսողը լաւ հասկանայ։ Էնպէս էլ կարդալու ժամանակը պէտք է բառերը պարզ և մէկ

մէկ ասել, որ լսողը հասկանայ։ Երբ որ ես խօսում եմ հայերէն, պէտք չէ՝ որ խօսքիս մէջը օտար լեզուի խօսքեր խառնեմ. Էնդուր համար որ խօսած լեզուս խառնած չլինի, այլ խտակ լինի։ Եթէ մէկ բանի անունը չեմ իմանում, պէտք է վարժապետից հարցնեմ և սովրիմ որ լաւ խօսիմ։ Այս փոքրիկ դրքիս մէջ որչափ բառեր կան, թէ՝ գրաբառ և թէ աշխարհաբառ, որոնց նշանակութիւնը չեմ հասկանում, պէտք է վարժապետիս հարցնեմ և լաւ մտքիս պահեմ։ Խոնարհութեամբ կաղաչեմ իմ պատուելի վարժապետիս, որ ինձ ամէն բառերը հասկացնի։ Այս շատ ուրախ եմ, որ սկսեցի կարդալ այս դրը և դեղեցիկ դիրքս։ Արանից ես կ՚սովրեմ լաւ կարդալ, և ուրիշ հարկաւոր բաներ և բոլոր կարդացածս և լսածս միտքս կ՚պահեմ։

3.

Իմ սիրելի հայրս, մայրս և պատուելի վարժապետս ասում են ինձ, որ ես զգուշութիւնով մանդամ և չվազեմ, որ վէր չընկնեմ։ Եթէ նրանց խօսքը չ՚լսեմ և վազեմ, կարելի է, որ վէր ընկնեմ և կամ ոտս կոտրեմ, կամ ձեռս, կամ դլուխս, կամ երեսս ջարդեմ և կամ ինձ ուրիշ վտանգը պատահի։ Նրանք ինձ ասում են, որ ես դանակով կամ չանկալով կամ մկրատով երբէք չխաղամ։ Եթէ նրանց խօսքը չ՚լսեմ, կարելի է, որ դանակով ձեռս կամ ուրիշ տեղս կտրեմ, կամ չանկալով մէկ տեղս ծակեմ, կամ մկրատով մէկ վնաս ստանամ, կամ աչքս հանեմ և կամ ուրիշ վտանգը պատահի։ Այս շատ սիրում եմ իմ հօրս, մօրս և վարժապետիս և միշտ նրանց խօսքը լսում եմ և հնազանդում եմ, որ, ինչ որ նրանք հրամայում են, ամէն բանը կատարում եմ։ Ով որ իրա ծնողաց կամ վարժապետի խօսքին հնազանդ չի լինիլ, նա շատ վատ տղայ կ՚լինի և նրան Աստուած չի սիրիլ և կ՚պատժէ։ Այս միշտ պատիւ եմ տալիս իմ ծնողաց և իմ վարժապետիս։ Ինչպէս էլ պատիւ եմ տալիս ամէն մարդու, ով որ ինձանից մեծ է։ Իմ պատվական հայրս ամէն առաւօտ գնում է իրա դործին, աշ-

խատուտ է, որ փող ստանայ և իրա տան հոգսը քաշէ։ Այս անհոգ գնում եմ ուսումնարան, որ բան սովորեմ։ Իմ հայրս իմ սպրուսախս և իմ հաղնելու հոգսն է քաշում։ Այս պէ՛տք է շատ շնորհակալ լինիմ նրանից։ Այրը որ հայրս տուն է դալի, ես ուրախութիւնով գնում եմ առաջ, ձեռքը համբուրում եմ և իմ սովրած բաները պատմում եմ։ Այս շատ ուրախանում է, գովում է ինձ և միշտ ասում է՝ ԱՄՊԷ ԲԱՆԸ ՅԵՏՔԻՑԷ ԿՈՐՈՂ Է ՊՆԱԼ, ՈՐՈՄԷ ԵՐԵՔԷ ԲԵԼՈՆԻՑ ԱՀ ԱԼ ՉԷ ԿՈՐՈՂ ԻՆԼԷԼ։

4։

Պատուհանի (ակոշկի) մօտ կամ հայելի մօտ և կամ ուրիշ շուշեղէն բաների մօտ ես չեմ խաղում, էնդուր համար որ խաղալու ժամանակ կարելի է որ մէկ բան կոտրեմ և կոտրելու համար իմ ծնողքս կամ վարժապետս բարկանան և ինձ պատժեն։ Պատերի վրա ես դիմ կամ խաղ չեմ քաշում, էնդուր համար, որ եթէ խաղ քաշեմ, պատը խարաբ կլինի և իմ ծնողքս կամ վարժապետս կ՚բարկանան, էնդուր համար որ նրանք կամենում են որ տան ամէն տեղը խստակ լինի։ Այս չեմ կարող էն բանը անել, ինչ որ իմ հայրս կամ մայրս կամ վարժապետս ինձ չեն հրամայում, և եթէ նրանց խօսքից ես դուրս գամ կամ նրանց հրամանքը չկատարեմ, էն ժամանակը ես կլինեմ անհնազանդ որդի։ և էդ շատ վատ կլինի ինձ համար, էնդուր որ Աստուած ինձ կպատժի։ Աստուած հրամայել է որ որդին իրա հօրը և մօրը պատիւ տայ, և ասել է եթէ որդին իրա հօրը և մօրը պատիւ կտայ, շատ կ՚տպի և բախտաւոր կլինի։ Իսկ եթէ որդին իրա ծնողքին անհնազանդ կլինի, Աստուած ասել է, թէ անհնազանդ զաւակը կլկտրէ։ Իմ հնազանդութիւնը էն կլինի, երբ որ ես նրանց խօսքը կլսեմ և նրանց հրամանքը հնազանդութեանով կկատարեմ, և միշտ պատիւ կտամ։ Իմ ծնողքս և իմ վարժապետս ինձ միշտ հրամայում են շորերս, երեսս, դլուխս և ձեռերս խստակ պահել, և իմ սիրելի մայրս ամէն առաւօտ տունը սրբել է տալի և ամէն բանը կարգով իրանց տեղն է դարսում։ Այս էլ պէ՛տք է

ամէն բանը կարգով պահեմ և իրա տեղեցը վեր չառնեմ, և ուրիշ տեղ չթողնեմ, այլ եթէ մէկ բան վեր առնեմ, կրկին պէտք է իրա տեղը դնեմ։ Որ շորերս երբոր հագնեմ, պէտք է խատակ պահեմ, կեղտոտ ձեռերս վրէս չքսեմ և հողի վրա կամ ուրիշ կեղտոտ տեղ չնստեմ։ Երբ որ նոր շորերս հանեմ, պէտք է ծալեմ և իրա տեղը դնեմ կարգով։ Ինչպէս էլ ամէնօրվայ շորերս պէտք է խատակ պահեմ և գիշերը հանելուց պէտք է մէկ տեղ հաւաքեմ, որ առաւօտը կարգով հագնեմ։ Ինչպէս շորերս, երեսս, գլուխս, ձեռերս, ենպէս էլ դրբերս, թուղթերս և ուրիշ բաներս պէտք է խատակ պահեմ։

5.

Երբ որ հանում եմ ուսումնարան, հանդարտ և համեստութեամբ մտնում եմ ներս։ Եթէ վարժապետն էն տեղ է լինում, ես խոնարհութեամբ գլուխ եմ տալիս և գնում եմ իմ տեղը։ Կարդալու ժամանակը պէտք չէ որ գիրքը շատ մօտ բռնեմ աչքերիս, որ աչքիս վնաս լինի. ամէն բանից աւելի ես պէտք է պահպանեմ աչքերս, որ չքօռանամ։ Կոյրը (քօռ մարդը,) չէ կարող տեսնել երկնքի դեղեցիկ աստղերը, ծիածանը (կամանչ կարմիր, ծիրանի գոյնն), այդիկ (բաղչ) դեղեցիկ ծաղիկները, թռչուններին դեղեցիկ վերաբերները, և ուրիշ լաւ լաւ բաները, որ մենք տեսնում ենք և զուարճանում ենք (սիրտներս բացվում է։ Ընշակերտների հետ ես խօսում եմ քաղաքավարութեամբ. նրանց հետ երբեք կռիվ չեմ անում և ամենեին ոչվի յիշոց (ուշունց) չեմ տալիս։ Ով որ յիշոց կտայ, նա լաւ տղայ չէ։ Լաւ տղան պէտք է բերանից վատ խօսք չհանի, և ով որ վատ խօսք ասի, նրա վրա Աստուած էլ կբարկանայ և ամէն մարդ էլ կնախանձի և ո՛չ ոք չի սիրիլ նրան։ Ես երբեք սուտ չեմ խօսում։ Սուտ խօսելը մեղք է և շատ վատ սովորութիւն կդառնայ։ Սուտ խօսողին ո՛չ ոք չի սիրիլ։ Երբ որ ինձանից իմ ծնողքս կամ վարժապետս մէկ բան հարցնում են, ես պէտք է ճշմարիտը ասեմ։ Եթէ ես մէկ վատ

բան եմ ասել, չէ՛ պէտք սուտ ասեմ և խաբեմ։ Հնդուք Համար որ իմ սուտ խօսելուն ես պատիժս կաւելայնեմ։ Իսկ եթէ Աշմարիտ ասեմ և ներողութիւն խնդրեմ, ինձ կներեն և ես կիօստանամ միւսանդամ չանել, և պէտք է կրկին չանեմ էն վատ բանը։ Իսկ եթէ միւսանդամ ասեմ, էն ժամանակը էլ իմ խօստանալուն չեն հաւատալ և ինձ շատ կպատժեն։ Ամենապէս մեղք է երդուելը (երդում անել)։ Հնդուք որ Աստուած չէ հրամայել։

6.

Ինչ դատ որ ինձ վարժապետս տալիս է, ես պէտք է առաջ լաւ հասկանամ, մէկ քանի անգամ միտք անելով կարդամ, և եթէ հրամայած է անդիր սերտել, պէտք է լաւ անսխալ սերտեմ։ Դատս սերտելու կամ գիրը կարդալու ժամանակը ես պէտք է բոլոր միտքս հաւաքեմ կարդացած բանի վրա, և ուրիշ բաների վրա միտք չանեմ. եթէ միտքս ուրիշ բաների վրա տանեմ, չեմ կարող շուտով հասկանալ և սերտել և հնդուք համար վարժապետս կբարկանայ։ Կարդալու կամ դաս սերտելու ժամանակը ես պէտք չէ ձեռքով կամ ոտքով խաղամ, և գիրքս պէտք է լաւ պահեմ, որ չի կեղտոտվի. այլ պէտք է հանդարտ կանդնեմ կամ նստեմ և մտադրութեամբ կարդամ։ Կարդալու ժամանակը պէ՛տք չէ ուրիշ բաներու վրա միտք անեմ, այլ միայն իմ գրքիս վրա։ Վարժապետիս և ամէն պատուաւոր մարդկանց հետ խօսելու ժամանակը ես նստած չեմ խօսում, այլ ոտքի վրա եմ կանգնում։ Հնդուք համար որ նստած խօսելը անքաղաքավարութիւն է։ Եթէ ես դաս լաւ չսերտեմ, վարժապետս կ՛բարկանայ և ինձ կ՛պատժի, և ես էլ բան չեմ ասվիլ և իմ անունս կասեն ծոյլ (թամբալ)։ Ծոյլ տղերքին ո՛չ ոք չէ սիրում և նրանք ոչ ինչ չեն սովորում։ Ես ուզում եմ աշխատասէր լինիմ, որ բան սովրիմ, և լաւ գիտուն մարդ դառնամ։ Էն ժամանակը ինձ ամէն մարդ կսիրի, իմ ծնողքս ինձ՝ համար լաւ շորեր կը-

կարեն և ինձ պարգևները կտան և վարժապետս միշտ կգովի։ Դասից յետոյ երբ որ հրաման կուտան խաղալու, ես պետք է հանդարտութեամբ խաղամ։ Իմ ընկերները միջից ես պետք է հնազանդ տղերքի հետ խօսիմ և խաղամ, որոնք բերանից վատ խօսքեր չեն հանում, և միշտ պարկեշտ են. իսկ հնազանդ տղերքի հետ, որք վատ խօսքեր են խօսում կամ չարութիւն են անում, ես չեմ խաղալ և չեմ խօսիլ. հնդուր համար որ վատ ընկերից ես էլ վատ բաներ կսովորիմ և ինքս էլ վատ կլինիմ։ Այս չեմ ուզում վատ աշակերտ լինել, այլ միշտ հետևում եմ լաւ, խելօք, հնազանդ և ուսումնասէր աշակերտ լինել, որ աչքերը ինձ սիրեն և գովեն։

Հ.Ս.Խ.Հ. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Publicaya Biblioteka
7/XI. 1922

Երբ որ ուսումնասանից աշակերտները գնում են հաւաքում իմ գրքերս, թուղթերս և եղբայրներս և կապում աղլուխս մէջ, որ չկորցնեմ ճանապարհին։

Յետոյ պետք է խոնարհութեամբ գլուխս տամ վարժապետիս և գնամ տուն։ Ճանապարհումը պետք է հանդարտ և պարկեշտ գնամ, ինչպես որ վերը գրած էր։ Երբ որ հասնեմ տուն, պետք է հօրս և մօրս ձեռքը համբուրեմ։ յետոյ գրքերս պահեմ իրանց տեղը և դէ թէ ուրիշ վատ տղերքի նման վեր գձեմ ինչ տեղ հասնի։ Եթէ կարգով իրանց տեղը չպահեմ, գրքերը խառնուր կլինին, կ'պատռուին և կրկորցնին։ Եթէ ես գրքերս կեղտոտեմ կամ կորցնեմ իմ ծնողքս և վարժապետս կբարկանան։ Այս չեմ ուզում, որ նրանք ինձ վերայ բարկանան։ Տանը ես պետք է խաղամ շատ հանգստութիւնով և պարկեշտութիւնով։ Քուչերումը խաղալը ամօթ է. ես կարող եմ խաղալ տան մէջ կամ մեր բակումը։ Ես պետք է խաղամ իմ եղբարցս կամ քուրերքս հետ։ Ես իմ եղբարցս և քուրերքս շատ սիրում եմ։ Երբեք նրանց հետ կռիվ չեմ անում, ինչ որ ունենում եմ միասակ չեմ ուտում, այլ նրանց հետ բաժանում եմ։ Եթէ ես իմ եղբարներս և քուրերքս չսիրեմ, ինձ էլ իմ ծնողքս չեն

սիրել և ես վատ տղայ կլինիմ։ Եթէ ես իմ եղբարցս կամ քուրերիս հետ կռվեմ և կամ նրանց ծեծեմ, Աստուած լինէ վրա կբարկանայ։ Ես նրանց պէ՛տք է շատ սիրեմ, ինդուր համար, որ նրանք լմն են, մէկ մօրից ենք ծնած և աշխարհքումը նրանցից աւելի մօտիկ ո՛չ ոք չունիմ։ Ինչպէս տանը, ինպէս էլ ամէն տեղ և ամէնքի հետ ես պէտք է սիրով կենամ, որ Աստուած լինէ սիրի և խելօք մարդիկ դառնն։ Եթէ դրացիների երեխաները լաւ տղերք են և վատ խօսքեր չեն խօսում, կարող եմ նրանց հետ էլ խաղալ. բայց ծառաների հետ երբէք չեմ խաղալ։ Խաղաղուս ժամանակը պէ՛տք չէ բարձր ձայնով կանչեմ և գոռամ, կամ անկարգ վազեմ և շրջերս պատռտեմ և կեղտոտեմ. այլ պէ՛տք է այնպիսի խաղ խաղամ որ ոչինչ վնաս չբերի լինէ կամ ուրիշին։

Ես գիտեմ որ փողով խաղալը շատ վատ բան է և իմ հայրս էդուր շատ սաստիկ արգելել է լինէ։ Մանաւանդ չէ պէտք որ քար գցեմ կամ փայտով խաղամ։ Ինդուր համար որ քարով կամ փայտով կարելի է որ մէկին վնաս հասնի կամ բան կոտրվի։ Ես պէտք է ինպիսի խաղ խաղամ, ինչ որ հրաման տան լինէ իմ ծնողքս կամ վարժապետս։ Մէկ երկու սհաթ խաղալուց յետոյ պէ՛տք է նստեմ և միտքս հաւաքած դասերս սերտեմ, որ վարժապետիս մօտ գնամ։ Եթէ դասերս չսերտեմ տանը, ուսումնարանումը վարժապետս կ՚բարկանայ։

8.

Երբ որ Ճաշն սեղանը պատրաստ լինի և լինէ կանչեն հոյ ուտելու, ես առաջ պէտք է երեսս խաչ հանեմ յանուն Հր սուրբ սուրբ և յետոյ նստեմ։ Սեղանի վրա շատ բաներ կանգ, որ ես դիտեմ անունները և Եթէ ինչի համար են գործածվում։ Գդալը, դանակը, չանկալը (պատառաքաղ) դրած են, որ ձեռով չկտրեմ և չուտեմ կերակուրները։ Ղ ենջակը, (սալֆետը), դրած է որ բերանս սրբեմ և ուտելու ժամանակը, ծնկանս վրա դնեմ։ Աղամանը դրած է, որ եթէ կերակուրս մէջն աղը պակաս լինի, դանակի ծայրով վերը առնեմ փոքր աղ և կն

բակուրիս մէջ խառնեմ։ Սաւանը (բաժակը) դրած է, որ նրա մէջ լինէ հատնը ջուր կամ փոքր գինի ածեմ և նրանով խմեմ։ Այս սեղանի վրա Հաշի ժամանակը նստում եմ հանդարտ, ուղիղ և առանց խօսելոյ։ Մինչև լինէ մօտ չէն բերում կերակուրը, ես ուրիշ վատ տղերքի նման չեմ ուղում։ Երբ որ բերում են, ես պարկեշտութեանով վերը եմ առնում և փոքր լինչ ածում եմ իմ առաջիս դրած ամանի մէջ։ Եթէ շատ վերը առնեմ և չկարանամ ուտելու, ամօթ է։ Շատ վերը առնել նշանակում է ագահութիւն։ Այս էնքան պէ՛տք է ուտեմ, ինչքան լինէ տան իմ ծնողքը կամ լինէանից մեծերը։ Եթէ սեղանի վրա լինէ բան են հարցնում, ես համեստ և պարկեշտ պատասխան եմ տալիս։ Բայց երբ որ մեծերը խօսում են, ես հանդարտ նստած լսում եմ և ինքս չեմ խօսում մինչև որ լինէ բան հարցնեն։ Սեղանի վրա պէտք է զգուշութիւնով ուտել և խմել չամչաւոր, որ չլինի թէ կերակուրը թափեմ սեղանի ծածկոցի (սուփրայի) վրա, կամ սեղանի վրայից գդալը կամ չանակալը կամ դանակը և կամ ուրիշ բան վերը գցեմ։ Ուտելու ժամանակը պէտք է զգոյշ լինիմ, որ կերակուրը վրաս չթափեմ և շորերս չկեղտոտեմ։ Պէտք է հանդարտ ուտեմ և խմեմ առանց շտապելոյ և ագահութիւնի, բայց էնպէս որ ուրիշները լինէ չսպասեն։ Երբ որ սեղանից վեր կենամ ես պէտք է երեսս խաչհանեմ յանուն հօր ասելով և յիսոյ հօրս և մօրս ձեռքը համբուրեմ, շնորհակալութիւն անեմ, եթէ մեր տանն եմ։ Իսկ եթէ ուրիշի տանն եմ հրաւիրած, պէ՛տք է սեղանից վեր կենալուց և երեսս խաչ հանելուց յետոյ, տան տիկնոջ և տան տիրոջ ձեռքը համբուրեմ և մնացեալին գլուխ տամ։

9.

Լինէանից մեծերի և պատուելի մարդկանց յետ խօսելու ժամանակը ես պէ՛տք է շատ քաղաքավարութեամբ խօսեմ։ Եթէ իմ անունս տան, ես պէ՛տք է ասեմ հրամանք կամ ԲԱՆԷՔ հրամայուամ։ Հոգ պէտք ասեմ հա՛, այլ պէ՛տք է ասեմ հրամանքդ, էֆ՛ պէտք ասեմ էֆ՛, այլ պէտք է ասեմ ա՛յ,

չէ պէտք է ասեմ գոռ , այլ գոռալ։ Այս պէտք է մարդիկ անեմ, թէ պատուելն և քաղաքավար մարդիկը ինչպէս են խօսում, նստում և մանդալես, և աշխատեմ նրանց նմանել։ Երբ որ մէկի տուն գնամ, պէտք է քաղաքավարութեամբ գլուխ տամ տանտերներին և միւս հիւրերին (ղօնաղներին)։ Ուրիշն տանը եթէ հնդէս բան տեսնեմ, որ մեր տանը չկայ, պէտք չէ՝ որ շատ զարմանամ և կամ ինդրեմ, որ ինձ տան, այլ պէտք է միայն մարդիկ անեմ և կամ զոլեմ։ Եթէ ինձ բան ընծայեն, ես պէտք է շնորհակալութիւնով վեր առնեմ և տվողն ձեռքը համբուրեմ։ Բայց ամէն բանը ես վեր առնել չեմ կարող, մինչև որ իմ հայրս կամ մայրս չհրամայէ։ Էն ամենքին չեմ կարող ոչ մեր տանը և ոչ ուրիշն տանը թաքուն կամ առանց հրամանի ուրիշն բանը վեր առնեմ։ Եթէ որ ուրիշն բանը առանց հրամանի կամ թաքուն վեր առնի, նա գող է։ Գողը անունը շատ վատ անուն է. և Աստուած գողին չի սիրիլ և կրպատժի։ Գողին ամէն մարդ էլ չի սիրիլ և ես տեսել եմ, ինչպէս գողերին ձեռները և ոտները կապած տանում էին պատժելու։

10.

Այս պէտք է կիրակի օրը և ամենայն մեծ տօնների օրերը գնամ եկեղեցի աղօթք անելու։ Եկեղեցին հասարակ տեղ չէ, այլ Աստուծոյ տունն է. ենդուր համար, պէտք է եկեղեցի մտնել մեծ ահիւ և պարկեշտութեամբ։ Երբ որ եկեղեցիի դրանը մօտենամ, պէտք է զգակս հանեմ և հանդարտ մտնեմ երեսս խաչ հանելով։ Երբ որ հասնեմ իմ կանդնելու տեղս, պէտք է առաջ երեքը անգամ երեսս խաչ հանեմ յանուն Հօր ասելով և երեքը ծունը դնեմ։ յետոյ պէտք է կանդնեմ և հանդարտ ցած ձայնով իմ աղօթքներս ասեմ։ Եկեղեցումը պէտք է կանդնել հանգիստ, պարկեշտ և մեծ երկիւղով։ Պէտք չէ՝ այս կողմը այն կողմը մտիկ անել ժողովուրդին, ո՛չ խօսիլ, ո՛չ ծիծաղել և ո՛չ մանդալ։ Երբ որ տէրտէրները երգում են, պէտք է ես էլ երգեմ։ Մինչ որ եկեղեցումը կարդում են և երգում են ես պէտք է ականջ դնեմ, և եթէ դիր-

տեղնամ, ինքս էլ ցած ձայնով նրանց հետ հանդարտ ու
սեմ։ բայց իմ ձայնս պէտք է էնպէս հանեմ, որ միայն
ինքս լսեմ։ Այս տեսել եմ որ ուրիշ վատ տղերքը եկեղե-
ցումը խօսում են, ծիծաղում են, խաղում են, վազում
են և ուրիշ շատ անկարգ բաներ են անում։ Դէ շատ
վատ բան է. Աստուած էդպէս վերայ կ'բարկանայ։ Տէր-
տէրները էնպէսի տղերքին եկեղեցիից դուրս կանեն, և
նրանց ծնողքը նրանց կ'պատժեն։ Իմ որ եկեղեցումը հա-
մեստ չի կանգնել և աղօթք չի անել, նա լաւ տղայ չի
դառնալ և Աստուած նրան չի սիրիլ։ Երբ որ ժամեր-
գութիւնը կավարտվի, ես պէտք է երթեք ծունը դնեմ
և համբուրեմ սուրբ խաչը կամ սուրբ աւետարանը և
կամ սուրբ պատկերները, և հանդարտ, համեստ դուրս
գամ եկեղեցիից և գնամ տուն։ Ճանապարհումը, եթէ
ճանաչ մարդ պատահի, պէտք է ասեմ ողորմի Աստուած.
իսկ եթէ ինձ ասեն այդ բանը, ես պէտք է պատասխան
տամ՝ ողորմի՛ ծնողայդ։ Էմանապէս պէտք է ասեմ, երբ
որ տուն մտնեմ։

II։

Ինչ կարգ որ սովորեցայ այս գրքից առաւօտեան չայի
ի. Հաշի ժամանակի համար, էն կարգն էլ պէտք է պա-
հեմ երեկոյեան չայի և իրիկնահացի ժամանակը։ Երբ
որ իմ քնելու ժամանակը դայ, պէտք է առաւօտվայ
նման գնամ պատկերքի առաջին երեք անգամ երեսս
խաչ հանեմ յանուն Հօր ասելով և երեք ծունը դնեմ,
և աղօթքներս ասեմ։ Աւաւօտեան աղօթքի ժամանակը
պէտք է Աստուծուց շնորհակալ լինիմ, որ նա ինձ և
իմ ծնողացը, եղբայրը և քուրերքս առողջ պարթեցրուց
և պրժանի արաւ այս օրին, և խնդրեմ, որ այն բոլոր
օրը և միշտ պահի ինձ իրա ողորմութիւնով և իրա շնորհքը
ինձ պարգևի։ Իսկ գիշերը պէտք է շնորհակալ լինիմ
Աստուծուց, որ նա ինձ, իմ ծնողացը, եղբայրց և քու-
երքս առողջութիւնով պահեց բոլոր այն օրը, և հայց-
նուց գիշերին։ Էմանապէս պէտք է խնդրեմ, որ այն
գիշերն էլ պահի մեզ առողջութեամբ և պրժանի անի

առաւօտեան։ Աղօթքից յետոյ ես պէտք է խոնարհութեամբ հօրս և մօրս ձեռքը համբուրեմ և ասեմ նրանց Բարի գիշեր։ յետոյ պէտք է շորերս հանեմ և մի տեղ կարգով դնեմ, որ առաւօտը առանց դժվարութեան դնեմ, և ապա պառկեմ քնելու։

12.

Աստուած դիտեմ, որ լինած ստեղծել է Աստուած։ Աստուած ստեղծել է այս բոլոր աշխարհը և նա է այս ամենայն բանի տէրը և պահողը։

Առանց Աստուծոյ կամքին ոչինչ չի լինիլ, մինչև ծառի տերևն էլ չի շարժիլ։ Այս շատ հեարհակալ եմ Աստուծուց, որ նա լինած ստեղծել է և պահում է։ Մանաւանդ հեարհակալ եմ իմ հօրից և մօրից, որ նրանք լինած ծնել են և իմ մանկութեան ժամանակս պահել են և մեծացրել են և մինչև էս օր էլ պահում են, կերակրում են և հագցնում են։ Նրանք լինած համար շատ նեղութիւններ են քաշել և միշտ էլ քաշում են։ Իմ հիւանդութեան ժամանակը նրանք շատ դիշեր անքուն են մնացել, լինած համար ժիշկ են բերել, դեղեր են առել, և ինչքան ես ցաւից նեղացել եմ, նրանց սիրտը իմ ցաւից աւելի լինած համար ցաւել է։ Այս պարտական եմ իմ ծնողացը շատ պատիւ տալ, հնազանդ լինել, նրանց խօսքից դուրս չգալ։ Ով որ իրա ծնողաց երախտիքը, աշխատանքը և բարերարութիւնը կմոռանայ, նրան Աստուած չի սիրիլ և բախտաւորութիւն չի տալ։ Մանաւանդ պարտաւոր եմ հեարհակալ լինիլ իմ վարժապետներից և նրանց պատիւ տալ, որ նրանք լինած լաւ բաներ են սովրեցնում։ Մանաւանդ էլ պէտք է պատիւ տամ ամեն պատուաւոր և ծեր մարդկանց։ Այսքան ես մեծանամ և իմ ծնողքս ծերանան, ես պէտք է նրանց աւելի պատաւեմ և նրանց իմ աշխատանքով պահեմ և նրանց ծերութեան ժամանակը իմ հնազանդութիւնով քաղցրացնեմ։ Իսկ եթէ նրանց մի կերպով կնեղացնեմ և նրանց սիրտը կդատեցնեմ, Աստուած լինած վրա կրքերանց և լինած կպատժէ։ Այս խոսքի մի ժամանակ չի

պէտք մոռանամ իմ հօր և մօր աշխատանքը և նրանց երախտիքը։ Երբ որ նրանք մեռնեն, ես պէ՛տք է նրանց հոգւոյ համար աղօթք անեմ և ինդրով իմ որդիական պարտաւորութիւններս հատուցանեմ։ Մանաւանդ պէ՛տք է իմ հօր և մօր անունը պատուով և յարգանօք յիշեմ և իմ բարի վարքով հետևիմ որ նրանց անունին պակասութիւն չ ելնեմ, այլ նրանց անունը պատուով պահեմ։ (*)

5
30

13.

Մեր տան մէջ և ուրիշ տեղերքումը ես շատ բաներ եմ տեսնում, և լսում, և ամէն տեսած և լսած բաներս ուզում եմ իմանալ, թէ անունը ի՞նչ է, ինչի՞ համար է և ի՞նչպէս է շինած և կամ ի՞նչպէս պէտք է դործածուի։ Պարզը կարմիր է, խոտը կանանչ է։ Երբ որ աբեղակը ծաղում է, լուսանում է և մենք ամենայն բաներ լաւ տեսնում ենք։ Ռուսիակը գիշերը լոյս է տալիս։ Յամսոյցը (սհաթը) խփում է մէկ, երկու, երեք մինչև 12։ Տանձը և կեռասը լաւ համ ունեն։ Հասած խնձորը թթու է. ամէն ուտելու բաներ ուրիշ ուրիշ համեր ունին։ Հիւանդ մարդը կերած բաների համը չէ իմանում։ Ես դեռ ես մանուկ եմ։ Մանկունք շատ բան չեն իմանում և ինդրում համար մանկանց ուսումն են տալիս, որ սովրեն, և մանկունքը պէ՛տք է ուսում առնեն։ Ինձ ուսում են տալիս ուսումնարանումը. և քանի որ ես ուսում եմ առնում, ես աշակերտ եմ։ Լաւ աշակերտը լաւ կլինի և ակամէ կդնի միայն էն բաներին, ինչ որ ուսուցիչը ասում է։ Լաւ աշակերտը պէտք է միտք անի էն բաների վերայ, ինչ որ պէտք է անի, հաճանայ և մաքին պահի։ Լաւ աշակերտը յօժարութեամբ է գնում ուսումնարան, միշտ աշխատասէր է, կարգին է, խատակ, պարկեշտ և խաղաղասէր. նա իսկի մին ժամանակ ուշ չէ գնում ուսումնարան, անկարգութիւն չէ

(*) Շատ օգտաւէտ դլխնի ելնէ վերոյ գրեալ բարեկենցաղութեան կանոնները աշակերտ ի մանկութեան սերտէն 'ի բերան, խոկ ծնողք. ի վարժարանս ղանոպան դերպի- մեղնեն հարկաւոր գիտել նրա։

անում՝ ուսումնասիրելից դուրս գալու ժամանակը, և առանց բանի փողոցներումը չի մնա գալի, այլ ուղղակի տուն է գնում։

Այս ուզում եմ լաւ աշակերտ լինել։ Այս գիրքը որ ես կարդում եմ, գրած է իմ ուսման համար։ Ինձ համար շատ օգուտ է, երբ որ ես կարդում եմ միտք անելով և հասկանալով։ Այս կհետևեմ հասկանալ ամէն բանը, ինչ որ կարդամ։ Իսկ եթէ մէկ բան չհասկանամ, կխնդրեմ իմ վարժապետից, որ ինձ հասկացնի։ Այս գիտեմ այս գրքի անունը։ Այս գրած է այս գրքի առաջի երեսին։ Ան երեսումը նմանապէս գրած է, թէ ո՞ր քաղաքումն է տպած սա և ո՞ր թուին։ Իմ գիրքս ունի կազմ։ Ան տունը, որ տեղ գիրքը են տպում, ասում են տպարան։ Այս տեսել եմ շատ ուրիշ տպած գրքեր։ Այս գիտեմ էն գրքի անունը, որ ամենից առաջ սկսեցի կարդալ։— Գիրքը շինողը առաջ գրում է թղթի վերայ, յետոյ տալիս է տպելու։ Մէկ գիրքը որ տպում են, փոքր ժամանակումը շատանում է քանի մի հազարի չափ։

14.

Ամէն գրքի մէջ կան շատ թերթեր։ Կազմարարը կարում է այս թերթերը մէկմէկու հետ, որ նրանք չթափուեն, չկորչեն, կամ չխառնվեն։ Երբ որ ես կմեծանամ, հիմիկվանից աւելի խելօք կլինիմ, եթէ հիմի ծուլութիւն չեմ անել և պարապ չեմ մնացած, այլ կաշխատեմ և ուսում կառնեմ։ Պարապ մարդ երկար ոչինչ չի սովրիլ և ոչ էլ նրան չի սիրիլ։ Ուսումնասիրանումը ես պէտք է սովրեմ մ՛էջ թէ մենակ վարժ կարդալը, այլ և իսկական և պարզ գրելը և շուտով համարելը։ Ով որ լինքը գրել չգիտէ, և ուրիշն գրածը չի կարող կարդալ, նա աշխարհի մէջումը շատ ետ կմնայ ուրիշներից։ Ով որ համարել չգիտէ նրան շատ անդամ խաբում են և նա չի կարող լինքը լրջան պէտքական լինիլ։ Այս շատ կհետևեմ, որ շուտ սովրեմ կարդալ, գրել և համարել։ Այս սովրելիս համարել մէկ, երկու, երեք մինչև հարիւր կամ հազար։

Իմ հայրս կամ վարժապետս ինձ զանազան դրամներ (փողեր) ցոյց են տալիս և հասկացնում են, թէ ամէն մէկը ինչ արժի։ Ինչ բան որ տեսնում եմ, ես ուզում եմ լաւ մտիկ անել և իմանալ. և եթէ չեմ հասկանում, պէտք է հարցնեմ հօրս կամ վարժապետիս, կամ ուրիշ մեծ մարդուց և խնդրեմ որ ինձ հասկացնի։

Երբ որ ես մէկ տարեկան էի, չէի կարանում ո՛չ մանգալ, ո՛չ խօսել և ո՛չ ինչ չէի հասկանում։ Երկու տարեկան ժամանակս ես սովորեցայ խօսել և մանգալ. բայց ամէն բանը չէի հասկանում ինչ որ ինձ ասում էին։ Իմ անունս է —, աղջանունս է —, ես դիտեմ քանի տարեկան եմ։

Ես գիտեմ որ շաբաթը եօթը օր ունի։ Օրերի անուններն էլ գիտեմ. առաջին օրը կիրակի, երկրորդը երկուշաբթի, երրորդը երեքշաբթի, չորրորդը չորեքշաբթի, հինգերորդը հինգշաբթի, վեցերորդը ուրբաթ, և եօթներորդը շաբաթ։ Այս շաբաթը որ անց կենան, կլինի մէկ ամիս։ Ամիսը ունի կամ 30 կամ 31 օր, բայց 'ի մէկ ամսից, որ անունը փեբրվար է։ Ես գիտեմ ամիսը կամ 28 կամ 29 օր ունի։ Ես գիտեմ ամիսների անունները։ 1. յունվար, 2. փեբրվար, 3. մարտ, 4. ապրիլ, 5. մայիս, 6. յունիս, 7. յուլիս, 8. օգոստոս, 9. սեպտեմբեր, 10. հոկտեմբեր, 11. նոյեմբեր, և 12. դեկտեմբեր։ Երբ որ այս տասներկու ամիսները անց կենան, կլինի մէկ տարի։ Տարին ունի 52 շաբաթ կամ 12 ամիս, կամ 365 կամ 366 օր։ Առաջին ամսի (յունվարի) առաջին օրը ասում են նոր տարի։ Այն օրը աղջամանները և բարեկամները մէկ մէկու շնորհաւորում են և ցանկանում են, որ տարին բաղդաւոր լինի։

15.

Դեկտեմբերը, Յունվարը և փեբրվարը ամիսներին շատ ցուրտ է լինում, ձիւն է գալիս և ջուրը սառում է։ Այս ժամանակի անունն է ձմեռ։ Մարտ, Ապրիլ, Մայիս ամիսներին էնքան ցուրտ չէ, սառուցը հալվում է, ձիւնը չէ գալիս. ծառերը ծլում են, ծաղկում են և տերևներ են դուրս տալիս. ծիծեռնակները սկսում են թռչել և բաց-

վում են ծաղիկները։ Այս գեղեցիկ ժամանակի անունն է գարուն։ - Յունիս Յուլիս և Օգոստոս ամիսներին արեգակը այրում է և շոր է լինում, մարդ շոքում է, բայց շոքը հարկաւոր է, հնդուր համար որ շոքը հասացնում է։ Շատ լաւ միրքեր և պտուղներ. զորօրինակ. տանձը, խնձորը, դեղձը, սալորը։ Այս ժամանակի անունն է ամառ. Սեպտեմբեր, Հոկտեմբեր և Նոյեմբեր ամիսներին հով է լինում. հաւաքում են և քաղում են միրքերը բուրաստաններում, այգիներում, (բաղերում) և տափերում։ Այս ժամանակի անունն է աշուն։ Յուլիս և Օգոստոս ամիսներին գեղացիքը հնձում են ցորեն մանդաղով, (գերանդիով,) կապում են խուրցեր և տանում են կալը և հնտեղ կալսում են։ Յետոյ գեղացիքը հանում են գետնի տակիցը գետնախնձոր (կարտոֆիլը), դաղարը, և կտրում են կտղամբը (քալամ, կապուստայ)։ Ինչ որ իրանց համար բաւական է, պահում են ձմեռվայ համար. աւելացածը տանում են քաղաք ծախելու։ Կալսած ցորենը աճում են անբաբը, յետոյ քիչ քիչ հանելով աճում են մեծ տոպրակներին մէջ և տանում են ջաղացքը աղալու համար, որ ալիւր դառնայ։ Ալրեմն տարին չորս եղանակ ունի։ Ի՞նչպէս է նրանց անունները։ Հիմիկ մեզանումը ի՞նչ եղանակ է։ Այրը կիսեր-ջանայ այս եղանակը։ Արանից յետոյ ո՞ր եղանակը կ'գայ։ Ո՞ր եղանակն է ողջից լաւը։

Զմեռայ ժամանակը, թէպէտ և շատ ցուրտ լինի, ես պէտք է սիրով գնամ ուսումնարան։ Իմ պատուելի վարժապետս ասում է, թէ ցուրտը մարդու համար օգուտ է։ Իմաստութիւն և գիտութիւն սիրող տղան ամէն դժուարութիւնները պէտք է յանձն առնի։ Դուրսից որ տուն մտնում պէ՛տք չէ խակոյն գնամ կրակի մօտ կամ վառարանի մօտ (վեչէի մօտ)։ Եթէ գնամ շատ վնաս կլինի։ Գեղացիքը մեզ շատ օգուտ են. եթէ նրանք չաշխատեն և մեզ համար ուտելու բաներ չբերեն, մենք պէ՛տք է լինքներս գնանք վար ու ցանքս անենք, որ մեզ համար շատ դժուար կլինի։ Գեղացիները պահում են և ծախում են հաւ, սագ (խաղ) բադ (օրդեկ,) աղաւնի, գառն, ոչխար, այծ, կով, եզ, ձի, էշ։

16.

Ով որ քաղցած է, ուզում է ուտել։ Ով որ ծարաւ է, ուզում է խմել։ Ո՛վ որ դաղրած է, ուզում է հանդստանալ։ Ով որ բարեսիրտ է, ուզում է ուրիշին օգնել։ Ով որ կամակոր (խրատածի) է, ուզում է ամէն բանը իր կամքով անել։ Ով որ կռվասէր է, չէ սիրում սիրով և խաղաղութիւնով կենալ ուրիշների հետ։ Ով որ խաղաղասէր է, չէ ուզում ուրիշի հետ կռուել։ Ով որ հիւանդ է, ուզում է շուտով առողջանալ։ Շուտով առողջանալու համար պէ՛տք է հիւանդը բժիշկի հրամանները կատարի, և տուած դեղը խմի։ Ով որ ուզում է առողջ լինել, պէտք է չափաւոր ուտի և խմի։ Ով որ ուզում է բան սովրի, պէտք է աշխատասէր լինի և մտքով հասկացող։ Ով որ ուզում է գիշերը լաւ քնել, պէտք է ցերեկը աշխատի և չափաւոր ուտի և խմի։ Ով որ ուզում է որ տանեցիքը իրան սիրեն, պէտք է կսրգին պահի իրան, քաղաքաւոր լինի և խստակ սիրտ ունենայ։ Ով որ ուզում է բան հասկանալ, պէտք է միտք անի։ Ով որ ուզում է որ իրան գովեն, պէտք է իրան խելօք պահի և քաղաքաւոր։ Ով որ ուզում է իրա ծնողացը ուրախացնել, պէ՛տք է ուսումնարանումը աշխատասէր լինի, տանը պարկեշտ և հնազանդ լինի, ուրիշ մարդկանց հետ քաղաքաւոր լինի։ Ով որ ուզում է իրա շորերը երկար ժամանակ հագնել, պէտք է խստակ պահի։ Ով որ շատ գրամ (փող) ունի, կարող է մնալ, բայց պէտք է չափաւոր մնի և մնացածը պահի։ Եթէ ինձ հայրս կամ մայրս փող բաշխեն, ես չեմ խաղջել, և չեմ կորցնել. այլ կպահեմ կամ մօրս կտամ որ պահի ինձ համար։ Եթէ բան ուզենամ առնելու, առաջ հրաման կառնեմ. ենդուր համար, որ ես դեռ մանուկ եմ և բաներին դինը չեմ իմանում։ Եթէ ես առանց հարցնելու առնեմ, ինձ կ'խարեն։ Ով որ ուսումնարանումը աշխատասէր չէ, նա ոչ ինչ չի սովրիլ։ Մեր տանը շատ սենեակներ (օթախներ) կան՝ խահանոց (կուխնայ,) սառնատուն, նկուղ (սարդաբ) և վերնատուն (չերդակ)։ Այս մեր դերդաստանի (ընտանիքի, օջաքաղի) մէկին եմ. հայրս,

մայրս, ես, եղբարքս և քուրերս 'ի միասին եմք մեկ դեր-
դաստան։ Կենալու համար լաւ տուն էն է, որ կուենա-
նայ լոյս, լայն և ցամաք սենեակներ (օթախներ), լաւ
ոանդուխաներ, լաւ, ցամաք խահանոց (կուխնեայ) և
նկուղ (սարդաֆ)։ Այս ամէնը պէտք է դուրսից քամի
անցկենալու տեղեր ունենան։ Մեծ տուներումը լինում
է կենալու տեղ անասուններին համար կամ ձիանոց (թա-
ւելայ)։ Ձիանոցումը վառարան (փեչ) չէ լինում։ Ցմա-
նապէս չէ լինում տեղ, սեղան, պահարան (շկաֆ, դո-
լաբ)։ Բայց մեկ քանի ձիանոցումը ես տեսել եմ անկողնիք
(կոզնիք)։ ոմեմ համար է։

17.

Ես մարդ եմ, ինդուր համար որ կարողանում եմ միտք անել
և հասկանալ և ինչ որ խելքս կտրում է, ինպէս անել։ Կա-
րողանում եմ զգալ, կամիլ, (ուզել) և խօսել։ Անասուններ-
ին էլ կարողանում են զգալ ուրախութիւն և ցաւ։ Շունը
ուրախանում է, երբ որ տեսնում է իրա տիրոջը։ Երբ որ շանը
խփում են, կամ ուրիշ շուն կծում է, նա անիրում է և
բղավում է։ Իմ ուրախութիւնս կամ ցաւս ես կարող
եմ խօսքով յայտնել կամ ասել. անասունը չի կարող
խօսել։ Ես մանն եմ դալի ուղիղ, կարողանում եմ գլուխս
բարձրացնել և ամէն կողմ դարձնել։ Անասուններքը ման
են դալի դլուխը կռացած և չեն կարող երկնքին մտիկ
տալ։ Ես կարող եմ տեսնել, լսել, շօշափել (ձեռս
քսել), համը տեսնել և հոտ քաշել։ Անասուններն էլ
կարող են այդ ամէնը անել։ Քանիք էլ ինչպէս մարդը
ունին հինգ զգայարանք։ Մեկ քանի անասուններ կան
որ մարդից աւելի լաւ տեսնում են և հոտ են առնում։
Ես գիտեմ որ Աստուած ինձ ոտքեր է տուել ման դալու
համար, աչքեր է տուել տեսնելու համար, ականջներ է
տուել լսելու համար, լեզու է տուել համը իմանալու
և խօսելու համար. գիտեմ որ ամէն մարմնովս կարող
եմ շօշափել (քանի դպչել)։ Անասունն էլ թէպէտ այս
ամէնքս անում է, բայց նա չի հասկանում։ Ես կարող
եմ հասկանալ, թէ ինչի համար են պէտք երկաթը,
քարերը, կիրը, փայտը, և ուրիշ բաներքը. բայց անա-

սուններբը չեն կարող հասկանալ։ Այս գիտեմ, թէ ինչի համար տունը ունի դուռներ, պատուհաններ (փէնջերէք) և ծխնալոյզ (բուխեր)։ Ինչի համար վառարանը (փէչը) շինում են կաւից, (ցեխից,) և ո՛չ փայտից։ Ինչի համար պէտք է ծաղիկներին ջուր տալ։ Այս գիտեմ, թէ ինչի իմ կոշիկներս (չէքմէջս) կարած են կաշիից և ոչ փայտից, կամ երկաթից կամ մահուտից. և թէ ինչի՞ համար սայլը պէտք է ունենայ չորս անիւ (ակը)։

Այս հասկանում եմ, թէ ինչի միշտ չեմ կարանում էն անել, ինչ որ ուզում եմ. թէ ինչի՞ համար պէտք է էն անեմ, ինչ որ ուզում են իմ ծնողքս և վարժապետներս։ Այս գիտեմ թէ ինչի համար դուռը բարձր է, տանիքը (կտուրը) տափակ է. թէ ինչի՞ համար վառարանը (փէչը) և բուխը (.բուրայ) շինում են .քարից և ո՛չ փայտից. գիտեմ թէ ինչի համար են .քարով շինում փողոցը (.քուչէրը)։ — Այս տեսնում եմ, որ սեղանը (ստոլը) և աթոռը մէկ մէկու նման են, և գիտեմ, թէ ինչի՞վ են նման։ Տեսնում եմ որ երկուսն էլ շինած են փայտից, երկուսն էլ այրւում են կրակումը, երկուսն էլ ոտքեր ունին։ Բայց ես հասկանում եմ, որ էդ երկուսը մէկմէկու նման չեն. ենդուր համար որ տեսնում եմ ենպէս բան, որ սեղանը ունի, բայց աթոռը չունի, զորօրինակ.....

18.

Պարդը նման է միխակին ենդուր համար որ երկուսն էլ ծաղիկ են, երկուսն էլ լաւ հոտ և լաւ դոյն ունին. երկուսն էլ ունին արմատ, տերև և ոստ (Ճիւղ)։ Երկուսն էլ ծլում են, երկուսն էլ ծաղկում են .քիչ ժամանակումը և յետոյ թառամում են (թափւում են)։ Բայց վարդը զանազանվում է միխակից ենդուրով, որ ուրիշ հոտ ունի։ Պարդը ըստ մեծի մասին մէկ գոյն ունի, թէպէտ և պատահում են վարդեր սպիտակ, կարմիր և դեղին. իսկ միխակը լինում է սպիտակ և նաշխուն։ Պարդի թերթերը լինում են բոլորակ և լայն, իսկ միխակինը նեղ և երկայն։ Պարդը փուշ ունի, իսկ միխակը չունի։ Այս կարացայ համեմատել վարդը միխակի հետ. իսկ անասունը չէր կարող համեմատել և հասկանալ. ենդուր համար որ բանականու-

թիւն չունի։ Աբտերումը բուսնում են ցորեան, բրինձ, գարի, կանեփ, ոսպ, լոբի, սիսեռ, գետնախնձոր (կարտոֆիլ)։ - պարտեղնէրումը դուրս են գալիս տանձ, խնձոր, սալոր, կեռաս, դեղձ, կաղին, մոր և այլն։ Այս ամէն պտուղները կարելի է ուտել, եթէ հասած լինին։ Իսկ կամ չհասած պտուղները կամ մրգեղէնը վնաս են, և շատ մրգեղէն միասին ուտելը կհիւանդացնէ։

Ծառերը ոչ թէ միայն տալիս են մեզ լաւ պտուղներ, այլ և դարձեան ժամանակին ուրախացնում են սպիտակ և կարմիր և կանանչ տերևներով և ծաղկունքներով։ Իսկ ամառվայ շոր օրերին հովացնում են շուքով և ձմեռը տաքացնում են մեզ տալով մեզ վայր։ Ընտառներումը (մշանեռումը) շատ ծառեր կան որ պտուղ չեն տալիս. էն ծառերը կտրում են վառելու համար, կամ սղոցով բարակ բարակ կտրում են տախտակներ են շինում։ Ծառը կանդնած է պինդ և հաստատ. էնդուր համար, որ ունի պինդ արմատներ (տակռի), որը մտնում են խորը երկրի մէջ։ Ծառը և իւր արմատները պատած են հաստ կեղևով (կրՀեպով), որ է երբև հաղուստ ծառի։ Ծառի վրա դուրս են գալիս ոստերը (ճիւղերը), ոստերի վրա տերևները երանց կոթերով։ Գարնան սկզբին ծառի վրա չէ երևում ո՛չ տերև և ո՛չ պտուղ, բայց միայն երևում է ծիլը։ Այս ծլածները փոքր փոքր բացվում են և երանցից դառնում են տերևներ և ծաղկներ. յետոյ ծաղկներից դուրս են գալիս պտուղներ։ Տերևները պարդարում են ծառը և պահպանում են պտուղներին արեգակի այրելից։ Եթէ ծառի տերևները թափուին պտուղների հասնելուց առաջ, էն ժամանակ պտուղները կչորանան։ Եթէ ծառի կեղևը պլոկվի, ծառը կհիւանդանայ և վերջը կմեռնի (ցր կչորանայ)։ Ինդուր համար շատ վատ են անում և մեծ պատիժի արժանի են էն տղայքը, որը պլոկում են կամ քերթում են ծառի կեղևը։ Այս խսկի չեմ պլոկիլ ծառի կեղևը, այլ կուրախանամ մանկ տալով առաջ և ծաղկած ծառի վերայ։ Ցանած բանեին էլ առաջ ծլում են խոտ պէս, յետոյ այս խոտերը բարձրանում են և երանց ղլուխքներին դուրս է գալիս ցորեն, կամ գարի, կամ ուրիշ պտուղ։ Ցանում

են զանազան հունտեր կամ կանանչեղէն, զորբինակ՝ կա-
զամբ (.բալամ՝), աղցան (սալաթայ), սոխ, սխտոր, վա-
ռունդ (խիար), ձմերուկ, սեխ, դդում, կանանչ լոբի, կար-
միր լոբի, բադրիջան, սիսեռ, և այլն։ Պարտիզպանները
շատ աշխատանք ունին պարտիզի մէջ. նրանք ծառերը պահ-
պանում են որդունքից. եթէ թոյլ են, փայտերով հաս-
տատում են. եթէ ճիւղերը պտուղների ծանրութիւնից
կռանում են, տակը փայտ են կանգնեցնում՝ հասած պտուղ-
ները քաղում են, ամենայն օր ջրում են, հողը դրստում
են, սրբում են, և այլն։

10
11

19.

Ամէն անասուններին մէկ տեսակ չէն. շատ մեծ զանա-
զանութիւն կայ շան մէջ և կատուի մէջ, ձնձղուկի (ծտի)
և ձկան մէջ. գորտի և սարդի (բոլի) մէջ։ Շունը ունի
չորս ոտք և իրա լակոտներին ծիծ է տալի։ Ձնձղուկը եր-
կու ոտք ունի, ձու է ածում, և նրա մարմինը ծածկած
է փետուրով։ Ձուկը ո՛չ ոտք ունի և ո՛չ թեւք և մար-
մինը պատած է թեփերով։ Նա չի կարող մեն դալ շան
նման, ո՛չ թռչել ձնձղուկի նման. այլ կարող է լողալ,
այ՝ ջրի մէջ շուտ շուտ փոխել իրա տեղը։ Լողալու ժա-
մանակը նա շարժում է իրա տուտը (պոչը) և լողականերին
փետուրները։ Նա կարող է տպրիլ միայն ջրումը։ Ձկնորս-
ները (ձուկը բռնողները) ուռկանով (թոռով) կամ՝ կար-
թով (ջանկալով,) շատ ձուկեր են բռնում ուտելու կամ
ծախելու համար։ Թէպէտ գորտը չորս ոտք ունի, բայց
ետևի ոտքերը աւելի երկայն են, և նրանցով նա աւելի
լաւ կարողանում է լողալ, քան թէ մեն դալ։ Նա չի
կարողանում մեն դալ, այլ թռչոտում է. նա կարող է
տպրիլ ջրումն էլ, ցամաքումն էլ։ Սարդը (բոլը) ունի ութն
ոտք. նրա արիւնը կարմիր չէ և տաք չէ ուրիշների արիւնի
պէս, այլ սառն է և ապիտակ։ Նրա մարմնի վրա շատ
խաղեր (դիծեր) կան։ Համարեա՝ թէ ամենայն անասուն
ձայն ունի։ Ձուկները, որդունքը և սողունքը (ճիճու-
ները) ձայն չունին։ Ողջից լաւ ձայն ունի մարդը։ Նա
լսելեմ լինչպէս է երգում սօխակը (բիւլբիւլը), լինչ-
պէս է հաչում և ոռնում շունը, լինչպէս են ձայն հա-

նում կովը, սիրամարգին (թաւուզը). ի՞նչպէս է խնջում ձին, ի՞նչպէս է մկում այծը, և ի՞նչպէս է կռկռում գորտը։

20.

Ստուած անասուններին տուել է տաք հագուստ։ Ոմանք վրէն ունին հաստ մազ կամ մորթ, ոմանք վերտուրներ, ոմանք ստէ (կոշտ մազ), կամ ոսկոռի կեղև։ Գազանները, որք կենում են անտառներումը (մեշերումը,) և որք մարդից փախչում են, իրանք են գտնում իրանց կերակուրը։ Ոմանք սպանում են ուրիշ անասուններին և նրանց միսը ուտում են, և էնդուր համար նրանց անունն է գիշատիչ (լեշ ուտող) անասուն։ Ոմանք ուտում են սատկած անասուններին։ Տնային անասուններին կերակրում է մարդը։ Նրանց ուտելիքը շատ զանազան են։ Ոմանք ուտում են կանանչ խոտ, ոմանք բոյսեր, ոմանք արմատներ, տերևներ, ծառեր, ծաղիկների մէջն ջուրը, հատեր և այլն։

Եզները, կովերը, ոչխարները, ձիերը և այծերը ուտում են կանանչ խոտ և պարտիզների (բոստանի) բոյսեր։

Շունը և կատուն ուտում են միս. հաւերը, թռչունքը և սագերը ուտում են հատեր և դարի։ Մեղուները (մեղրի ճանճերը) ծծում են ծաղիկների մէջն ջուրը. որդունքը ուտում են արմատներ կամ տերևներ։ Ոլորդը վեր է առնում իրա հրացանը (թօփը, թիւֆէնկը) և մէկ լաւ վազող շուն. գնում է անտառը և էնտեղ անասուններ կամ թռչուններ է սպանում ուտելու կամ ծախելու համար։ Եթէ անասունը կամ թռչունը թուփերի կամ ծառերի մէջ թախկացած լինի, շունը վախեցնում է և դուրս է քշում, կամ եթէ սպանածը վեր ընկնի թուփի մէջ, շունը գնում է և բերում է։

21.

Աղռաւները և շունները շատ բարակ հոտառութիւն ունեն, արծիւը շատ սուր աչք ունի։ Ընձիւի որդունքը ո՛չ ականջ ունին, ո՛չ աչք և ո՛չ քիթ։

Երբ որ անասունը դաղրում է, պառկում է քնելու. նրանցից մէկ քանիսը քնում են աչքերը բաց, զրօրինակ, նապատակները։ Ոմանք քնում են կանգնած, զրօրինակ ձիերը, ոմանք քնում են միայն ցերեկը, էնդուր համար, որ գիշերը դուրս են գնում կերակուր գտնելու, զրօրինակ, բու (բայղուշը)։ ոմանք քնում են սաղ ձմեռը, և զարթում են էն ժամանակը, երբ որ օդը սկսում է տաքնալ։ Ամենայն անասունը իրա համար թշնամի ունի, որից վախենում է, զգուշանում է և իրան պահպանում է։ Ամենայն անասուն գիտէ, թէ ինչպէս պէտք է իրան պահպանի երբ իրա թշնամին պատահի։ Ոմանք պահպանում են իրանց մարմինը թշնամին կծելով, ոմանք ծակելով, ոմանք վախչելով, ոմանք թաքչելով (թախկենալով,) ոմանք քայլ տալով (ոտկի տալով), ոմանք պոզահարելով (պոզով խփելով), և այլ տեսակ հնարքներով իրանց գլուխը պահում են և թշնամիից ազատվում են։ Ջրի անասուններից ոմանք թշնամիից ազատվելու համար պղտորում են ջուրը, ոմանք գարշելի (վատ) հոտ են հանում, ոմանք սուտ մեռնում են կամ լալու ձայնով ուրիշներին օգնութիւն են կանչում։

22.

Անասունները շատ մեծ հոգատարութիւնով պահում են և կերակրում են իրանց ձագերին։ Ձագերի (բալերի) ծնելուց առաջ պատրաստում են նրանց համար վայելուչ, տաք և ապահով բուն։ Մէկ քանի անասուններ, զրօրինակ շունները, կատուները, ձիերը, կովերը, և այծերը հնում են կենդանի ձագեր և ծիծ են տալիս նրանց, էնդուր համար նրանց ասում են կոթոնակեր կամ ծիծ ուղ. ամէն անասուն, որը չորս ոտք ունի, ասում են չորոտանի։ Թռչունները և ձկները ձու են ածում, էն հավկիթներից կամ ձուերից փոքր ժամանակից յետոյ տարութիւնի զօրութիւնով ծնում են ձագեր։ Ցուրտ կլիմերում կամ երկիրներում անասունները ունին շատ տաք հագուստ։ Անասուններից ոմանք կենում են օդում,

ոմանք ջրի մէջ, ոմանք դեռնի (երկրի) վրա, ոմանք դեռնի տակը։ Կաթնակիր անասունները մարդի համար շատ հարկաւոր են։ Անոնք չէնքը կարող ապրիլ առանց ոչխարների, եղների և կովերի. ինդուր համար որ մենք ուտում ենք ոչխարի, կովի, եղի, հորթի, եղջերի (մառալի) և այլ անասունների միսը։ Ոչխարը մեզ տալիս է կաթը ուտելու համար և բուրդ, որից մենք շինում ենք մեզ համար շորեր։ Եղան միսը ամենից առաջարար կերակուր է մեզ համար, իսկ նրա կաշին մեզ շատ հարկաւոր է, ինդուր համար, որ կօշիկարը (չեբմէջը կարողը) կարում է մեզ համար չեբմէջ (կոշիկներ). շատ երկրներում եղը հարկաւոր է դեռնը վարելու համար։ Կովը մեզ տալիս է կաթն, որից շինում են իւղ և պանիր. ձիերը մեզ շատ հարկաւոր են լծելու և հեծնելու համար, նմանապէս և դեռնը վարելու համար։ Նշերնել հարկաւոր են տար տեղերումը, ինդուր համար որ նրանց վրա բարձում են ծանր բեռներ։ Ինչ որ մեզ համար անում են ձիերը և եղերը, շատ ցուրտ երկրներումը մի և նոյն ծառայութիւնը անում են եղջերները (մառալները). իսկ տաք երկրներումը ուղտերը.

23.

Թռչունները մեզ ուրախացնում են երգերով. դրծ են ածվում կերակուրի համար, և օդում են բերում մեզ իրանց գրիչներով (փետուրներով), ձուով, երբեմն էս ինդուրով որ ուտում են սատկած անասուններին, ուտում են զանազան և վնասակար և տգեղ (գեշ) միջատներին, մանաւանդ օձերին, գորտերին և խլեզներին։ Թռչունքը զանազան են լինում. ոմանք անապին են, զարդարնակ հաւերը, ոմանք ջրային են, զարդարնակ բադերը, ոմանք երգիչ են, զարդարնակ սոխակը, ոմանք գիշատիչ են (լեշ ուտող), զարդարնակ արծիւը (չայլաղը)։

Ձուկը պէտք է մարդուն ուտելու համար։ Ինդպէս երկրներ կան, որ բնակիչները սաղ տարի միայն ձուկն են ուտում։ Ձկան եղը և կաշին շատ բանի համար պէտքական են լինում։

Օձեռունքը (դեռանի Հիմունները) մեղ հարկաւոր են ենդ-
բով, որ ուտում են ձմռանայաբ խոտերը կամ նրանց սեր-
մերը։ Այրանք ուտում են սատկած անասուններին, որք
ելթէ մնան, իրանց վատ հոտովը կապականեն օդը։ Մե-
ղուն (մեղրահանքը) մեղ տալիս է մեղը և մոմ (մեղրի
մոմ, խոտակ մոմ)։ — Պղունգը (ամպը) որ ջրումը թրը-
չած բանեցնում ենք սրբելու համար, մի կ որդնի շինած
բուն է։ Տզրուկը (սուլուկը) շատ լաւ դեղ է։ — Ոչխա-
սունները, որոնց կաշին մենք դոլչ ենք ածում, որոնք
են՝ եղերը, յորդերը, ոչխարները, ձիերը, խոզերը, այ-
ծերը, եղջիւրները (մատուները), վայրի այծերը և
եշերը։ Փիղն (ֆիլը) կաշիից շինում են մաղտաղթ թուղթը,
որի վրա կարելի է գրել և գրածը ջնջել։

24.

Բանի մի անասունների կաթը մարդիքը ուտում են
և խմում են, զորօրինակ կովի, ոչխարի, այծի։ Ձիու
կաթը նմանապէս խմում են մի կ քանի կողմերում։ Իշի
կաթը շատ օգտաւէտ է և երբեմն դոլծ է ածվում դեղի
համար շատ հիւանդութիւնների։ Արագը ո՛չ թէ միայն
ուտում է որ կշտանայ, այլ և ուղում է, որ կերածը
լինի համով. ենդուր համար Աստուած, որ իրա ողոր-
մութիւնովը ամէն բանի համար հոգում է, ենպէս է
կարգել որ շատ բաներ կան, որոնք կարելի է կերակուրին
լաւ համ տալ։ Այսպիսի կերակուրի համեմիչները (համ
տուողները) են՝ աղ, պղպեղ (փրիկի, բիբառ), մանրեմ,
կարաւսխատ, քեմոն (գիրայ), սամիթ (շլիթ), կարտոն,
(քարտոն), մաղդանոս, ռոխ, ծօթիլին, քրքում (զաֆրան)
իւղ ձիթապտղոյ (զէյթիւնի իւղ), մանանեխ (խարդալ),
շաքար, կինամոն (դարչին), ընկուզ հնդկայ, ընկոյզ մը-
կրահոտ (ջաֆլ), միխակ, կոնապղպեղ (զենջֆիլ)։ Բա-
յսերը նմանապէս համեմիչ է, և լինում է կամ դինիից
կամ զանազան պտուղներից։ Հայի չլցած տեղը ամենից
լաւ և էժանագին ուտելուն է գեանախնձորը (կարտոֆիլը)։
Անասուն տեսակ հոգիք կան՝ ու�ղ, կաւ, կաւիճ (մէլ),
կիր։ Ուղը խառնում են կրի հետ, աւաղը ածում են

գրած թղթի վրայ. քանի որ թանաքը չի չորացել, որ գրածը չի ջնջուի. կաւով և ցեխով շինում են վառարանները և տունները. կաւից շինում են ափուռ, զանազան ամաններ և բաժակներ. կաւիճը (մելը) գործ են ածում գրելու և ներկելու համար. կիրը վիայն շինութեան համար։

25.

Բարեբը նմանապէս զանազան տեսակ օգուտներ ունին. երկանաբարը (ջաղացքի քարը) պէտք է ալիւր աղալու համար. ուրիշ քարեր կան, որ հարկաւոր են դանակ կամ ասելի կամ կացին սրելու համար. ուրիշ քարեր կան, որով քաւելը ծանկում են, որ ցեխ չլինի. կամ տունի և ուրիշ շինութեան համար են գործածում. կան քարեր, որ երբ կոկում են կամ սրում են, պապզում են զարդարելու մարմարիոն։ Աղնաբը ամենից թանկագին քար է և օգուտ ունի հնդրով, որ շուշա ածողները նրանով շուշա են կարում. Հրահանի քարը շատ հարկաւոր է մանաւանդ հրացանի (թուֆենկի) համար. նմանապէս նրանից շինում են շուշա։ Թանկագին քարի անուններն են՝ անդամանդ (ալմաս), քաղցեդոն ակն, ակատ, յասպիս, կիճ կարծրաքարու, ամեթոստ (լեալ, լալ), յակինթ (եաղութ,) զմրուխտ, տոպազոն, շաբիւղայ կամ սաֆիրայ։ Երկրի մէջից գտնում են ոսկի, արծաթ, սպիտակ ոսկի, պղինձ, երկաթ, կապիկ, արճիճ, քարի ածուխ, քարի աղ (շուշայ աղ), թանկագին ակներ կամ քարեր։ Ոսկուց, արծաթից, սպիտակ ոսկուց և պղնձից շինում են դրամ (փողեր)։ —

26.

Ամէն տերութիւններում կան քաղաքներ և գիւղեր։ Գիւղերում կենում են գեղացիքը, որ երկրագործութիւն են անում և անասուններ են պահում։ Քաղաքների մէջ կենում են ածուխ (գործի) շինողները և որսորդները (հրաս անողները)։ գետերի և ծովերի մօտ կենում են ձկնորսները (ձուկ բռնողները)։ Քաղաքների և

գիւղերի մէջ լեռան տեղերը՝ մամ կան դաշտերը, որտեղ մարդագետինները (կանանչ տափերը), անտառները (մեշտները), թուփերը, լեռները (սարերը), ապառաժները (քարերը), հովիտները, ձորերը (գոգերը), լեռները, գետերը, աղբիւրները, և այլն։ Ինչ որ քաղաքից կամ գիւղից դուրս է, ասում են արտ։ Ոչ ասելը որ ինքնիրեն թաց է և ջրաւէտ, և որի վերայ դուրս է գալի խոտ, ասում են մարդագետին. իսկ եթէ մեծ տեղ է խոտաբոյս, ասում են արօտ (արածելու տեղ)։ Բայց ի՞նչ է անունը էն տեղի, որ պատած է որմով (պատով), հիւսուածով (ցանցառով, և մէջումը կան զանազան պտղաբեր ծառեր և ծաղիկներ։

Մեծ տեղ, որի վերայ կան շատ պինդ և բարձր ծառեր, առանց կարգի դուրս եկած մէկ մէկու մօտ, կոչում անտառ (մեշտ)։ Շատ տափերումը տեսնում եմ բարձր տեղեր կամ բարձրացած հողեր. եթէ շատ բարձր են, էն էնքան, որ նրանց գլուխը հասնելու համար շատ ժամանակ է քաշում, էնպէսին ասում են լեռան (սար). իսկ եթէ սաղ քարից են, ասում են ապառաժ (քարաբ)։ Էն տափերը, որի վերայ սարեր չկան, ասում են դաշտ (հաւասար տեղ)։ Երբեմն դաշտերումը լինում են մանր բլուրակներ փորած հողից։ Էդ բլուրակները շինում են դեռանի մուկները, որք փորում են տափերը և հնդրով վնաս են տալի արտերին։

27.

Հաւասար լայն տեղը երկու կամ շատ սարերի մէջ ասում են հովիտ. իսկ եթէ այս տեղը էնքան նեղ է, որ դժուար կարելի է անց կենալ մէջից մէկ սայլով, ասում են փոսար։ Երբեմն սարերի մէջ լինում են փոսեր կամ մեծ ծակեր, էնպէս որ շատ մարդ կամ անասուն կարող են մէջումը կենալ, ասում են այր (մաղարայ)։ — Տափերումը երբեմն պատահում են ջրոտ տեղերը, և էնքան կախուղ, որ եթէ մարդ ուզենայ անց կենալ նրանց վերայից, մէջը կընկնի, էսպիսի տեղին ասում են ճահիճ։

Փոքր ջուր հաւաքուած անձրևներից ցամաք տեղումը ա-

սում են լՃակ (գօլ)։ ՃահիՃՃերումը կենում են զանազան թռչունները, զոբօրնակ արագիլները (լեկլեկ), կռունկ, չոլ սագ, և այլն։ ԼՃ ասում են մեծ և խորը ջուրը, որ մէկ տեղ կանգնած է առանց դնալու չոր կողմը հող։ ԼՃերումը կենում են զանազան թռչունքները զոբօրնակ, կարապները, սագերը, բադերը, ձկնակուլ և այլն. ինդուր համար որ այդ թռչունքը ճուկները ենուտում, և լՃերումը ճուկները շատ է լինում։ ԼՃերի, գետերի և ծովերի ափերքումը (եզերքումը կամ ղրաղերքումը) դուրս է դալի եղէգն (ղամիշ), ոլոր շինում են սակառի (սեվեթ)։

28.

Շատ տեղ ջուրը բղխում է (դուրս է դալի) գետնի տակից, էս նշանակում է, որ ինտեղ աղբիւր կայ։ Շատ աղբիւրներ, որք վաղելով միանում են, դառնում են փոքր գետ։ Աղբիւրի ջուրը համարեա թէ միշտ լինում է սառը, բայց ինդէս աղբիւրներ էլ կան, որոնց ջուրքը այնքան տաք են լինում, որ կարելի է մէջումը եփվել։ Հիվանդների համար շատ օգուտ է լինում այդպիսի տաք ջերքումը, երբ որ նրանք փոքր սառացրած լինեն։

Եթէ ուզենաս մէկ քաղաքից դնալ ուրիշ քաղաք կամ գիւղ, ալ՝որ է կամ ոտով (հետիոտ) դնաս կամ ձիով, կամ սայլով և կամ նաւով։ Ամենից էժանագին և ապահով դնալը կլինի փոստով։ Փոստ կամ փոշտ ասում են այն մանր սայլերը ամէն մէկը երեք ձիով, որ կարգած են Ճանապարհումը տեղ տեղ և էս տեղերին ասում են լէկան (սատնոյեայ)։ Ամէն լէկանումը ինչպէս ցոյց տաս անցարԹուղԹդ (պուտորոժնեայ), էն տահԹին կտան փոստի ձիերը։ ԱնցարԹուղԹը (պուտորոժնեան) է Թադաւորական ԹուղԹ, որի մէջ գրած է հրաման ձիերը տալու. բայց այս ԹուղԹը ստանալու համար պէտք է բոլոր մղոնների (վերստերի) ծախքն հատուցանել, այ ինչքան մղոն որ կլինի բոլոր դնալուդ Ճանապարհը, իւրաքանչիւր մղոնի համար կառնեն 2 կամ 3 կոպէկ ամէն մէկ ձիու համար։ Ով որ իրա կառքը (սայլը) կամ կա-

լեռական չունի, նրան լիճանումը կատան տալ և ձիերը։ Ասելի հեշտ կարելի է Հանապարհ դնալ դիլիժանսով, ՝ի մեծ կառքով, որի մէջ շատ նստելու տեղերը կայ և ամէն մէկ տեղը մէկ մարդ է վարձում։ Այս դիլիժանսները ամենայն տեղ չկայ։ բայց միայն Եւրոպայի մեծ և երևելի քաղաքներում։ Եթէ ես իմ ծնողքիցս հեռու լինիմ կամ ուրիշ քաղաք դնամ, պէ՛տք է նրանց հետ խօսում դրով, նամակով։ Այս նամակը (դիրը) պէ՛տք է ծրարի մէջ դնում և կնքում (մէրում, փեչատում)։ յետոյ պէ՛տք է ծրարի վրա պարզ դրում, թէ ո՞ր քաղաք պէ՛տք է հասնի այս դիրը և ո՞ւմ ձեռքը։ Այս ծրարի վրայի դրածը ասում են հասցէ կամ ադրես։ Յետոյ պէ՛տք է տանում նամակը փոստի տուն և տամ որ ուղարկեն։ տարու ժամանակը պէտք է ուղարկելու համար փոդ տամ։ ինչքան ծրարը ծանր լինի, էնքան աւելի փոդ կառնեն։ Մեծ Հանապարհները, քաղաքները և գիւղերը մեզ մէջ էնպիսի տուներ, որի մէջ Հանապարհորդները կարող են իջանել (վեր դալ) և հանգստանալ։ Այսպիսի տուները ասում են պանդոկ (իջևան)։

Այս քաղաքը, որ տեղ ես կենում եմ, ասում են.....։ Այս քաղաքը ՝ի թաղաւորութեան քաղաքն է։ Իմ հայրենիքս շատ մեծ է, ունի շատ քաղաքներ և գիւղեր, որոնց մէջ կենում են շատ հազար մարդիկ։ Էն մարդիկը, որք միասին կենում են մէկ տեղ մէջ՝ և մէկ լեզուով են խօսում, մէկ ազգ են։ Ռուսաց տերութիւնը իրա հազարաւոր քաղաքներով և գիւղերով թէպէտ շատ մեծ է, բայց Եւրոպայի մէկ մասն է։ Եւրոպան էլ բոլոր երկրի մէկ մասն է։ Երկրին էլ բոլոր աշխարհի մէկ մասն է։ էն զարմանալի որ աշխարհը ասելով պէտք է իմանանք բոլոր Աստուծոյ ստեղծած բաները, ՝ի երկինքը, երկիրը, աստղերը, արեգակը, լուսնիակը և այլն։ Մեծ քաղաքներում կենում են ազնուականք, առևտրականք, արհեստաւորք, վաճառականք, ուսեալ մարդիկ, մշակներ, աղքատներ, հարուստներ, զինուորականներ (աղդատներ)։ Էն

քաղաքը, որ տեղ կենում է կայսրը կամ թագաւորը, ասում են մայրաքաղաք։ Ռուսաց տէրութիւնի մայրաքաղաքները երկու են Պետերբուրգ և Մոսկուա։ Աւստրիայոց տէրութիւնի մայրաքաղաքն է Վիեննա։ Պրուսացոյն — Բերլին. Շվեդացոյն — Ստոկհոլմ։ Տաճկացոյն — Կոստանդինապոլ։

Այն քաղաքը, որ տեղ կենում են շատ վաճառականներ, և որ տեղ մեծ առուտուր է լինում, ասում են շահաստան (առուտուրի) քաղաք։ Այսպիսի քաղաքներ ըստ մեծի մասին մեծ գետերի կամ ծովերի մօտ են լինում։ Ընդհանուր համար, որ ծանր ապրանքները աւելի հեշտ է ջրով բերել կամ նաւով անցկացնել։ Ինչ որ վաճառականը ծախումը է ասում են ապրանք։ Այն ապրանք մէկ տեսակ չէ ծախվում. ոմանք չափով, ոմանք կշռովով, ոմանք համարովով. փայտը ծախում են կամ սայլով կամ սաժենով (3 դաղով). կոտաը, չուխան (մահուտը), և ամէն քամբակեղէն և աբրեշումեղէն բաները ծախում են կանգուռով (դաղով)։ Ջրալի բաները, ղրօրինակ կաթը, ձէթը, գինին, դարեջուրը, քացախը, օղին (արաղը) ծախում են շուշայով կամ չափով. լուղը, շաքարը, չայը և այլն ծախում են կշռովով. կշռի մէկ թաթի վերայ դնում են ծախելու ապրանքը, միւս թաթի վերայ զանազան ծանրաչափները, ֆունտանոց, ֆունտանոց, մսխալանոց և այլն։

30.

Ինչ բանով որ մարդը պարապում է և հայ է ճարում, էն նրա արհեստն (փիշակն) է։ Երկրագործութիւնը, տաւար պահելը, պարտիզպանութիւնը (բաղչանչութիւնը) և առուտուրը արհեստներ են։ Որ որ վարուցանքն է անում, ասում են երկրագործ, գեղացի. ով որ պարտեզ (բաղ) է պահում, ասում են պարտիզպան (բաղչանչի), ժամացույց շինողը (սահաթաղ), պատկերահանը և քանդակիչը (քար փորողը) արհեստաւորներ են։ Լուսնը (դուրկարը), հայ թխողը, դարեջուր շինողը, աղիւսագործը և այլն արհեստաւոր են։ —

Ամէն տեղ, որ տեղ որ մարդիկ կենում են Աստուած էնպէս առատութեամբ է կարդաւորել, որ փոքր աշխատանքով կարող են նրանք գտնել ամէն իրանց հարկաւոր բաները։ Թէպէտ ամէն երկիր միատեսակ առատ չէ և ամէն բանը չէ տալիս, բայց առուտուրով ամէն մարդ կարող է ձարել ինչ որ իրան պէտք լինի։

Եթէ ես վակեմ բերանս և քիթս, կմեռնեմ։ Ընդհանուր համար որ մարդը պէտք է անդադար շունչ քաշի, այս ինքն բերանով և քթով պէտք է օդ առնի և դուրս տայ, եթէ ուզում է ապրիլ։ Եթէ մարդ ընկնի էնպէս տեղ որ չկարանայ գտնել ո՛չ ուտելու և ո՛չ խմելու բան կմեռնի քաղցածութիւնից և ծարաւութիւնից։ Եթէ շատ տուրտ ձմեռ ժամանակը մարդ ձանապարհումը լինի և ցուրտին չի դիմանայ, կսառչի և կմեռնի, ընդհանուր համար որ մարդուս կեանքի համար պէտք է տաքութիւն։ Եթէ նոր ծնած երեխին թաղնեն չոլումը և հոգս չանեն նրա համար ո՛չ ուտելուն, ոչ խմելուն, ո՛չ խոտակութեանը, ո՛չ տաքացնելուն, ոչ հագուստին, նա կմեռնի, կամ եթէ չմեռնի, հասկացողութիւն չի ունենալ, ո՛չ խօսիլ կասվի, ո՛չ լաւ մանդալ, ընդհանուր համար որ երեխերքը սովորում են խօսիլ և մանդալ լսելով մեծերի խօսելը և տեսնելով մեծերի մանդալը։ և բան էլ հասկանում են մեծերի սովորեցնելով։ — Ուրեմն օդը, տաքութիւնը, կերակուրը, հագուստը, բնակարանը (կենալու տեղը), և իրան նմաններին մօտ կենալը անպատճառ հարկաւոր են մարդուն որ կարանայ ապրիլ։ Այս ամէն բաները առում են առաջին պիտոյք (հարկաւորութիւնք) մարդոյ։ Մենք կարող ենք ապրիլ թէ՛ և գինի չխմենք, ձերմակ հայ չուտենք և արքեշումի շորեր չհագնենք։ Ընդհանուր համար որ այսպիսի բաները առաջին հարկաւորութիւններ չեն մարդու համար, այլ միայն ունեցողների հեշտութիւնն է ցոյց տալիս։

31.

Ով որ դաղրած է, հանդարտ է քնում չոր գետնի վրա էլ. բայց նա աւելի կուզէր քնել փափուկ կողնիքը վրա։ Պոշտ ալթոռի վրա շատ լաւ կարելի է նստել և հանդս-

տանում, բայց 'ի հարկէ, առելի հանգիստ կլինի նստել փայտուկ դայհոյքի (կրեսլայի) վրա։ Շատ հաստ մահուտից կարած շորերը շատ օգուտ է, ինքնուրույն համար որ պահպանում է ցուրտից, քամիից և անձրևից, բայց 'ի հարկէ աւելի ախորժելի է ունենալ հագուստ բարակ մահուտից դեղեցիկ կոճակներով։ Ուրեմն փայտուկ կողինքը, փայտուկ ոթոցը և թանկագին հագուստը առաջին հարկաւորութիւնք չեն մարդոյ համար, այլ նրա հեշտութեան և հանգստութեան համար են։ Ինչի՞ համար են պէտք հայելին, ժամացոյցը (սահաթը) և քնարը (սազը)։ Եթէ մենք ունինք առողջարար և բաւական կերակուր կամ ուտելիք, խոտակ շորեր և լաւ բնակութիւն, պէ՛տք է բաւական լինենք և շնորհակալ, թէ՛ և չունենանք շատ համով և թանկագին կերակուրներ, հագուստներ և այլն։ Հագուստը պահպանում է իմ մարմինը ցուրտից, շորից, քամիից, անձրևից և փոշիից (թոզից), և տաքացնում է ինձ։ Մէկ քանի հագուստներ կան, որ պէ՛տք են մէկ քանի արհեստների, զորօրինակ ղենջակ (փեշտամալ) հաց թխողների համար, կաւագործների (աման շինողների) համար, աղաստագործների և (դիւրկարների) համար։ Ի՞նչ պատճառ։ Ուրեմն շորերից կարելի է ճանաչել թէ ով ինչ արհեստի մարդ է, և ես կարող եմ զանազանել շորերով դեղացիին, քաղաքացիից, քահանային (տէրտէրին) վաճառականից, հաց թխողին ծխնարոյզ (որուբայ) արքողից, ղենուորին (սոլդատին) աշակերտից։ Հագուստը ո՛չ թէ մէնակ մարմին պահպանելու և տաքացնելու համար է, այլ և զարդարանք է. եթէ դեղեցիկ է կարած և թանկագին բանից է, ասում են զարդ։ Մենից լաւ զարդը մարդու համար է խոտակ շորերը, որ իրա վրա յարմարացրած է։

32.

Դա իմ շորերիս անունները դիտեմ և կարող եմ ասել թէ ո՞րը նրանցից շինած է կաշիից, ո՞րը բամբակից կամ ո՞րը բուրդից, կամ ապրեշումից։ Դա դիտեմ թէ ի՞նչ կասեն էն մարդին որ շինել է իմ դգակը, և թէ ինչի՞ցն է շինել։ Ո՞վ է շինել իմ շապիկիս համար քաթանը և ո՞վ է շինել կաշին իմ կոշիկներիս հա-

մաը։ — Այս իմ մարմինս կարող եմ զանազան շարժ-
մունքներ անել, որոնք անասուններըը չեն կարող։ Այս կա-
րող եմ մանդալ, վազել, թռչտել, թռչտելով մի-
քանի մօտ հասնել, կռանալ, մարմինս ամէն կողմ դարձ-
նել, կաքաւել (պար գալ, խաղալ), այծաքիլ (սլլալ),
չոքել, պառկել, նստել, վեր կենալ։ Այս կարող եմ ու-
րիշներին յայտնել իմ միտքս, կամքս, ցանկութիւնս,
երևակայութիւնս և զգայմունքս բառերով, ցրխօսելով.
անասուններըը չեն կարող խօսել։ Այս կարողանում եմ
տեսնել ինդուր համար որ ունիմ երկու առողջ աչք,
կարող եմ լսել ինդուր համար որ ունիմ երկու լսնչ։
Այս կարող եմ ամէն բանի համը իմանալ ինդուր հա-
մար, որ ունիմ լեզու և քիմք։ Կարող եմ հոտ առնել,
ինդուր համար որ ունեմ քիթ։ Այս կարողեմ շոշափել
բոլոր մարմինս. բայց շոշափելու զօրութիւնը ես ունիմ
ամենի մատներիս ծայրերումը։ Այս տեսնում եմ լուս-
նեակը, արեգակը և աստեղքը երկնքումը, իսկ երկրի վրա
տեսնում եմ մարդիկ, անասուններ, ծառեր, բոյսեր, խո-
տեր, քարեր, սարեր, բլուրներ, դաշտեր, գետեր, լեռներ,
աղբիւրներ, քաղաքներ, գիւղեր։

()դումը ես տեսնում եմ թռչուններ, ճանճեր, մի-
ծամներ, թիթեռներ. գետնի մէջ որդուններ, ջրի մէջ
ձկներ, գորտեր և որդեր։ Այս լսում եմ թռչունքների
երգելը, որոտումը (ամպի գոռալը), զանգակի հնչիւնը
(ձայնը), մարակի (մաթրախի) տրխկալը, ձիու խխնջալը,
աղբիւրի կարկաչելը, քնարի (սազի) ձայնը և ծոցի ժա-
մացուցի (սհաթի) հարուածը (ձեկալը)։ Հոտ տեղից
ես կարող եմ զանազանել շան հաչելը, ոչխարի ձայնը,
զանգակի հնչիւնը և հրացանի (թիւֆենգի) կամ թնդա-
նօթի (զարբազանի) թնդիւնը։

Այս զգում եմ որ կրակը այրում է, իսկ սառը ազ-
բիւրի ջուրը հովացնում է. արեգակի ճառագայթները տա-
քացնում են, քարը կոշտ է, բուրդը փափուկ է, սա-
ռույցը սառն է, հայելին ողորկ (կոկ) է։ Այս զգում եմ
շաքարի քաղցրութիւնը, քացախի թթվութիւնը և նուշի

դառնութիւնը։ Ուրախութիւնով հոտ եմ առնում վարդը, մեխակը, ռեհանը, և զգուելով հոտ եմ առնում սխտորը, սոխը, և այլն։ — Այս միտս եմ բերում էն պատմութիւնը, որ կարդացել եմ կամ լսել եմ. էնուրիշ երկրից եկած մարդին, որ մէկ անգամ տեսայ. միտքս եմ բերում այն ցաւը, որ քաշեցի հիւանդութեանս ժամանակը և էն, ինչ որ ուսումնարանումը սովրել եմ։ Այս կարող եմ երևակայել մտքումս թէ ի՞նչ ձև ունի նաւը, էնդուր համը, որ շատ անգամ տեսել եմ շինած կամ պատկերքի վերայ քաշած նաւեր։ Այս կարող եմ մտքումս տեսնել իմ հօր, մօր, եղբարց և քուրերիս կերպարանքը թէպէտ հիմիկ նրանք էստեղ չեն։

Այս կարող եմ միտքս բերել ամէն բանը ինչ որ տեսել եմ, լսել եմ, կամ զգացել եմ. կամ ես կարող եմ նկարագրել մտքումս էս ամէնը առանց օգնութեան զլխիս, ձեռքերիս, ոտներիս, աչքերիս, ականջներիս և քթիս։ Էն կարողութիւնները, որով ես մտածում եմ, միտքս եմ բերում, հասկանում եմ, ցանկանում եմ, կամենում եմ կամ պահանջում եմ, մարմնիս զօրութիւնները չեն, այլ հոգիս զօրութիւններն են։ Իմ հոգիս իմ մէջն է, ես նրան չեմ տեսնում, բայց նրա զօրութիւնները իմանալով հասկանում եմ, որ ես հոգի ունեմ։ Անանց հոգի մարդ մեռած է. եթէ ես հոգի չունենայի, ո՛չ ինչ չէի կարող հասկանալ, ո՛չ ինչ սովրել. չէի կարող ո՛չ համարել, ո՛չ գրել, ո՛չ կարդալ, էնդուր համը որ երբ ես կարդում եմ կամ համարում եմ, էն ժամանակը միտք եմ անում. իսկ միտք անել կարող եմ միայն հոգւով։ — Հոգւովս միտք եմ անում, երբ որ համարում եմ թիւերը, մէկ մէկու վրա աւելացնում եմ, մէկ մէկուց հանում եմ, բազմապատկում եմ կամ բաժանում եմ։ Հոգւովս միտք եմ անում էն մարդկանց վրա որոնց համար վարժապետս մէկ բան է պատմում կամ ինչ որ ես նրանց համար կարդում եմ գրքումը։ Հոգւովս միտք եմ անում էն խաղերի համար որ պէտք է խաղամ, երբ որ դասերս կաւարտեմ։ Հոգւովս միտք եմ անում էն պատիժների վրա, որ ուսուցիչս նշանակել է ծոյլ և չար աշակերտների համար։

34.

Այս ոչինչ խելօք բան չէի կարող ասել, եթէ հոգի չունենայի և հոգւովս միտք չանէի։ Այս խօսում եմ իմ վարժապետիս հետ, պատասխան եմ տալիս նրա հարցմունքներին։ Այս այս պատասխանները առաջ սերտած չէի, այլ առաջ միտք արեցի վարժապետիս հարցմունքի վրա, յետոյ պատասխան տուի։ Այս չեմ ուզում իմ շորերս փոխել աղքատի կտրտած շորերի հետ, էնդուր համար որ համեմատելով իրարու հետ, ես տեսնում եմ, որ իմ շորերս պատռած չեն, մաշած չեն, ուրեմն աղքատի շորերից լաւ են։ Այս շորերի համեմատելումը և տեսնելումը, թէ իմը աղքատի շորերից լաւ է, ես գործ եմ ածում հոգիս կամ խելքս։ Այս կամենում եմ իմ հին շորերը փոխել նորի վրա և հատուր համար գործ եմ ածում իմ կամքը։ Այս տեսել եմ, թէ ի՞նչ է անում գեղացին, երբ որ կամենում է պատրաստել գետինը վարելու կամ ցանելու համար։ Նա լծում է եղները կամ ձիերը փոքրիկ սայլումը, որ ասում են գութան։ Այս գութանը ունի երկու անիւ (ակը), ետևը մէկ տախտակ, որի վերայ հաստատած է խոփը (սուր երկաթը) կամ անիւ չունի, միայն երկաթ ունի։ Այս գութանով գեղացին մանն է գալիս տափումը. խոփը (սուր երկաթը) խորը մտնում է գետնի մէջ, միւս երկաթը, որ նրանից աւելի լայն է, ներքի հողը գՀում է վեր և կտրած գետինը շուռ է տալիս։ Յետոյ վարած գետնի վերայ ցանում է սերմերը ցորենի, գարիի, բլնձի, լայլն, և այս սերմերը խառնում է հողի հետ սանդրի պէս փայտով որ ասում են փոցխ։ Այս ամէնը տեսնելով ես հասկանում եմ թէ ի՞նչ է երկրագործութիւնը։

35.

Ով որ մինչև այս գասը լաւ մտադրութիւնով կարդացել է, նա հեշտ կարող է պատասխան տալ հետագայ հարցմունքներին։ Ի՞նչ է ուզում քաղցածը. ի՞նչ է ուզում ծարաւը. ի՞նչ է ուզում աշխատասէր աշակերտը. ի՞նչ է ուզում ծոյլը. ի՞նչ է ուզում դադրած մարդը. ի՞նչ է

ուղում հիւանդը. ի՞նչ է ուղում գողը. ի՞նչ կասեն ամէն բանին, որ կարելի է ուտել։ Ինչ կասեն ամէն բանին, որ կարելի է տեսնել. ինչ կասեն ամէն բանին, որ շատ դրամ (փող) չաժի։ Ամէն անասուններին, որոնք կաթնով են մեծացնում իրանց ձագերուն ի՞նչ կասեն։ Ամէն անասուններին, որք կարանում են թռչել, ի՞նչ կասեն։ Ամէն ձեռքիս վերայ ես ունիմ —. ամէն ոտիս վերայ ունեմ —. ձեռքով կարող եմ ես —. ոտքով կարող եմ—։ լեզուաւ կարող եմ — ։ Ամէն մանկանց, որոնք իրանց ծնողաց չեն հնազանդում, ասում են — ։ Ամէն մանկանց, որ իրանց ծնողացը ուրախացնում են, ասում են —։ Ի՞նչ պէտք է անի չեմնացողը. ի՞նչ պէտք է անի հիւանդը. ի՞նչ պէտք է անի անբաղաքավարը. ի՞նչ կարող է անել հարուստը. ի՞նչ կարող է անել հղօր մարդը. ի՞նչ կարող է անել առողջը։ Ուանց որ անասուններին չի կարող մարդ կառավարվել երկրավարութեան ժամանակը։ Որ անասունից պէտք է շնորհակալ լինինք, որ մենք հանգիստ և փափուկ անկողինը ունիմք։ Որ թռչունքներն են երգում։ Որ թռչունքը մարդու ձայնի նման ձայն են հանում։ Որ անասունները հարկաւոր են մարդու համար։ Որ անասունները ինչպես են տալիս արտերուն կամ բաղերուն։

Կարո՞ղ ես ինձ ասել, թէ ես տանը ի՞նչ կայ հիւսնի (դուրգարի) շինած կամ դարբինի շինած։ Ի՞նչ է անունը այն բանի, որ ամէն տան մէջ պէ՛տք է շինած լինի, թէպէտ և տարւոյ մեծ մասը չի գործածվում։ Ի՞նչ անօթ կամ ման անպատճառ պէտք է լինի խահանոցումը (կուխնումը։)

36.

Ասա՛ ինձ քո գլխի ամէն մասունքի անունները, ամէն քս հարկաւոր բանի անունները։ Ամէն բաների անունները ինչ որ բանացնում ես ուսումնարանումը։ Ամէն անասունների անունները, որանց միսը դու կերել ես։ Լիմի ասա՛ ինձ մէկ քանի վայրենի անասունների անունները և մէկ քանի թռչնոց անունները։ Ես կարող եմ մէկ քանի ձուկների անունները ասել և մէկ քանի թանկագին քարերի անունները։ Ես գիտեմ մէկ քանի վայրենի անասուն-

նեը, որոնց միսը կարելի է ուտել, և էնպէս անասուն-
ները, որոնց մորթին թանկ է. կարող եմ էնպէսի անա-
սունների անունները ասել, որոնք կենդում են գետնի տակը։
Այսա՛ լինէ էնպէս բաների անունները որոնք կանանչ գոյն
ունեն կամ սեաւ գոյն ունեն։ Էլիկ ասա՛ էնպէս բա-
ների անունները, որոնք շատ թեթեւ են, կամ շատ ծանր
են։ Այսա լինէ այրուբենի տասներորդ տասի անունը, տար-
ւայ վեցերորդ ամիսի անունը, ձմեռւայ ամիսների անուն-
ները, մէկ գարունքի ամիսի անունը, և մէկ աշունքի ա-
միսի անունը։ Որ ամիսին որ դու ծնել ես նրա անունն
ի՞նչ է։ Այսա լինէ մէկ քանի բաների անունները, որոնք
ջրի մէջ մեծանում են և ծանրանում են, կամ որոնք ջրի
մէջ հալվում են կամ լողում են։ Այսա՛ լինէ մէկ շատ
քաղցր բանի անուն, մէկ շատ թթու բանի անուն, մէկ
շատ դառն բանի անուն։ Այլի մասունքի անունները,
դանակի, գրչէի, պատուհանի (փանջարի) և դռան։ Աշուն-
քին օդը լինում է —. ամառը լինում է —. աշունքին
պտուղները ի՞նչ են լինում. գարունքին ծառերի վերայ
դուրս են գալի —։ Ձմեռը ջուրը լինում է շատ —. ով
որ ձմեռը չէ ուզում մրսել, պէ՛տք է —։ ով որ չէ ու-
զում աշխատել, պէտք է պարապ մնդալ, նրա ա-
նունն է --։ Ով որ չէ ուզում աշխատել, պէտք է
պարապ մնդալ, նրա անունն է ---։ Ով որ ուսումնա-
բանումը չէ հետևում և չէ ականջ դնում, չէ կարող ո՛չ
ինչ --- և կենայ ---։

37.

Գրեթէ ձմեռը շատ ձիւն գայ, մարդիկ մանն են գալի—.
ջրի վրա մանն են գալի — կամ —. ջուրը կենում են —.
օդումը կենում են —. գետնի մէջ կենում են —։ Գմէն
ծառ, որ պտուղ է տալի, ասում են—։ Լէն բաղը, որի
մէջ այսպիսի ծառեր շատ են, ասում են—։ Կոռնին պը-
տուղ չէ տալիս, բայց նրա փայտը շատ —։ Գրգենը և
կաղինը պտուղ են տալիս, բայց նրանք չեն —։ Կտրած
մեծ մեծ ծառերը սղոցով կտրում են, որ նրանցից շինեն—։
Տախտակները գործ են ածում — համար։ Գրչէը գործ

են ածում — համար։ Ոսկոռները — . աչքերը — . ատ-
ները — . ականջները — . ձեռները — . ատամները — .
ջուրը — . ուռկանը (թոռը) — . հրացանը (թիւֆենկը) — .
Ի՞նչ է էն մարդի անունը, որ չի լսում. Ի՞նչ է էն
մարդի անունը, որ չի տեսնում, — որ չի կարողանում
խօսել. — որ չի կարողանում մանգալ։ Ով որ այդպիսի
մարդկանց ծաղը (մասխարայ) կանի և նրանց վրա կծիծաղի,
նա արժան է —։

Այս ախորժանօք լսում եմ քաղցը երգը — . բայց զզուելի
ձայնը — ես չեմ ուզում լսել։ Ունչուկը (ծիտը) չի կա-
ղող — . աքլորը կարող է միայն — . Շատ անասուններ մի-
այն ձայն են հանում, երբ որ քաղցած են, բարկացած
են կամ ուրախ են։ Խոզերը — . շունը — . ոչխարը —.
ձին — . եզը — . մուկը — . հաւը —։

Ը արհեստաւորը են, որ փայտից բաներ են շինում։
Ը արհեստաւորները բուրդից են շինում կամ կանեփից.
Ով պէտք է գիշերը չքնի, որ քաղաքի բնակիչները հան-
գիստ քնեն։ Ով պէտք է գիշերը աշխատի, որ ուրիշները
ցերեկը ուտելու բան գտնեն։ Ը մարդիկը իրանց արհես-
տից (փեշակից) չեն կարող խստակ լինել։ Այս՝ ինձ մեկ
քանի էնպիսի արհեստաւորների անունները, որոնք շինում
են բաներ մեր զարդարանքի կամ հանգստութեան համար։
Այս՝ էնպէս արհեստաւորների անունները, որոնք իրանց շի-
նած բաներով մեզ ուրախացնում են. կամ էնպէս ար-
հեստաւորների որոնք մեզ համար տուն են շինում։ Ով
պէտք է աշխատի չոքած։ Ով ոչ՝ պէտք է աշխատի գետնի
տակումը. ո՞վ — ջրի մէջ և ջրի երեսին, ո՞վ — անտառի
մէջ։ Ով պէտք է միշտ մանգայ, որ ուտելու բան ճա-
րէ։ Ով պէտք է աշխատելու ժամանակը շատ շոքի դի-
մանայ. ո՞վ պէտք է շատ ցուրտի դիմանայ —։

Ով պէտք է իրա արհեստի համար միշտ ճանապարհ
մանգայ։ Ով պէտք է միշտ պատրաստ սատ լինի իրա արիւնը թա-
փելու համար։ Ով է թաղում մեռած մարդիկներին։ Ով
է մկրտում երեխաներին։ Ով է դեղ անում հիւանդներին։ —
Ով է եփում կերակուրը. ո՞վ է լուանում մեր շորերը։

38.

Ինչ որ չի կարելի պատահիլ, էն անկարելի է։ Անկարելի է, որ աշակերտը բան սովրի, եթէ ինքը ականջ դնող և աշխատասէր չլինի։ Անկարելի է որ էն մարդը առողջ լինի, ով որ անչարի կուտէ և կխմէ։ Անկարելի է, որ մեռած մարդը էլի կենդանի դառնայ։ կամ խուլ մարդը ուրախանայ լաւ քնարի (սազի) ձայնից։ Ո՞նչ է անկարելի կոյր (քոռ) մարդի համար։ Ո՞նչն է անկարելի վեց ամսական երեխայի համար։ ի՞նչ է անկարելի հիւանդի համար։

Ինչ որ պէ՛տք է լինի, էն հարկաւոր է։ Հարկաւոր է, որ մարդը անվնաս կերակուր ուտի։ (ինչու համար)։ Հարկաւոր է որ դադրած մշակը հանգստանայ և քնի (ինչո՞ւ համար։ Հարկաւոր է, որ հիւանդը դեղ խմէ և հանդարտ մնայ։ Հարկաւոր է, որ ամէն տուն տանիք (կատուր) ունենայ և դուռը։ (ինչու համար)։ — Ամէն մարդ իրա ժամանակին պէ՛տք է մեռնի։ (ինչո՞ւ համար)։ Ամէն մանկունք պէ՛տք է ուսում առնեն (ինչու համար)։ Պէ՞տք է ամէն բան ասել, ինչ որ ուրիշները անում են (ինչու համար)։ Հարկաւո՞ր է որ ամէն սեղան (ստոլ) կապմիր ներկով ներկած լինի, կամ ամէն սայլ չորս անիւ ունենայ։ Էն սեղանը սեղան չի՞ լինիլ, եթէ սպիտակ ներկով ներկած լինի։ կամ էն սայլը սայլ չի՞ լինիլ, եթէ երկու անիւ ունենայ։ Պէ՞տք է ձիերուն լծել սայլի առաջից, որ առաջ քաշեն, թէ կարելի է սայլի ետևիցն էլ լծել։ Պէ՞տք է շանը տալ ուտելու միւն, իսկ ձիուն խոտ, թէ կարելի է շանը խոտ տալ, իսկ ձիուն միս։— Էն սեղանը սեղան կլինի՞, որ փոխանակ քառանկիւնի (չորս քոշ) բոլորակ (կոլոլ) լինի։ կամ թէ փոխանակ մէկ պահարանի (եաշչիկի) երկու ունենայ։ կամ թէ փոխանակ կապմիր ներկի, կանանչ լինի ներկած կամ խակի չլինի ներկած։ Այսպիսի բաները պատահական որպիսութիւններ են և մարդոյ կամքից են կախեալ։ Բայց թէ սեղանը պէ՛տք է ունենայ տասիակ տախտակ և ոտներ, էդ հարկաւոր որպիսութիւններ են։ (ինչո՞ւ համար)։

Թէ որ մէկ տան առաջին երեկոյին մէկ շուն ոռնայ, և եթէ էն տանը մէկ մարդ մեռնի, էդ պատահական բան է, էնդուր համար, որ շատ անգամ շունը ոռնում է և ո՛չ ոք չէ մեռնում։ Եթէ մէկ մարդ վիճակ գձի և մէկ բան ստանայ, էդ պատահական բան է, էնդուր համար, որ շատ անգամ պատահում է, որ ո՛չ ինչ չէ ստանում։ Մէկ մարդ վեր է առել կարթը (ջանկալը), գնացել է գետի մօտ, գձել է կարթը ջուրը և աչքերը դրել է (մտիկ է անում) ջրին. առանց պատճառի է նա մտիկ անում։ Ոչ. նա էս հնարքով ուզում է ձուկը բռնել։ Էս է պատճառը նրա արած բաների։ Ուրիշ մէկ մարդ գնում է գետի մօտ, շորերը հանում է և տկլոր մտնում է ջրի մէջ։ Այ՞ ինչ պատճառով է անում, և ի՞նչ է սրա մտքի դիտաւորութիւնը։

Իմ ծնողքս ինձ ուղարկել են ուսումնարան. նրանք էդ անելով միտք ունին, որ ես — Պետրոսը գնաց սառույցի վրա, վեր ընկաւ և կուռը դուրս գձեց։ Ի՞նչ մտքով գնաց Պետրոսը սառույցի վրա, որ վեր ընկնի և կուռը ցաւ տայ։ Ուրեմն էդ չէր նրա դիտաւորութիւնը. այլ ի՞նչ էր։— Մէկ մարդ փորում է խորը փոս, կանգնեցնում է փոսի մէջ բարձր գերան, փոսը կրկին լցնում է հողով գերանի չորս կողմը և ոտքով տափտափում է. յետոյ վեր է առնում ուրիշ գերան և էլի էնպէս կանգնեցնում է միւսի մօտ. էս գերաններին վրա կպցնում է մեխերով (բևեռներով) հաստ տախտակներ, ինչի՞ համար է անում. — ուրեմն նրա դիտաւորութիւնն (միտքն) է տուն շինել։ Բայց ինչի՞ համար է շինում։

Աղեքսանդրը շատ ուզում էր բարձր ծառի վրայից կտրել հաստած տանձ։ Նա թոռի տուաւ ծառը, բայց տանձը վեր չընկաւ, ուղեց ծառի վրա բարձրանալ, բայց չկարաց։ Յետոյ գնաց բերաւ երկայն բարակ փայտ, և էնքան խրփեց ծառի ոտին (Ճիւղին), մինչև որ տանձը վեր ընկաւ —։ Ուրեմն երեք հնարքով ուզեց Աղեքսանդրը իրա կամքը կատարել։ Այն ինչով հետևում են իրանց կամքը

(ուղածը) կատարել, ասում են հնարքը, միջոց։ Բանի՞ հնարքը բանեցրուց Ա.ղեքսանդրը իրա կամքը կատարելու համար. ի՞նչպիսի էին առաջինն երկու հնարքը և ի՞նչպիսի էր վերջինը։

40.

Ի՞նչ դիտաւորութիւն ունի հիւանդը, երբ որ դեղ է խմում։ Ուրեմն նա ի՞նչ է հասարում երա համար դեղը։ Ի՞նչ դիտաւորութիւն (միտք) ունի վարժապետը, երբ որ պատժում է ծոյլ աշակերտին։ Ի՞նչ կարելի է ասել պատիժի անունը։

Որ հնարքն է լաւ իրա առողջութիւնը պահպանելու համար. կամ պատիժի տակ չընկնելու համար, կամ ուրախ մնալու համար։— Ի՞նչ լաւ հնարքը կայ բան գտնելու համար, բան ստանալու համար, իրան տարաբախտութիւնից պահելու համար, իրան տաքացնելու համար, շորերը երկար ժամանակ պահելու համար, ախորժակը (իշտահը) բաց անելու համար։ Մէկ սեղանի երկայնութիւնը խմանալու համար. ուրիշներին իրան սիրել տալու համար։ Ի՞նչ հնարքներ է բանեցնում դեղագին որ դեղերը վաճառելի համար պատրաստի։ Ի՞նչ հնարք են բանեցնում ծանր բանը բարձրացնելու համար. ծանր բանի քաշը խմանալու համար. իրա միտքը կամ ուղածը հեռու լինող մարդին իմաց տալու համար։— Հայրը հրամայեց իրա Կոստանդին որդուն խահանայից (կուխնից) մէկ դանակ բերել, երբ որ մութն էր։ Հայրը ասաց նրան, թէ Հրադ վեր առ, բայց Կոստանդինը կարծեց, թէ մութը տեղումն էլ կարող է գտնել դանակը, և առանց Հրադի վազեց։ Ոչոց չեն կացաւ մէկ բոպէ (մինուտ) հայրը լսեց, որ մէկ բան վերը ընկաւ։ Խոկոյն վազեց հնտեղ Հրադով։ Կոստանդինը ոտը խփել էր մէկ մեծ փայտի, որ ընկած էր Հանապարհի վերայ, վեր էր ընկել և երեսը խփել էր պատին։ Յաւելց տաղ գիշերը լաց էլաւ Կոստանդինը և չկարաց քնել։ Ինչից պատահեցաւ որ Կոստանդինի գլխին եկաւ էս փորձանքը։ Ենդուրից չէ՞ր որ նա չուզեց լսել իրա հօր խօսքը, կամ ենդուրից չէ՞ր,

որ նա կամիոր (իրասած) էր։ Այն բանը, ինչից որ մէկ բան լինում է կամ պատահում է, ասում են պատ-ճառ. իսկ եղած բանը ասում են հետևանք։ Այս տեղ ի՞նչն էր պատճառը և ի՞նչն էր հետևանքը։

41.

Ծնողքը ուղարկեցին Պողոսին իրա մօրաքուրը մօտ մէկ բան ասելու։ Մօրաքոյրը տուաւ նրան մեծ կտոր շաբարի հաց և մէկ քանի հատ խնձոր։ Պողոսը ճանապարհումը գալուս, կերաւ բոլորը շաբարի հացը և խնձորները։ Մի-ւս օրը նրա փորը սկսաւ շատ ցաւել։ Ի՞նչը եղաւ պատճառը Պողոսի հիւանդութիւնին, և ի՞նչ բանի հետևանք էր հիւանդութիւնը։ Կատարինեն ունէր լաւ լաւ ծաղիկներ. բայց մէկ ապք (շոր) օր մոռացաւ նրանց ջրել. ենդուրից ծաղիկները թառամեցան և պառկեցան գետնի վրա. ի՞նչ էր պատճառը, որ ծաղիկները թառամեցան։ — Այս վերը տուաւ խստակ սառը ջուր և ջրեց թառամած ծաղիկները. շատ շուտ երևեցան լաւ հետևանքը ջրելուն. ծա-ղիկները կրկին կանգնեցան և մէկ քանի օրից առաջուայ պէս զուարթացան։ Մշակը դադրել է և քաղցած է. ի՞նչ է պատճառը։ Ուրեմն դադրելը (վատանալը) և քաղցա-ծութիւնը են հետևանք ինչի։ Ամառուայ մութը անց է կենում և լուսանում է. ի՞նչ է պատճառը։ Այս ինձ ինչի՞ համար է պէտք քնելը և ուտելը. ի՞նչ հետևանք ունին աշխատասիրութիւնը, ծուլութիւնը, յուրտը, շորը, պարապութիւնը, արաղը, սառը ջուրը և կրակը։ Այս ինձ հրացանի գոռալու և անկի գրոտալու պատճառը։ Հետևանքը նմանապէս կարող է պատճառից առաջ լի-նել։ Դու մանես գալի անպառուումը. յանկարծ քեզ մօտ արձակվում է հրացան. սասրիկ ճայթումն է հետևանք հրացանի արձակելոյն. բայց միասին պատճառ է էն բանին, որ դու վախացար և որ նապաստակը վեր ընկաւ մեռած։ Սառեղ ի՞նչն է առաջ — պատճառը թէ հետևանքը. Տիզբանը գնաց իրա հօր հետ դաշտը և տեսաւ որ շատ ագռաւներ գնում են երկրագործի ետևից։ Ինչի՞ համար են գնում, հարցրաւ Տիզբանը։ Հայրը պատասխան

տու

և ենդրով իրանք ապրուստ են հարում։ Որանից երևում է որ աշխարհքիս մէջ ամէն մարդ մէկ մէկ արհեստ ունի և ենդրով իրա ընտանիքի ապրուստն է հոդում։ Այս էլ հիմիկ սկսել եմ կարդալ գրել սովրելու. եթէ հետևիմ և օր է օր առաջ երթամ ուսում առնելով, ես շատ գիտութիւններ կունենամ և ուսեալ մարդ կդառնամ։ Ուսեալ մարդը կարող է իրա համար աշխիւ ծառայութիւն գտնել և ենդրով ապրիլ կամ թագաւորական ծառայութիւն մտնել, կամ բժիշկ դառնալ, կամ վարժապետ դառնալ։ Իսկ եթէ իմ հայրս կամենայ ինձ մէկ արհեստի տալ, էն ժամանակը ես կհետևիմ որ սորված բաներս չմոռանամ և պարապ ժամանակս գրքեր կարդամ. գրքեր կարդալով մարդ շատ բաներ կսովրի։ Իմ վարժապետս ասում է, թէ Եւրոպայի մէջ եղպէս են անում և ենդուր համար ենտեղ իմաստուն և գիտուն մարդիք շատ կան. ենտեղի տղերքը ամէնքը լաւ կարդալ և գրել գիտեն և միշտ գրքեր են կարդում։

43.

Դասերս սերտելուց յետոյ ես սկսում եմ խաղալ. բայց երկար չեմ խաղում։ Մէկ սահաթ խաղալուց յետոյ էլի նստում եմ կարդալու. ենդուր համար որ ամէն բանի ժամանակ կայ։ Այս պարապ չեմ կենում. պարապ կենալը ամէն մեղքերու սկիզբն է։ Մի որ բան անել, աշխատել չի սիրում, նա արժանի չէ հայ ուտելու. ենդուր համար որ պարապ անցկացած ժամանակը կորցրած է։ Ժամանակը շատ հարկաւոր և թանկագին բան է. անցկացած ժամանակը էլ յետ չի գալ։ Այս գիտեմ թէ ժամանակը ի՞նչպէս է բաժանած։ Մէկ սահաթը ունի 60 րոպէ (մինուտ). կէս սահաթը 30 րոպէ, մէկ սահաթը ունի չորս քառորդ (չասրեք). ամէն մէկ քառորդը ունի 15 րոպէ։ Մէկ օրը և մէկ գիշերը 24 սահաթ է. ուրեմն օրը ունի 12 սահաթ և գիշերը 12 սահաթ։ Այս պղտիկուց պէտք է սկսեմ աշխատասէր լինել և հետևիմ որ բան սովրեմ։ Ինչ որ ես հիմի կարող եմ սովրել, էն ծերութեանս ժամանակը չեմ կարող սովրել։ Ինչ լաւ բան որ ես կա-

ղող եմ անել, էն պէտք չէ՛ էգուցվան դցել։ Այս իմ դասերս երբէք էգուցվան չեմ դնում. այլ պարտապ ժամանակս իսկոյն սերտում եմ. ինչ որ հիմի կասվեմ, ծերութեան ժամանակս ինձ հարկաւոր կլինի։ Պարդուառողջութիւնը աշխատանքով աւելի կպահվի։ Առողջութիւնը աւելի լաւ է քան թէ հարստութիւնը։ Դէթ ես մէկ վատ բան անեմ դամ խօսեմ և ինձ մեծերը ասեն, թէ էդ վատ բան է, ես պէտք է միւսանդամ էն բանը չանեմ։ Այս մեր տան ծառաների վրա երբէք չեմ բարկանում, և նրանց հետ հանդարտ եմ խօսում. էնդուր համար որ լաւ տղան ամէն մարդու հետ սիրով կվարվի և ո՛չ ոքի հետ կռիւ չի անել։ Ինչպէս որ ես մեր ծառաների հետ վարվեմ, էնպէս էլ ինձ հետ ինձանից մեծերը կամ իմ աղանները, որանց մօտ ես մէկ օր պէտք է ծառայեմ, կվարվեն. ընկերներու հետ էլ ես պէտք է սիրով վարվեմ. կռվող և չարասիրտ մարդու հետ ո՛չ ոք բարեկամութիւն չի անել։ Դէթ ինձ իմ ընկերները վատ բան կասվեցնեմ կամ խորհուրդ կուտան էնպէս բան անել, որ ամօթ բան է կամ ծնողաց և վարժապետս հրամանքից դուրս է. ես պէ՛տք է չլսեմ նրանց, և իրանցն էլ խորհուրդ տամ, որ վատ բան չանեն։ Աղքատներուն պէտք է ինչքան կարող եմ օգնութիւն անեմ, և եթէ կարող եմ պէտք է ողորմութիւն տամ. բայց եթէ չեմ կարող կամ ինքս չունեմ, պէ՛տք է .քաղցը խօսքով ասեմ նրանց, թէ Աստուած ողորմի։ Դէթ ես մէկ մարդու սիրտը վիրաւորել եմ կամ բարկացրել եմ, պէտք է նրանից ներողութիւն խնդրեմ։ Այս ո՛չ ոքի համար չէ՛ պէտք չար ուզեմ կամ ցանկանամ ուրիշն տարաբախտութիւնը, այլ եթէ կարող եմ պէտք է ամենին լաւութիւն անեմ և ցանկանամ, որ ամէնքը լաւ և բախտաւոր լինին։ Պարժապետս ինձ շատ անգամ ասել է Քրիստոսի խօսքը թէ՝ ինչպէս որ կուզէք որ ուրիշները ձեզ անեն, էնպէս էլ դուք նրանց արէք։

44.

Այս պարտական եմ ամէն մարդու սիրել էնդուր համար, որ մենք ամէնքս մէկ հօր (Աստծոյ) որդիք ենք։

Բայց աւելի պէտք է սիրեմ իմ ազգականներս և բոլոր հայ ազգին, էնդուր համար որ հայերը իմ եղբայրներս են, մէկ օրից (ադամից) եմք ծնել և մէկ մօրից (որ է մեր եկեղեցին), և մէկ աւազանի մէջ եմք մկրտված։ Այս շատ սիրում եմ մեր եկեղեցւոյ ամենայն կանոնները, հանդէսները և ժամերգութիւնները։ Պէր հայոց լեզուն էլ շատ սիրում եմ և միշտ հետևում եմ որ լաւ սովրեմ։ Այս գիտեմ, որ մեր հայոց ազգի մէջ շատ լաւ հին սովորութիւններ կան և էնպէս ծոներ կան, որք յատուկ ցոյց են տալիս մեր ազգի հնութիւնը։ Պէր պատուարժան նախնիքը (մեր պապերը) առանց փոխելու պահել են մեր ամենայն հին սովորութիւնները և մեզ էլ պատուէր են տվել նոյնպէս պահել։ Այս պարտական եմ, որ իմ ազգիս գովելի բաները ամէն չլսնացող մարդու պատմեմ, և եթէ մէկը մեր ազգի վրա կամ մեր եկեղեցւոյ վերայ անկարգ բան խօսի, ես պէ՛տք է որքան կարող եմ նրա առաջները սուտ հանեմ և ցոյց տամ մեր ազգի լաւութիւնը։ Ով որ իրա ազգին չի սիրում կամ իրա ազգի վերայ վատ բան է խօսում, նա արժանի չէ՛ էն ազգի անունը վրէն ունենալ և նա լինելը շատ վատ մարդ կլինի և ամէն խելօք մարդ նրան կնախատէ և չի սիրիլ։ Եթէ մեր ազգի օգուտի համար մէկը կամենայ մէկ բան շինել, ես պարտական եմ ամէն կարողութիւնովս նրան օգնել։ Ամենայն մարդ իրա հայրենիքին պարտական է էնպէս, ինչպէս որդին իրա հօրը։ և ամենայն մարդ պէտք է հետևի իրա որդիական պարտքը, ինչքան կարող է, հատուցանել։ Այս կ'խնդրեմ իմ վարժապետս, որ երբեմն երբեմն ինձ պատմի իմ հայրենեաց պատմութիւնը, և երբ որ ես հայոց դրաբառ լեզուն լաւ կ'սովրեմ, էն ժամանակը կ'կարդամ մեր հայոց ազգի պատմութիւնը։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ.

Ա. Ալենիքին Մանկունք.

Սուրվանը և Նիկոլայը, երբ որ ուսումնարանից դուրս էին գալիս, սկսում էին անկարգ վազել քուչումը, բարձր ձայնով կանչել և շատ անկարգ բաներ անել, երբոր տեսնում էին, թէ վարժապետը էն տեղ չէ։ Ինչպէս ուսումնարանից դուրս էին գալիս քուչա, էն սհաթին գլիժ մարդու նման սկսում էին վազել, մէկ մէկու վրա քար և ցեխ գէռել։ Դրէթ անձրև էր գալիս նրանք երբէք ցամաք տեղերից չէին անցկենում, այլ մնում էին ցեխերու մէջ և մէկ մէկու վերայ ցեխոտ ջուր էին ցանում։ Դրէթ Ճանապարհին պատահէր նրանց հաւ կամ բադ կամ ուրիշ անասուն, նրանք սկսում էին քշելով տանել, քարերը էին գցում նրանց վրա և իրանք ուրախանում էին, որ ինչքան կարողացան, տանջեցին խեղճ անասունին։ —

Մէկ օր, երբ նրանք էսպէս վատ վատ բաներ էին անում քուչումը, մէկ ծեր մարդ էն տեղից անցկենալուց, նրանց յանդիմանեց (կռիւ արաւ) և ասաւ։։։ ամօթ է ձեզ հաւաբը, ամաչեցէք, մեծ ամօթ է, էդպէս վատ բաներ անել էն մանկանց, որք գնում են ուսումնարանից, որտեղ նրանք շատ լաւ լաւ բաներ են լսել։ Բայց էն վատ տղերքը ամենևին ծեր մարդի խօսքին ականջ չդրին և գոռալով վազեցին։ —

Էն տղերքի այսպիսի վատ վարքը շատ չհաւանեց ծերը, և կարելի՞ է որ խելօք մարդը հաւանի այսպիսի բանին։ Ինչ որ խելօք մարդիքը չեն հաւանում, էն անվայելուչ է։ Դա կ'հետևիմ ինձ էնպէս պահել միշտ, որ խելօք մարդիքը ուրախութենով մտիկ տան իմ վարքին։

Բ. Սրտի ուրախութիւն.

Յովսէփը և Պետրոսը մէկ օր դուրս եկան իրանց տանից և գնացին մանգալու։ Ճանապարհին անց էին կե-

նում մէկ պարտիզն (բաղն) մօտից, որի դուռները բաց էին։ Ալանք մտան պարտէզը և տեսան որ մէկ քանի խնձորի ծառեր էնքան շատ խնձոր ունին, որ ծառի ճիւղերը ծանրութենից կռացել են։ Տէս, Յովսէփ, ասաւ Պետրոսը, մենք էս տեղ կարող ենք ինչ քան ուզենանք ուտել. էս տեղ ո՛չ ոք չի երևում. ա՛յի շուտով մէկ ճիւղը կոտրենք և փախչենք։ Ոչ, պատասխան տուաւ Յովսէփը, մենք էդ բանը չէ՛ պէտք անենք. խնձորները մերը չեն, ուրիշներինն են։— Ի՞նչ, ի՞նչ կայ, ասաւ Պետրոսը. պարտէզն տէրը իսկի չի կարող իմանալ, թէ մենք մէկ քանի խնձորներ ենք կտրել. նա էնքան շատ ունի, որ չի կարելի համարել։ — Ճշմարիտ է, ասաւ Յովսէփը, բայց էլի պէտք է չանենք էդ բանը, էնդուր համար, որ թաքուն վերառնելը ուրիշի բանը, թէ և շատ փոքր բան լինի, գողութիւն կլինի։ Մի թէ մոռացել ես ինչ ասաւ մեր հայրը, երբոր պատմում էր էն գողի պատմութիւնը, որ մեր տան առաջից տանում էին շղթայով (պնջելով) կապած։ Ի՞նչ ասաւ, հարցրուց Պետրոսը։ Ա՛յ ասաւ, թէ փոքրով սկսում է, մեծով վերջանում է։ — Պետրոսը սկսաւ խորը միտք անել և վերջը ասաց. դու ճշմարիտ ես ասում, սիրելի՛ Յովսէփ. գնանք էս տեղից։ Պետրոսը ուզում էր վատ բան անել, այ՛ ուզում էր ուրիշի խնձորները ուտել։ Ինչպէս լաւ եղաւ, որ Յովսէփը չ'թողեց նրան էդ բանը անել։

Դ. Ապ սոլորոնի։

Քանի որ Մակարը իրա ծնողաց մօտ էր, ամէն երեկոյ ինչպէս սկսում էր մթնել, գնում էր քնելու, կամ նստած տեղը քնում էր, և շատ դժուար էր լինում նրան զարթուցնել։ Շատ անգամ մայրը հարկադրւում պղտիկ տղի նման նրա շորերը հանում էր և տանում էր իրան տեղը պառկեցնելու, էնդուր համար, որ հնարը չէր լինում նրան զարթուցնել։ Ա՛յ էնքան երկար էր քնում մինչև որ առաւօտը անց էր կենում. իսկ ամառը երբոր արեգակը լաւ բարձրացած էր լինում, նա դեռ տեղերումը պառկած էր լինում։ Մայրը շատ անգամ խրատում էր

նրան, որ էդ սովորութիւնը թողնի, էն պատճառի որ միշտ չէ կարող էդպէս կենալ։ Այս խորհուրդ էր տալիս նրան, իրիկունները, երբ որ սկսում է քունը տանել, մանդալ տան մէջ, իսկ առաւօտը, երբ որ նրան զարթացնում են, կամ երբոր ինքը զարթի, էն բոպէին վեր կենայ տեղից։ Բայց Մակարը էդ խրատները չէր կատարում, և մնաց իրա վատ սովորութեան մէջ։ Երբոր Մակարը 14 տարեկան եղաւ, ծնողքը նրան տուին աշակերտ հայ թխողի մօտ։ Այս հայ թխողը հրամայեց Մակարին, որ իրիկունները մինչև 10 սհաթը չպառկի քնելու, և զանազան ծառայութիւններ անի, իսկ առաւօտը ինչպէս ամառը էնպէս էլ ձմեռը վերկենայ հինգ սահաթին։ Բայց էս անկարելի բան էր վատ սովորած Մակարի համար. և որովհետև հինգի հրաման չունէր վաղ պառկելու, էնդուր համար միշտ թմբում էր բան անելու ժամանակը, և շատ անգամ կանգնած տեղը, վեր էր ընկնում և գլուխը ջարդում էր։ Հայ թխողը շատ անգամ պատժում էր նրան էսպիսի ծուլութեան համար, բայց ոչինչ չօգնեց։ Մէկ ամսից յետոյ վարպետը, որին տուած էր նա արհեստ սովորելու, նրան յետ ուղարկեց տուն և ասաց, որ էլ նրան պահել չէ կարող, էնդուր համար, որ նա ոչինչ բանի պէտքական չէ։ Վերջնել Մակարը իսկի մէկ ժամանակ լաւ և ընդունակ արհեստաւոր չդարձաւ։ Դասպէս դժուար է վատ սովորութիւնը թողնել։

Դ. Փոքրիկ Գողը։

Աղլայի որդիքը տեսան, որ իրանց դրացի (Հարեւանի) Էնի բակումը երկու տանձի ծառեր կան լաւ լաւ պտուղներով։ Նրանք վեր ելան պատի վրա և մէկ քանի տանձ կտրեցին։ (Դ բանին ինչ կասեն)։ Հարեւանը իմացաւ նրանց արած գողութիւնը և մէկ երեկոյ թախս կոյաւ բակումը, որ գողին բռնի։ Մէկ քանի բոպէից յետոյ տեսաւ, որ Աղլայի տղերքը վեր ելան պատի մէջայ, վախենալով չորս կողմը մոտիկ արին և որովհետև ոչ ոքի չտեսան, խիզոն նեբրև եկան, և վազեցին ծառերի մօտ, և կտրեցին տանձեր։ Երբոր ուզում էին յետ դառնալ տան-

ձերը ձեռքերին, Յոնը դուրս եկաւ։ Ի՞նչ ամօթով և վախով կանգնած ծնայնին փողերը Յոնի առաջին։ Ի՞նչպէս խնդրում էին նրանք Յոնից, որ նրանք նրանց եդ վատ գործը, և իրանց հօրը գանգատ չանի։ Յոնը նրանց նրանց ենդուր համար, որ նրանք խօստացան միւս անգամ էս բանը չանել։ Այց էս վատ տղերքը իրանց խօստմունքը չկատարեցին։ Դէկ քանի շաբաթ անցաւ, և Յոնը տեսաւ որ բոլոր իրա հասած խաղողները քաղած են։ Ն՞ն ժամանակը նա գնաց իրան հարևան Նղնայի մօտ և խնդրեց նրանից, որ իրա տղերքին պատժէ երկու անգամ սրած գողութեան համար։ Տղերքը սկսան երդում անել, թէ խաղող չեն գողացել և հայրը հաւատաց նրանց։ Յոնը գնաց նրանց տանից սիրտը կոտրած և գնալուց առաւ. ո՛վ տղերքը, դուք շատ տարաբախտ կլինիք աշխարհի մէջ։ Ն՞ս խօսքը (մարգարէութիւնը) կատարեցաւ։ Պզտիկ գողերը իրանց վատ սովորութիւնը չթողին, վերջը խաբեբայ մարդիկ դարձան, և իրանց կեանքը թշուառութիւնով վերջացրին։—

Ե. Յոհաննէս Հրցնեէը։

Պաբրիէլի ծնողքը բաւական հարուստ էին և ենդուր համար նա ենպիսի բաներ ունէր, որ ուրիշ տղերքը չունէին։ Շատ անգամ ծնողքը տանում էին նրան իրանց հետ զբօսանք անելու (մանգալու) կամ բարեկամների տուն, որ նա ուրախ ժամանակ անցնէ։ Ն՞թէ էն քաղաքումը մէկ նոր բան լինէր, զորօրինակ. բերած լինէին մեծ մեծ չտեսած անասուններ, կամ տիկիններին տեսարան, կամ սաղ ապրող լայլն, ծնողքը տանում էին Պաբրիէլին, որ նա տեսնի կամ լսի այնպիսի նոր բաներ։ Ն՞րանք յոյս ունէին, թէ նա ուսումնարանումը աւելի կհետևի, որ իրան աշխատութիւնովը և մտադրութիւնովը ծնողաց պարտքը վճարէ նրանց այսպիսի լաւութիւնների համար։ Այց անմիտ Պաբրիէլը նրանց յոյսը չկատարեց։ Ն՞ա անչափ սիրեց խաղալը և միշտ հետևում էր աշխատանքից հեռանալ կամ փախչիլ։ Ն՞կամոյ (չուզելով) էր գնում նա ուսումնարան և ենդուր համար երկար ժամանակ քուչէքումը թրև էր գա-

լիս պարապ մինչև ուսումնարան հասնելը, և ուսումի ժամանակն էլ դուրս էր գնում բակից և քուչի դրան մոտ խաղում էր իրա նման ծոյլ տղերանց հետ։ Թէպէտ ծնողքը այս բանները գիտէին, բայց Գաբրիէլը միշտ զանազան պատճառներ էր տալիս և միշտ խոստանում էր էլ չանել. իրա դասերը որ նա պէտք էր տանը պատրաստէր, կամ իսկի չէր սերտում, և կամ սերտում էր այնքան անկատար, որ վարժապետը միշտ անբաւական էր նրանից։ Գլա մէնակ սիրում էր խաղալը և մանգալը. սաղ սահաթներով քուչեքումը վազում էր շունների ետևից, կանգնած մտիկ էր անում (թամաշայ էր անում) զինվորների (սողդաթների) վարժութեանը, և կամ պարապ տեղը այս կողմը այն կողմը մտիկ տալով։ Դէթ քուչումը մէկ կամ երկու լինէր կամ խառվութիւն, յատուկ կարելի էր իմանալ, թէ Գաբրիէլը էն տեղ կլինի։ Շատ անգամ ուսուցիչը նրան նախատում էր և ասում էր, թէ քո ժամանակը քեզանից գողանում ես, էնդուր համար որ յիմարութեամբ կորցնում ես նրան, և քո ուսման և աշխատանքի համար նշանակած սահաթները գործ ես ածում զբօսանքի կամ պարապորտութեան մէջ։ Գաբրիէլը տարիքով մեծացաւ, բայց տարիքի հետ չաւելացան նրա գիտութիւնը և խելքը, և վարժապետի մարգարէութիւնը, թէ նա երբէք բանի պէտքական մարդ չի դառնալ, կատարվեցաւ։—

Ղ. Փող գտնողը։

Աեսրոպը իրա մանկանոյը պզտիկուց սովորցրել էր իրանց աշխատանքով փող հաւաքել։ Տօների օրերը և ամէն ուսումից պարապ ժամանակը նրա աղջիկները բաներ էին կարում կամ գործում և հայրը առնում էր փողով նրանցից նրանց կարածները կամ գործածները։ Գլա տղերքը փայտից կամ թուղթից զանազան բաներ էին շինում և Աեսրոպը նրանցից էլ առնում էր շինած բաները եթէ լաւ և իստակ էին լինում շինած։ Գնդակ բաներով մանկունքը միշտ իրանց համար փող ունէին և կարող էին մնթել ինչպէս իրանց սիրտը ուզէր. բայց հայրը միշտ խորհուրդ էր տալի նրանց փողը խարջել օգուտով և պահելով։ Ա-

ջիամը և Ալեքսէյը, պղտիկ մանկունքը Մակարի, լսում էին իրանց հօր խրատը և հաւաքած փողով առնում էին իրանց համար զանազան հարկաւոր բաներ, զրօրինակ, թուղթ, գրիչ, մատիտ, գրիչ կտրելու դանակ և միրատ։ Ինչպէս մեծ ուրախութիւն էր լինում նրանց համար, երբ որ նրանք իրանց աշխատանքով փող էին ստանում և ինչպէս ուրախութենով էին մոխկ անում էն բաներին, որ առնում էին իրանց փողով. բայց Մակարի մեծ տղան Տիգրանը լաւ չէր պահում իրա փողերը և բանայնել չէր իմանում։ Ամէն տեսած բանը և ամէն ինչ որ առաջն տեսնելումը հաւանում էր, ուզում էր առնել. հնդուր համար շատ անդամ առնում էր հնպէս բաներ, որ էն ժամանակը նրան հարկաւոր չէին, կամ թէ իսկի պէտքական չէին։ Զրօրինակ. նա ունէր մէկ հատ լաւ գրիչ կտրելու դանակ, բայց եթէ տեսնում էր մէկ ուրիշ դանակ աւելի լաւ կոթով, էն պահանջին առնում էր, և ինչ որ ուզում էին, տալիս էր, և էս պատճառովս նա միշտ ուրիշներից թանկ էր առնում։ Իսկ երբ պէտք էր լինում առնել շատ հարկաւոր բան, էն ժամանակը նա փող չէր ունենում և հարկադրեալ պարտքի էր առնում աղբերներից կամ քուրերից։ Վերջը հայրը սատանի հրամայեց նրանց, որ Տիգրանին պարտքի փող չտան։ Էն ժամանակը նա խնդրում էր իրա հօրից կամ մօրից, որ նրան փող բաշխեն. բայց միշտ պատասխան էր ստանում նրանցից, թէ սովորիր պահելով բանեցնել փողերդ, և մի առնիր երբէք անօգուտ կամ անպէտք բաներ. եթէ էդպէս կանես, քեզանից խսկի չէ պակասիլ քեզ հարկաւոր բանը։—

Է. Բարեգործ տղայ։

Մոսկով քաղաքի մօտումը անցեալ տարի մէկ տաղ գիւղ երևեցաւ, ինդուր համար որ քսանի սաստկութիւնից կրակը պատում էր ամէն տները չորս կողմից և գեղացիները չէին կարանում մէկ մէկու օգնել։ Աւելի քան ութսուն մարդ, որոնց մէջ կային հիւանդներ, ծերեր, կանայք, մանկունք և աղքատ մշակներ, մէկ քանի սահաթումը զրկվեցան իրանց տներից, հագուստից և ամէն տարբուստից։ Ամենապէս էր

տեսնելը էս ողորմելի մարդկանցը իրանց աղքատ և հիւանդ
տղերքով, որք վերատանում էին ցուրտից, (Ինդուր որ էս կրա-
կը պատահեցաւ աշունքի վերջին), որք անբում էին, լաց
էին լինում, էս կողմը էն կողմը էին ընկնում և իրանց
համար կենալու տեղ էին փնտռում։ Էն տեղի բարեգործ
քահանան, որ ինքն էլ բոլոր իրա ունեցածը կորցրել էր,
չէր միաք անում իրա դլուխը ազատելու համար և շտապում
էր օգնել ողորմելի մարդիկներին, որք բոլոր նրա չորս կողմը
պատած տնքում էին և լաց էին լինում։ Ինդուր հա-
մար նա գնաց մանեկաւ մտիկ դեղերումը և քարոզելով
հետևեցաւ էն ողորմելի մարդկերանցը տեղաւորել որոր-
մած մարդիկերի տուներումը. ամէն տեղ նա հաւաքում
էր փող, հաց, շոր, և լրագրներումը (դազէթներումը)
տպեց այս դարհուրելի կրակի պատմութիւնը։ Իրա աշ-
խատանքը և հետևութիւնը դարդուկ չանցկացան. ամէն
տեղերից սկսան ուղարկել նրա մօտ օգնութիւն փողով,
հացով և շորերով և էս պատուելի քահանան բաժանում
էր ողորմելի մարդկերանցը ուրախութենով, արդարութե-
նով և զգուշութենով։ Դ ժամանակը եկաւ նրա տուն
մօտիկ դիւղից մէկ պզտիկ տղայ։ Ախենալով մտաւ նա
քահանայի տունը, և ասաւ. ես մէկ խնդիրք ունիմ ձեզ-
ռանից, տէր տէր, եթէ դուք չէք բարկանալ։ Որա սիրելի,
պատասխան տուաւ բաղցրութեամբ քահանան. ի՞նչ կա-
ցիմ ես անել քեզ համար. ես պատրաստ եմ։ Այ. դուք
չէ՞ պէտք ինձ օգնէք, ասաց պզտիկ տղան, ես միայն խնդ-
րում եմ, որ դուք էս փողը և էս հին շորերը վերս առ-
նէք ինձանից ողորմելի այրվածների համար։ Շնորհիս է,
թէպէտ էս շատ փոքր բան է, բայց ես աւելի ոչինչ չու-
նիմ, ես շատ կ'ցանկանայի մէկ օգուտ բան անել մեր ողորմե-
լի այրվածների համար. ես շատ ցաւում եմ նրանց համար
իմ քոյրս, որ ամենեին ո՛չինչ բանով չի կարող օգնել,
ասում էր ինձ, որ ես այս փոքր բանով ձեզ մօտ չգամ.
բայց ես չուզեցի իմ միտքս փոխել, եկել եմ էս տեղ և
խնդրում եմ վերս առնէք այս փոքր ընծայաբերութիւնս։
Դու շատ լաւ ես արել, սիրելի՛ որդի իմ, պատասխան
տվեց քահանան, և քաղցր արտասուքը վազեցին աչքերից։
Ամէն տուած բանը, ինչ որ խստակ սրտով է տրվում,

իրա գինը ունի. ուրեմն քունն էլ գին ունի. մի կորցնիր երբէք քո այդ ալնիւ զդացմունքը. հեռուէ լաւութիւն անել ինչ քան կարող ես. քո հոգին միշտ կուրախանայ և Աստուած քեզի կը վարձատրէ. —

Ը. Արդով Ա խոսակ էնողը պղայ։

Սիմոնի ծնողքը պատվաւոր և խելօք էին։ Գրանց տունը թէպէտ փոքր էր, բայց ամէն բանը կսրդով էր պահած և խոտակ. էնդուր համար որ Սիմոնի մայրը չէր սիրում որ տան բաները էս կողմը էն կողմը ցրուած լինին և գետնի (պօլի) վրա աղը լինի կամ ուրիշ կեղտոտ բան։ Ամուսնը ամէն բանից առաջ նա աւելում էր իրա փոքրիկ տունը, կարգում էր կոլինքը և ուրիշ բաները և պատուհանները և դուռը բաց էր անում, որ տան օդը խոտակվի։ Կարելի էր որ Սիմոնը անկարգ մեծանար և խոտակութիւն չսիրէր, երբոր մայրը նրան բարի օրինակ էր ցոյց տալիս։ Արանից երևում է ինչքան հարկաւոր բան է, որ մանկունքը պղտիկուց սովորեն կարգին և խոտակ կենալ։ Օրօրինակ. Սիմոնը երբէք չէր կամենալ որ ուսումնարան գնայ առանց մազերը սանդրելու, ուրիշ անկարգ տղերքի պէս. երբէք չէր թողնիլ որ ցեխոտ շեքմէքը (կոշիկները) մնան սաղ օր առանց սրբելու. կամ թանաքով կեղտոտած ձեռքերը քսել իրա շորերին, ինչպէս անում են շատ անկարգ տղերք։ Նա միշտ գնում էր ուսումնարան մազերը սանդրած և ձեռքերը խոտակ լուացած. նրա հագուստը միշտ լինում էր խոտակ և թափ տուած, կոշիկները խոտակ սրբած. իսկ նրա գրքերի մէջ երբէք չէր կարելի տեսնել մէկ թանաքի կէտ կամ խաղ։ Նա երբէք իրա գդակը չէր դնում սեղանի վերայ և թանաքը բանացնելուց շատ զգոյշ էր լինում, նրա քթի աղուխը միշտ իրա մօտ էր լինում։ Այս խոտակութիւն և կարգ սիրող և պահպանող Սիմոնը ուրախութիւն էր իրա ծնողաց և վարժապետների համար։—

Թ. Պոռիսո։

Անդրէասի ծնողքը տվին նրան մէկ շատ հարկաւոր նամակ (բարեւագիր) որ տանի փոստը գցի։ Ճանապարհին պա-

տահեցաւ նոս Գէորգին և ուրիշ տղերանց։ Գէորգը ամէն դարդակ բանի համար կռիվ էր անում, և մանաւանդ Անդրէասի հետ, որ ինքն էլ բարկացող բնութիւն ունէր։ Այս անգամին էլ սկսան նրանք կռիվ անել իրարու հետ, ենդուր համար, որ ո՛չ մէկը չէր ուզում միւսին ճանապարհ տալ որ անցկենայ։ Կռիւ անելու ժամանակը Անդրէասը վեր դցաւ նամակը, ոտքով կոխեց վրան և ենպէս կեղտոտեց, որ վրայի գրածը չէր կարթայվել և ծրարը պատռեցաւ։ Ի՞նչ անի հիմիկ։ Նրթէ տուն գնայ և բոլոր պատահածը պատմէ, նրան կպատժեն, ենդուր համար, որ նրա հայրը շատ խիստ մարդ էր, և մանաւանդ այս անգամին յատուկ ասել էր նրան, թէ էս գիրը լաւ տար փոշտը, սա ինձ համար շատ հարկաւոր գիր է։ Անդրէասը մտքումը դրաւ մէկ յիսմար բան, որ սուտ խօսելով այս փորձանքից ազատվի։ և ենդուր համար, երբոր հայրը հարցրուց գրի համար, նա համարձակ պատասխան տուաւ, թէ գիրը ուղարկեց։ Բայց էդ սուտը ասելու ժամանակը նրա սիրտը դողաց։ Նրը որ տասը օրը անցաւ և գրի պատասխանը չեկաւ, Անդրէասի հայրը ինքը գնաց փոշտը իմանալ, թէ գիրը յատուկ ուղարկած է, թէ չէ։ Ինչպէս նա զարմացաւ և սիրտը դող բռնեց, երբ որ փոշտի դրքերից իմացաւ, թէ գիրը ամենևին բերած չէ։ Անդրէասը ակամայ հարկադրվեցաւ ասել, թէ ինչ պատահեցաւ գրին։ Այս երկար ժամանակ չէր ուզում ճշմարիտը ասել, բայց յետոյ, երբ որ հայրը խստացաւ ներել նրան; եթէ բոլորը ճշմարիտ կասի, էն ժամանակը նա բոլորը ասաւ։ Ինչքան փոշտմանն էր Անդրէասը այդ սուտ խօսելու համար, երբոր իմացաւ, թէ եթէ էն ժամանակը զար տուն և ճշմարիտը ասէր հօրը; կապատէր նրան մեծ կորուստից և իրա սիրտը մեծ նեղութենից, ենդուր համար, որ էն ժամանակը կարելի էր նոր գիր գրել։ Այս բանից յետոյ նա հաստատ դրեց իրա մտքումը միւսանդամ իսկի սուտ չասել, աւելի լաւ համարելով ստանալ իրան արժանի պատիժը, քան թէ սուտ ասելով ազատ տալ։ Բայց շատ ժամանակ քաշեց, որ հայրը նրան չէր հաւատում, և էս բանը շատ դառն էր նրա համար։—

Ժ. ՈնՀ որ Երան Համբոզ Մինուամ Է Փոքշանոքի Մեջ, Նա Էն Փոքշանոքից Ի՛Հրաշք։

Անբայելը էր որդի աղքատ ծնողաց։ Նրա մայրը մեռաւ էն ժամանակը երբ որ նա երեք տարեկան էր։ Հայրը բոլոր օրը դնում էր ծառայութիւն անելու և էն պատճառաւ Անբայելը կ'մնար անտերունչ և բոլորովին կ'վատանար, եթէ մէկ հարուստ և բարեդործ մարդ չ'վերառնէր նրան իրա տուն և չ'պահէր իրա որդւոյ պէս։ Բայց Անբայելը շատ չէր ուրախացնում իրա երկրորդ ծնողին. նա անհնազանդ էր, ծոյլ էր և անհանդիստ։ Շատ անգամ բարերարը խրատում էր նրան և երբեմն պատժում էր. Անբայելը ուղղվում էր, բայց շատ կարճ ժամանակ։ Ամենից աւելի վատանդաւոր էր նրա անզգուշութիւնը. նրա համար ոչ մէկ ծառ բարձր չէր, ամենի վերայ համարձակ վեր էր ելնում, իրա քաջութիւնը ուրիշ տղերքին ցոյց տալու համար՝ ամէն բարձր տեղից համարձակ թռչում էր նեերքեվ։ Այրջալէս էդ անզգուշութիւնը եղաւ նրա մահի պատճառը։ Լսեցէք էս զարհուրելի պատմութիւնը և հետևեցէք որ սա՞ ձեզ համար զգուշութեան օրինակ դառնայ։ Մէկ օր Անբայելը խաղ էր անում ուրիշ տղերքի հետ. նրանք շատ վաղեցին բարձր սանդուխտից վերեվ նեերքեվ. վերջը Անբայելը ուզեց ելնի էն բանը անել, որ իրան ոստիկ արդելած էր և որ նա շատ անգամ տրել էր. ցի կախընկած սանդուխտի թևերի վերայ, վերևից նեերքեվ դալ։ Ո՛հ, երանի՞ թէ էդ բոպէին նա միտքը բերեր իրա բարերարի և երկրորդ հօր խրատները, որ նրան միշտ տրդելում էր էդ բանը։ Բայց տաքացած խաղալումը նա միտքը չ'բերաւ ո՛չ ինչ, կախ ընկաւ սանդուխտի վայտի վրա, յանկարծ մէկ կողմը ծռվեցաւ, վեր ընկաւ բարձրից, գլուխը ջարդվեցաւ և էն բոպէին մեռաւ։ —

Ժա. Ճշմարիտ պատմ։

Կոստանդինը խաղում էր իրանց դուռն մօտ։ Մէկ դրացի կոնչեց նրան և խնդրեց, որ նա ասպատ փոշտի գալուն, և ինչպէս հեռուից տեսնէ, խէրոյն իմաց տայ նրան։ Կոստան-

գինը մեծ ուրախութեամբ յանձն առաւ կատարել էս խնդիրքը, ենդուր համար որ բարեսիրտ տղայ էր։ Այս խոյն վազելով գնաց մինչև քաղաքին դուռը և մեկ բարձր տեղ կանգնեցաւ, որ հեռու տեսնի փոշի ճանապարհը։ Ակս սհաթ աւել սպասեց Կոստանդինը։ Այն ժամանակը ենտեղից անց էր կենում Պրիդորը. սա ինչպես տեսաւ Կոստանդինին, ձայն տուաց՝ արի գնանք միասին. էն տեղ մեր ընկերները խաղում են։ Կոստանդինը պատասխան տուաւ, թէ ամենևին չեմ կարող գնալ քեզ հետ, թէ՝ և սիրտս շատ ուզում է. ենդուր համար, որ խօստացել եմ դրա-ձիին էստեղ սպասել փոշի դալուն, որ նրան խնաց տամ։ Մինչև երբ պէտք է մնաս էստեղ արեգակի տակումը, հարցրաւ Պրիդորը. քեզ էդ խակի հարկաւոր չէ, և բաց յայնմանէ գու բաւական սպասել ես, արի գնանք։ Բայց Կոստանդինը հաստատ մնաց իրա խօսքի վերայ, թէ և Պրիդորը շատ խնդրեց և վերջը ծիծաղեցաւ էլ նրա վերայ։ Կոստանդինը մաքին էր պահել երան հօր խօսքերը, որ երան միշտ ասում էր, թէ Ճշմարիտ մարդը պէտք է իրա տուած խօսքը հաստատ պահէ և կատարէ։ Թէպէտ նա էլի սաղ կէս սհաթ սպասեց էն տեղ, և արեգակը նրան շատ նեղացրաց, բայց ինչ մեծ ուրախութիւն եղաւ նորա համար, երբոր նա հեռուից տեսաւ փոշոտը և վազելով գնաց խնաց տվաւ դրացին։ Դուք ի՞նչ կանեիք եթէ ձեզ էլ պատահէր այսպիսի բան։

Ժբ. Ով որ բարի խորհուրդին ականջ չէ դնել, նա ի՛պաղծէ։

Մեկ շատ յուրտ օր Մովսէսը ուսումնարանից գնում էր տուն։ Երկու օր էր, որ շատ յուրտ էր, և նա ուրիշ տղերքի հետ անցնելուց տեսաւ որ գետի ջուրը սառել է։ Այդ՝ էր, տասաւ նա ընկերներին, եկէք գնանք սառույցի վրա։ Ընկերքը էն սհաթին համաձայնեցան և սկսան նեղքեվ գնալ նեղ ճանապարհով, որ տանում էր գետի մօտ։ Այն ժամանակը ենտեղից անց էր կենում մեկ ծեր մարդ, որ ասաւ նրանց՝ տղերք, տղերք, ո՞ւր էք գնում, մի՛ գնաք սառույցի վերայ, նա գետ էս բաւական հաստ չէ և ձեզ չէ կարող բռնել, կկոտրվի և դուք ջուրը կթափվիք։ Այս լսե-

լով ամէնքը կանգնեցան և վախեցան առաջ գնալ. մինակ Մովսէսը ականջ չդրեց ծերի խօսքերին և գնաց սառուցի վրայ։ Կա ծիծաղում էր միւս տղերքի վրայ և ասում էր՝ ամօթ է ձեզ, ամօթ, վախկոտներ, դուք սիրտ չունէք. ի՞նչ կայ էս տեղ վախենալու։ Բայց դեռ ևս երբեք ոտք չէր փոխել սառուցի վերայ, յանկարծ սառուցը կոտրվեցաւ և նա ընկաւ ջրի մէջ մինչև բերանը։ Ամէնքը գոռալով փախան էն տեղից և Մովսէսը կըլսեղվէր, եթէ էս ձայները լսելով չվազէր օգնելու և չաղատէր նրան այն ծեր մարդը, որ բարեսիրտ լինելու պատճառաւ, չէր հեռացել էն տեղից։ Մովսէսը սաստիկ դողում էր, և կտաւի պէս դէմքը փախած էր երեսից, և չէր կարանում խօսել։ Թէպէտ էն սհաթին օգնեցին նրան և տաքացրին, բայց նա շատ հիւանդացաւ և երբեք շաբաթ մնաց կողմնորոշումը պառկած։ Երբ որ նա առողջացաւ, հայրը ասաց նրան, մնրիդ պահէ էս կանոնը՝ ով որ բարի խորհուրդը չի լսել, նա կ՝պատժվի։ Բայց եթէ էդ փորձութիւնը չ՝պատահէր, սառուցը չ՝կոտրվէր և Մովսէսը ջուրը չընկնէր, պէտք էր որ միւս տղերքը ափսոսէին, թէ ինչի լսեցին ծեր մարդի խօսքը։—

Ժգ. Կարի՛ օրվայ քաջեկամ։

Աւէրսանդրը յետ եկաւ ուսումնարանից և ասաց իրա մօրը՝ մայր իմ, մեր խեղճ Նիկոլայը, որ ոչ հայր ունի ոչ մայր, շատ հիւանդ է. և էն մարդիկը, որ նրան վեր են առել իրանց տանը պահելու, թողել են նրան, մէկ սենեակի (օթախի) մէջ և ո՛չ տէրութիւն են անում նրան, ո՛չ հոգս են քաշում։ Շատ մեղքս գալիս է խեղճ Նիկոլը, և ես յանկանում եմ շուտ շուտ գնալ նրան տեսնելու, եթէ դուք հրաման կտաք։ Շա՛տ լաւ, սիրելի՛ որդեակ, պատասխան տուաւ մայրը, պէտք է և լաւ բան է օգնել ընկերին կարիք ժամանակը. բայց զգոյշ կացիր, և առաջ իմացիր թէ ի՞նչպէս հիւանդութիւն է նրա հիւանդութիւնը, դիպչո՞ղ է, թէ չէ, որ դու էնքդ էլ վտանգի մէջ չընկնես։ Աղէքսանդրը էն բոլոր վայրեց, լմնցաւ և եկաւ յայտնեց մօրը, թէ Նիկոլայի հիւան-

գութիւնը դիպչող չէ։ Նա սկսաւ ամէն օր գնալ իրա հիւանդ ընկերի մօտ, նստում էր մէկ քանի սհաթ նրա կողքի մօտ, ինչ որ նրան պէտք էր լինում բերում էր և երբեմն գիշերն էլ մնում էր նրա մօտ մէկ քանի սահաթ։ Երբոր Նիկոլայը սկսաւ առողջանալ, Աղեքսանդրը կարդում էր նրան ուրախացնելու համար մէկ քանի երես լաւ գրքերից և բերում էր նրա համար զօրութիւն տուող կերակուրներ, որ նրա խնդիրքով եփում էր մայրը։ Մէկ օր Աղեքսանդրի ընկերներից մէկը ասաւ նրան՝ դու շատ յիմար տղայ ես, որ երկար նստում ես հիւանդ Նիկոլայի կողքի մօտ. ես ամենևին չեմ գնալ նրա մօտ։ Մինթէ քեզ համար մխիթարութիւն չէր լինիլ, պատասխան տուաւ Աղեքսանդրը, եթէ դու հիւանդ լինէիր, ամէնքը քեզ թողնէին և մէկ ընկերդ քեզ մխիթարէր, հոգս քաշէր քեզ համար և միշտ դաբ քեզ մօտ։ Դրէչ ժամանակից յետոյ Նիկոլը բոլորովին առողջացաւ և սրտանց շնորհակալ էր Աղեքսանդրից նրա արած օգնութեան համար։ Որչքան ես ուրախ կլինիմ, ասում էր նա, եթէ կարենայի իմ շնորհակալութիւնս քեզ յայտնել մէկ բանով, սիրելի՛ Աղեքսանդր, բայց ես աղքատ եմ և չեմ գիտում, թէ ինչ պէտք է անեմ քեզ համար։ Մէկ փոքր ժամանակից յետոյ, մէկ օր Աղեքսանդրը մտաւ իրա փոքր պարտէզը (բաղչան), որ ինքը իրա ձեռքով տնկել էր, կարդալ էր և պահում էր։ Որչքան զարմացաւ նա երբոր տեսաւ, թէ բոլոր անպիտան խոտերը քաղած են, մանր առուները (ջրանցքները) հաւասարած են և զանազան ծաղկունքներով պարտէզը լցրած է։ Նա չէր կարանում հասկանալ, թէ ես ինչպէս է եղեր, ինքնուր համար որ երեկ երեկոյ նա իրա պարտէզը էսպէս զարդարած չէր թողաւ։ Աւաջ նա կասածում էր, թէ իրա ծնողքն են արել էս բանը իրան ուրախացնելու համար, բայց հարցնելով տեսաւ, որ ոչ ծնողքը և ո՛չ ծառայքը ոչինչ չեն իմանում։ Վերջապէս Աղեքսանդրը իմացաւ մէկ հարևանից, թէ երախտագէտ (լաւութիւն չմոռացող) Նիկոլը առաւօտը շատ վաղ բերաւ և անկեց էս ծաղիկները։ Այս ժամանակվանից սկսած Աղեքսանդրը և Նիկոլայը հաստատ բարեկամ դարձան և իրանց կեանքն էլ չէին խնայում մէկ մէկու համար։ —

Ժդ. Կոնդակը։

Աբշակը միշտ կռվում էր իրա եղբօրների և ընկերների հետ։ Եթէ նրա պղտիկ քոյրը նրա մէկ բանին ձեռք էր տալիս, նա բարկանում էր, կռվում էր և շատ անդամ ծեծում էր նրան։ Երբոր նրան տանում էր ուսումնարան կամ ուսումնարանից բերում էր տուն, անդադար կռիւ էր անում նրան, երբեմն պատճառ բերելով, թէ շատ ծանր է գնում, երբեմն թէ շատ շուտ է գնում. շատ անդամ տանում էր անխնայ քաշելով, եթէ նա չէր ուզում գնալ նրա հետ։ Եթէ քոյրը նստում էր մէկ տեղ, Աբշակը նրան ասում էր՝ վեր կաց էս տեղից, ես եմ ուզում էստեղ նստել. և եթէ նա իրա կամքով չէր վերկենում, նա ծեծելով քշում էր նրան։ Դէպքերի բաները էլ անում էր նա ուսումնարանումը, և վերջապէս ինքան դղվեցրել էր ամենքին, որ ո՛չ ոք չէր ուզում նստել կռվարար Աբշակի մօտ։ Այս էս բաները իրա համար պարծանք էր համարում և պարծենալով ուրիշներին էլ պատմում էր, և մեծ յոյս ունէր, թէ ամենին կարող է յաղթել։ Ամենից աւելի տանջվում էին նրա ձեռքից մանր տղերքը կամ ուժ չունացողները, որք չէին կարանում նրան յաղթել. նա միշտ ծիծաղում էր նրանց վրա և շատ յիմարութիւններ էր անում. փողոցներումն էլ (քուչէքումը) շատ անգամ էդպիսի բաներ էր անում, բայց որովհետև էնտեղ պատահում էին իրանից աւելի ուժով տղերք, էնդուր համար նրա երեսը միշտ ջարդած էր լինում։ Մէկ օր էսպէս կռվի ժամանակը նրա գլխին մէկ տղայ էնպէս խփեց, որ նա երեք շաբաթ հիւանդ պառկեցաւ, և գլխի պատռածի տեղը մնաց բոլոր կեանքը։ Բայց էս փորձանքից էլ չհրատավեցաւ կռվասէր Աբշակը։ Երբոր նա մեծացաւ, մէկ օր սառոտի բարկացած կռվելու ժամանակը, էնպէս խփեց մէկ մարդու, որ սպանեց. էստուր համար նրան բռնեցին, պատժեցին և նա իրա բոլոր կեանքը անցուց Սիբիրումը ծանր մշակութեան մէջ։ Տեսէք թէ ի՞նչպէս վատ բաներ են դուրս գալի կռավասիրութիւնից և բարկութիւնից։

ԺԵ. Զոր պղերգ։

Մեկ ուսումնարանումը երկու տղեքը կային, որոց ծնողքը հոգս չէին քաշել նրանց վարքը ուղղելոյ համար, և էնդուր համար նրանք ուրախութիւն էին համարում ամէն բանը փչացնել և ամենին ձանձրացնել (բեզրեցնել)։ Աղանների և աթոռների վրա նրանք թաքուն փորում էին դանակով զանազան ձևեր, իրանց մօտ նստող աշակերտների տետրակները թանաքով կեղտոտում էին և նրանց գրչենները ջնջում էին կամ թաքցնում։ Փողոցներումը նրանք աւելի վատ բաներ էին անում։ Մերդ կամ պտուղ ծախողների սամանները դիտութեամբ շուռ էին տալիս կամ տան ետև թափկացած նրանց վրա քար և ցեխ էին գցում։ Երեկոյին երբ որ նրանք ման էին գալի փողոցներումը, մեծ վայտերով խփում էին պատուհաններին որ տան միջի լեռնողներին վախացնեն, կամ դրան փոքրիկ զանգակները քաշում էին և խփոյն փախչում էին։ Մեկ օր այսպիսի չարութիւն անելու ժամանակը նրանց բռնեցին և սաստիկ պատժեցին այն պատժով, որին նրանք վաղուց արժանի էին։

ԺԶ. Ամբաւոյն։

Մարտիրոսի ծնողքը շատ հարուստ էին և շատ բարեսիրտ։ և որովհետև Մարտիրոսից աւելի որդի չունէին, էնդուր համար նրա ամէն ուզածը կատարում էին, և նա ամէն բանը ունէր՝ լաւ շորեր, լաւ կերակուրներ և ամէն տեսակ խաղալիք։ Բայց Մարտիրոսին չէր կարելի ոչինչ բանով բաւականացնել։ Նա երբէք չէր ուրախանում ունացած բանի վրա, միշտ դտնում էր նրանց մէջ մեկ պակասութիւն և միշտ պահանջում էր աւելի լաւը։ Օրինակ, եթէ նրա համար կարում էին նոր շորեր, նա կամ կոճակները չէր հաւանում, կամ ասում էր թէ նեղ է կարած, կամ լայն է, կամ երկայն է, կամ կարճ է։ Եթէ ծնողաց հետ գնում էր մանդալու, անդադար դանդատ էր անում կամ շաքից, կամ ցրտից, կամ ասում էր, թէ շատ հեռու է ճանապարհը, և համարեա՝ թէ

ամէն բոլէ ասում էր՝ ա՞խ, երբ կհասանինք։ Իսկ եթէ գնում էին մէկ տեղ, նա կրկին չէր հաւանում էն տեղը և ասում էր որ ծնողքը տանեն նրան ուրիշ տեղ։ Այս պէս բաներով Արտիրոսը իրան անբաւականութեանով իրան էլ զրկում էր ուրախութենից, նեղանում էր և ուրիշներին էլ նեղացնում էր։ Այս համար ուրախութիւն չէար կենաց մէջ, և ո՞վ կուզէր ընկերութիւն անել այսպիսի անհաւան տղի հետ։ Էն պատճառաւ նա երբէք ուրախ սիրտ չունէր և երբէք չէր զուարճանում իրա ունեցած բանովը։ Կուզէին դուք էլ նրա նման լինել։—

ԺԷ. Ռոքեսիրա։

Զմերեայ մէկ սառուցեալ ցուրտ օր Արկարը և Էրտեմը անց էին կենում տաղից. Հանդարտ էին տեսան նրանք ձիւնի վրա պառկած մէկ անծանօթ մարդ, որ երևում էր թէ շատ խոր քնով քնած է։ Արկարի սիրտը ցաւեց նրա համար և հասկանալով, թէ նա կարող է սառչել էս տեղ, գնաց նրա մօտ և սկսաւ զարթացնել։ Շատ շարժեց ամենօթ մարդուն, բայց նա չզարթաւ։ Դու շատ երկար ժամանակ կշարժես դրան, ասաւ Էրտեմը ծիծաղելով։ դա չի զարթիլ, էնդուր համար, որ հարբած է. թո՛ղ դրան և գնանք, շատ ցո՛ւրտ է։— Ձէ՛, պատասխան տուաւ Արկարը, ես չեմ կարող սրան էսպէս թողնել, շատ կարելի որ էս խեղճ մարդը սառչի. թէ և սա հարբած էլ լինի, բայց էլի մարդ է, և էնպէս մարդ է, որին պէտք է մենք օգնենք։ Ինչ որ ձեռքից կգայ, ես ամէն բանը կանեմ, որ ազատեմ սրա կեանքը։— Ինչ կամենաս արա՛, ասաց բարկութեանով Էրտեմը. ես չեմ կանգնիլ էս տեղ և չեմ սառչիլ։ Այս ասելով նա գնաց։— Էն ժամանակը Արկարը պառկած մարդուն ծածկեց ձնով, էնդուր համար որ լսել էր, թէ ձիւնը տաքացնում է, և շուտով վազեց մօտիկ գիւղը, որ սայլ բերի։ Այս բաղդից պատահեցաւ մէկ բարեսիրտ գեղացի, որ գնում էր քաղաքից։ Այս օգնութեանով քիչ ժամանակի մէջ կիսամեռ մարդուն շունչի բերին և Արկարը ուրախ ուրախ վազեց իրա տունն։ Դուք ի՞նչ էք միտք անում Արկարի

վերայ. և ի՞նչ էք ասում Աբսեմի համար։ Սրանցից որի՞ն կուզէք աւելի նմանիլ։

Ժբ. Գրիգոր (Վարդապետ) աղջիկ։

Կատարինէի դայեակը (երեխայ պահող կնիկ) շատ սնոտիապաշտ էր, և շատ անգամ նրան պատմում էր սուտ պատմութիւններ ղարհուրելի տեսիլքների վրայ, և նա սոսկալի էր քնել հրաւոյ, և մենակ քնել չէր կարողանում. Խստութիւնից նա վախկոտ եղաւ։ Երբոր նրա տասն տարին լրացաւ, մի օր պատահեցաւ, որ նրանց տանը ամենքը հիւանդացան, և հայրը ուրիշ քաղաքումն էր։ Էնդուր համար Կատարինէին սկսեցին եղաւ մենակ քնել։ Նրա համար մեծ դժվարութիւն էր մանաւանդ էն ժամանակը երբոր մայրը չկամեցաւ որ նրա սենեակի (օթայքի) մէջ մնայ վառած մոմ, և մայրը կարծում էր, թէ Կատարինէն, որ այժմ մեծ աղջիկ էր, կարող է քնել մթնումը։ Նա շատ ցանկանում էր քնել հիւանդների մօտ, բայց մայրը չկամեցաւ, որովհետև հիւանդութիւնը կարող էր նրան էլ դիպչիլ։ Այս լինելով դնաց Կատարինէն իրա սենեակը, շուտով հանեց շորերը, պառկեցաւ և վախից ծածկեց դլուխը բարձի տակ։ Յամանակ առ ժամանակ հանում էր նա դլուխը բարձի տակից, որ շունչ քաշի և վախենալով մտիկ տայ, թէ ի՞նչ կայ տան մէջ։ Յանկարծ նրան թուեց, թէ դրան վրա մի կապտակ երկայն բան կայ կանգնած։ Օրհուրելով դլուխը փաթաթեց վերմակի (եօրղանի, լեհերի) մէջ և քրտինքը ծածկեց նրա բոլոր մարմինը։ Նա չկարաց երկար ժամանակ մնալ էնպէս և վերջապէս համարձակեցաւ դլուխը դուրս հանել։ բայց կրկին տեսաւ, որ սպիտակ բանը ոչ թէ միայն կանգնած է դրան մօտ, այլ և շարժվում է։ Էն ժամանակը սկսաւ Կատարինէն բարձը ձայնով դողալ և էն լոսկին մայրը մտաւ ներս։ — Ի՞նչ էլաւ քեզ, Կատարինէ, քնո՞ծ ես, թէ չէ։ Ա՛խ, մայրիկ իմ, մայրիկ իմ, մի կապտակ բան է։ — Դու լաւ դիտեմ, որ քո աչքին միշտ երևում են հրաշքներ, ասաւ մայրը։ Խելքդ դլուխդ հաւաքէ. ինչի՞ն ես վախենում։ —

Քննելով տեսան որ սպիտակ հրաշքը սպիտակ երեսը
սրբիչ է եղեր, որ կախ արած էր դրան վրա և լուսնեակի
շողքը ընկել էր վրէն։ Մայրը դրան մոտ կանգ.
նած ականջ է եղեր դնում, թէ Կատարինէն քնած է,
թէ չէ. և երբ նա դուռը բացել է, երեսսրբիչը սկսել էր
շարժիլ։ Կատարինէն ամաչեցաւ իրա երեխայական վախ-
կոտութենից, և էն ժամանակից յետ նրան միւսանգամ
հրաշքներ չէին երևում։

ԺԹ. Խորհրդոյ գուշակ։

Պահադը շատ հիւանդ էր և նրա մայրը երեք գիշեր
չէր քնած և նստած էր նրա կողմնքի մոտ։ Նրա տասն-
երկու տարեկան Մարիամ քոյրը վախանում էր, որ մայրը
այնքան անքուն մնալով ինքնել չհիւանդանայ, և էն պատ-
ճառաւ խնդրեց որ իրան հրաման տայ չորրորդ գիշերը
պահել հիւանդ եղբօրը։ բայց դորովագութ մայրը չէր կա-
մենում նրան այդ հրամանը տալ մէկ էն պատճառաւ, որ
Մարիամը ինքն էլ տկար էր, և երկրորդ էնդուր, որ վա-
խենում էր թէ նրա քունը չտանի և Պահադը չմնայ
առանց օգնականի։ Երբոր երեկոյ եղև հայրը հարկադրե-
ցաւ պառկել քնելու, էնդուր համար որ նրա աչքերը
դադրածութենից փակվում էին։ Թէպէտ Մարիամը
իրա մօր հրամանաւը պառկեց քնելու, սակայն սէրը և
հոգսը չթողին նրան քնելու։ Լսելով թէ մայրը խորը
քնի մէջն է, նա կամաց կամաց վերկացաւ տեղից, վեր
առաւ իրա ձեռագործը և նստաւ գետնի վրա հիւանդ
եղբօր կողմնքի մոտ։ Նա մեծ ուշադրութեամբ մտիկ էր
անում եղբօրը, և երբոր նա շարժում էր կամ բան էր
ուզում, նա իսկոյն կատարում էր ուզածը։ Ամսկէս
անցաւ համարեա՝ ողջ գիշերը և ի՞նչքան Մարիամը ու-
բախանում էր, որ կարաց իրա մօրը էն գիշերը հանգս-
տութիւն տալ։

Դա բանից յետոյ շատ ժամանակ չանցաւ մայրն էլ
հիւանդացաւ, և թէպէտ շուտով առողջացաւ, բայց շատ
տկար էր։ Դժգիշերը, Մարիամի մոտ, առաւ, եթէ հիւանդը
կարանայ ամէն օր քիչ քիչ գինի խմել, շուտով ուժի

կէաց։ Բայց այս խեղճ կնիկը ո՞ր տեղայ կարող էր գինի գտնել։ Սահագի հիւանդութիւնը նրան շատ թանկ նստեց։ Մարիամը լսեց, թէ իրանց կացած տանը, մէկ ուրիշ կենող, մարդ է մնում, որ կոտորած փայտերը տանի ստանում։ Նա խնդրեց որ իրան յանձնեն այդ գործը, և խոստացաւ կատարել ինչպէս պէտքն է։ Ղարս սհաթի չափ աշխատելուց յետոյ նա ստացաւ էնքան փող, որ կարող էր իրա մօրը համար քիչ գինի գնել։ Թէպէտ նա շատ դադրեցաւ այդ անասելը աշխատանքից, բայց երբ որ ստացաւ իրա վարձը, հնպէս շուտ վազեց որպէս թէ այն օրը ամենեւին աշխատանք չէր արել։ Ի՞նչքան ուրախանում էր նա, որ իրա ձեռաց աշխատանքով կարաց գնել իրա մօր համար այս զօրացուցիչ խմելիքը։ Իսկ մօր սիրտը այնքան շարժեցաւ Մարիամի այս որդիական սիրոյն վերայ, որ լաց էր լինում ուրախութենից։ Ա՞խ, էնչ լաւ կլինէր եթէ ամէն մանուկ այնպէս մտածէր, ինչպէս որ Մարիամը։

Լ. Ամենին հարցնել։

Գինեվաճառ Մելլերի կրպակից (դուքնից) դողացել էին շատ շիշերով զանազան գինիներ, և նա չէր կարանում գողը գտնել։ Մէկ օր նրա որդի Թոմասը եկաւ տուն շունչը կտրվելով և պատմեց, թէ յատուկը գիտէ, ով է դողացել գինիները կրպակից։ — Ո՞վ է, հարցրաւ հետաքրքիր հայրը։—Մեր փոքրիկ Սարգիսը։ Ինդուր համար, որ ես էս սհաթիս տեսի, որ նա երկու շիշ ձեռին վախենալով դուրս եկաւ կրպակից։ Փոքրիկ Սարգիսը երկար ժամանակ Մելլերի տանն էր էս բանից առաջ, բայց նորերումս դուրս էր եկել, և որովհետև նա ազքատ տղայ էր, վանորոյ Մելլերի տանը նրան օգնում էին։ Այս պատմառաւ Մելլերը շատ զարմացաւ երբոր լսեց թէ Սարգիսը նրա տունից բան է գողանում և երբէք չէր ուզում հաւատալ, բայց Թոմասը հնպէս հաւատացնում էր, մինչև որ հայրն էլ սկսաւ կարծիք տանել Սարգսի արարքի վրա։ Մելլերը կանչեց Սարգսին իրա մօտ, խորը մտիկ տուաւ նրա երեսին և հարցրուց՝ քու խղճմտանքը ի՞նչպէս է թէ չէ։ Այս

հարցնելու ժամանակը, կարծես թէ Սարգիսը խառնվեցաւ և կարմրեց։ Աշմարիտը պատասխան տուը, ասաւ Մելլերը։ Այս ամենևին չեմ խմանում, ասաւ Սարգիսը կապկապվելով, թէ ես ի՞նչ վատ բան եմ արել։—Բոլորը ակամայ մեղադրում է քեզ, ասաւ Մելլերը և բարկութեամբ մտիկ արաւ երեսին։ Էն օրը դու իմ կրպակումն եղեր ես թէ չէ։ Երկու շիշ գինի տարեր ես, թէ չէ։ Սարգիսը չկարաց չէ՛ ասել, բայց երբ նրան սկսան յայտնապէս մեղադրել, թէ նա գողացել է կրպակից երկու շիշ գինի, նա առանց վախի սկսաւ հաւատացնել, թէ մեղաւոր չէ, և յատուկ արդարացրուց գլուխը։ Այս մէկ մէկ պատմեց, թէ էն օրը տանում էր իրա մօր համար երկու շիշ գարեջուր և տարաւ գրեց կրպակումը, մինչև որ գնաց օգնելու իրա մէկ ընկերոջը տանել մեծ ծանր քթոց, որ նա չէր կարանում մենակ տանել։ Բայց երբոր նա յետ էր գալիս, մէկ անկարգ տղայ սկսաւ նրան ծաղր անել և էնքան ետևից վազեց, մինչև որ նա մտաւ կրպակը։ Կրպակից դուրս գալուց նա վախենալով մտիկ էր անում էս կողմը էն կողմը, որ տեսնի, թէ գուցէ էն ետևից եկող տղան մէկ տեղ թաքնված լինի։ Մելլերը հարցրուց էս բաները Սարգսի մօրից և յատուկ իմացաւ, թէ նա Աշմարիտ է ասել։ Էն ժամանակը նրա սիրտը շատ նեղացաւ, որ նա անմեղ և խստակ ծառայող Սարգսին մեղադրում էր այսպիսի վատ բանումը։ Էս անիրաւութիւնը մոռացնելու համար նա ընծայեց Սարգսին նոր շորեր, իսկ իրա որդուն խրատեց այսպէս՝ միւսանգամ զգոյշ կացիր, որ առանց բաւական պատճառի ո՛չ ոքի վրա վատ բան չասես, էնդուր համար որ դու ինքդ այժմ տեսար, թէ ինչպէս մարդուս աչքը խաբվում է։

Իա. Հեռադիտակ աղջիկ։

Գատալիան շատ հետաքրքիր աղջիկ էր և նրա ծնողքը շատ անդամ նրան պատժում էին էս սովորութեան համար։ Ինքն վաղորդումը լսում էր նա մէկ ձայն, էն տահթին վազում էր պատուհանի (փանջարի) մօտ տեսնել թէ ինչ են անում։ Մէկ օր նա էնպէս շտապով վազեց

որ գլուխը խփեց շուշին, կոտրեց և երեսը ջարդեց։ Փոքրոցներսումը էնքան շտապով էր վազում տեսնել, թէ ինչի՞ համար ժողովուրդը հաւաքված են մէկ տեղ, որ ձեռքից կորցնում էր իրա գործածը կամ ուրիշ բան։ Մէկ օր քիչ մնաց որ նրան մահ էր պատահում. նա անզգուշութիւնով կանգնած մոլի էր անում թէ ինչպէս էն կապում եղը։ Յանկարծ կատղած եղը կտրեց կապերը և վազեց Ղատալչայի վրա։ Ղատալչան լեղապատառ վազեց մտաւ մէկ տուն և աղաստեցաւ, բայց նրա առաջի զենջակը եղը խլեց իրա եղջիւրներով (պողերով)։ Հետաքրքրութիւնը շատ անգամ հարկադրում էր նրան ուրիշների դռներից և պատուհաններից ականջ դնել, և նա շատ անգամ երեկոները կանգնում էր պատուհանների տակը լսել թէ ի՞նչ են խօսում տան մէջ։ Այսպէս ականջ դնելու ժամանակը մէկ օր նրան պատահեցաւ փորձանք։ Տանուտէրը բռնեց նրան, լաւ ծեծեց և արձակելուս առայ՝ միւսանգամ ականջ մի՛ դներ, եթէ ո՛չ, սրանից վատ պատիժ կստանաս։

Իբ. Բոնոսէր աղջիկ։

Շուշանը պզտիկուց մեծ սէր ունէր ուսում առնելու և հարկաւոր գիտութիւններ ստանալու։ Երբ որ նա մէկ նոր բան էր տեսնում, էնքան չէր հանգստանում, մինչև որ լաւ տեղեկանում էր. իսկ եթէ իրա մտածմունքովը չէր կարանում հասկանալ թէ ինչի՞ համար պէտք է էն բանը, և թէ ինչի՞ համար էն տեսակ է և ո՛չ ուրիշ տեսակ, նա էնքան հարցնում էր մինչև որ լաւ հասկանայ։ Նա ուրախութեանով գնում էր ուսում առնելու, և շատ վատ եղանակին էլ ձմեռապարհի երկարութիւնը նրան չէր վախեցնում։ Նա շատ ուրախանում էր ամէն նոր իրա տական գրքի վրա, ուրիշ մանր աշկերտների նման չէր շուտ տալիս միայն թուղթերը, այլ կարդում էր ուշադրութեամբ և լաւ միտք անելով, և էնդուր համար եթէ նրան հարցնում էին թէ ի՞նչ է գրած այն գրքումը, շուտ պատասխան էր տալիս։ Ամէն գործումը, մանաւանդ կարդալումը, նա շատ հմուտ էր, և աւելի լաւ սովորելու համար նրան

տուին մէկ երեւելի կար կարողն մօտ օգնական, որ յանձն առաւ նրան սորվեցնել էն պայմանաւ որ նա մէկ բոլոր տարի կանուխ առաւօտից մինչև գիշեր կար կարէ կամ գործէ նրա համար առանց վարձու։ Երբ որ այս դառը տարին անցկացաւ, նա էնքան լաւ սովորել էր, որ ո՛չ թէ միայն կարողանում էր իրան պատուով պահել, այլ և իրա հիւանդ մօրն էլ ծերութեան ժամանակը պահում էր։ Որովհետև բանասիրութիւնը միշտ հարկադրում էր նրան ծանօթութիւն ունենալ միայն խելօք մարդկանց հետ, որոնցից կարելի էր հարկաւոր բան սովորել, վասն որոյ նա պահպանեց իրան զանազան յիմարութիւններից և էնդուր համար ամէն խելօք մարդիք նրան սիրում էին և պատվում էին։ —

ԺԷ. Բարի դէպքմանոչ։

Ընտանիք շատ բարեսիրտ տղայ էր։ Ալա համար մեծ ուրախութիւն էր լինում, եթէ նա կարողանում էր ուրիշներին բաւականութիւն տալ, և շատ անգամ իրան զրկում էր միայն էնդուր համար, որ կարանայ ուրիշներին ուրախացնել, մանաւանդ իրա եղբարը և քուրերին։ Եթէ նա լսում էր տարաբախտ մարդկանց համար մէկ բան, նրա սիրտը նեղանում էր էարեկցութիւնից, և շատ անգամ, երբ որ հայրը սեղանի վրա պատմում էր մէկ տարաբախտի պատմութիւն, Ընտանի աչքերը լցվում էին արտասուքով։ Մէկ օր հայրը պատմեց մէկ կոշակարի համար, որին Ընտանը շատ լաւ ճանաչում էր, թէ նա իրա կնիկանալ և երեխեքով շատ դառն վիճակի մէջ է։ Իմ շատ մեղքս գալիս են էդ մարդիկը, ասաց հայրը, էնդուր համար որ նրանք տանջվում են բոլորովին անմեղ, և միայն էն պատճառաւ, որ հուսատացին վատ մարդկերանց։ Հիմիկ էն խեղճ մարդուն ո՛չ որ բան չէ տալիս էնդուր համար, որ նա կաշի էլ չունի, և նրա ամէն լաւ բաները ծախած են։ Եթէ ես ունենայի մէկ փորը աւելի փող, ես նրան ոչորոք կտայի և նա կրկին կուրղվէր։ Ընտանը էս ամէն խօսքս լսում էր մեծ մտադրութեամբ. Հաշվից յետ նա գնաց իրա հօր մօտ և ասաց՝ հա՛յր իմ, եթէ ես կամենայի տա-

նել խեղճ Պարտևի մօտ (անուն կոշկակարին) արծաթի մանեթը, որ ինձ ընծայել է Կնքահայրս, դուք հրաման կտայիք ինձ։ Հայրը սկսաւ մտածել, ենդուր համար որ գիտէր, թէ Պարտևը էս մանեթը չի կարող յետ տալ. սակայն Պետոնը ենքան խնդրեց, մինչև որ հայրը կամք տուաւ։ Կարծես թէ Պետոնը երբէք ենքան ուրախ չէր եղեր, ինչպէս էն բոպէին, երբ որ նրան հրաման տուին տանել իրա արծաթի մանեթը խեղճ Պարտևի մօտ։ Պարտևը շատ կաշի չէր կարող առնել այսքան քիչ վոգով, բայց Պետոնի հայրը երաշխաւոր եղաւ նրա համար և նա, բաւական գործ գտաւ իրա համար։ Վոքը ժամանակումը էս մարդի գործքերը ենպէս լաւ գնային, որ նա իրա կողնքն էլ, որ աղքատութեան ժամանակը դրաւ էր դրել, հանեց դրաւից և ապահովացրուց իրա ապրուստը։ Ի հարկէ ամէն տղայ չունի արծաթ մանեթի, որ կարանայ Պետոնի նման ընծայել, բայց ամէն տղայ կամ աղջիկ կարող են գոնեա՝ մէկ վոքը բանով օգնել տարաբախտ մարդուն և նրան մխիթարութիւն տալ։ —

Լդ. Ի՞նչ է նշանակում պրոնջալը։

Սոլոմոնը վատ սովորութիւն ունէր, որ միշտ տրոնջում էր և բարկանում էր։ Դէթ նա կարծում էր, թէ մէկը իրան վնաս է տուել, շարունակ մէկ քանի օր խռովում, էր բարկանում էր նրա վրա, չէր խօսում նրա հետ և պատասխան էլ չէր տալիս նրա հարցմունքներին, և ենպէս բարկացած էր մնում անում, որ կարծես թէ ամէնի հետ ուզում էր կռվել։ Շատ ժամանակ էր անցկենում մինչև որ նա կրկին սկսում էր խօսել։ Այսպիսի անքաղաքավարութիւն անում էր նա ոչ թէ մէնակ եղբօրների, քուրերի և ընկերների հետ, այլ և իրա ծնողաց հետ, եթէ նրանք մէկ բանի համար պատժում էին նրան։

Այս վատ սովորութիւնը փոխելու համար հայրը հրամայեց բոլոր տանեցիքին, որ նրանք, եթէ Սոլոմոնը միւսանգամ էլ կրքարկանայ կամ կտրտնջայ մէկի վրա, նրա հետ էլ ենպէս վարվեն. իսկ եթէ նա էլ չի անել, ամէնքն պէտք էր մէկ ենքան ժամանակ էլ, ինչքան որ նա

խառով էր կացել, աւելի ճայնն և նրա վրա բարկանալին։ Եր ըբ որ մէկ քանի անգամ էսպէս արին, Սոլոմոնը տեսաւ թէ ի՞նչքան վնաս է քաշում իրա այս սովորութիւնից, և խոպան փոխեց իրա վարքը։

Իե. Պախարդ։

Մէկ բոշայ կնիկ եկաւ մէկ գիւղ և ժողովուրդի համար թուղթ բացանելով վաղէր հաւաքում։ Շատ մարդիկ էնքան շուտ հաւատացող և կարճամիտ էին, որ հաւատում էին էս խաբեբայ կնկայ խօսքին։ Նա ասէին էնպէս բաներ էր ասում, որ նրան հաճոյ էր։ մէկին ասում էր, թէ մեծ շահ կստանայ, միւսին, թէ գանձ (խազինայ) կգտնի, և այլն։ Էսպէս բաներ ասելու համար նրան շատ վաղ էին տալիս։ Էն ժամանակը գաւառապետը լսեց նրա համբաւը, և որովհետև այսպիսի խաբեբայութիւնները ասասիկ արգելված են, վանողոյ էն կնկան բռնեցին և պահպանելով տարան քաղաք։ Եթէ նա յերաւի գիտէր գալիքը իմանալ, ը, մարգարէութիւն անել, պէտք էր իրա գլխին գալու տարաբախտութիւններն էլ իմանար և փախչէր։ Սակայն շատերը հաւատացին նրա ասած խօսքերին, էնդուր համար որ ցանկանում էին, որ նրա ասածները ճշմարիտ լինի։ և էս պատճառաւ շատերը տարաբախտվեցան, էնդուր համար որ, զարմանալի, էն մարդը, ումին նա ասում էր, թէ գանձ կգտնի, չէր աշխատում և յոյս ունէր թէ առանց իրա աշխատելու կհարստանայ։ Շատ երկար ժամանակ էն գիւղումը մնացին նրա խաբէութեան վնասները հեռանալը։ —

Իզ. Գողի խոստացող։

Ստեփանը երկար ժամանակ մէկ հարուստ մարդի մօտ այգեպանութիւն էր անում և նրան գովում էին նրա աշխատասիրութեան, հմտութեան և հաւատարմութեան համար։ Նա շատ շնորհակալ էր իրա վիճակից և աւելի ոչ ինչ չէր ցանկանում, միայն թէ մինչև իրա մահը այս

պէտ լաւ մնայ, որովհետև իրա տէրը սիրում էր նրան և պատվում էր։ Մէկ օր շտապով մտաւ նրա այդին Ագոնը և ուրախութիւնով ասաց, թէ վիճակումը (լոտերէյումը) տարել է 500 մանէթ։ Հիմիկ ես ոչինչ բան պակաս չեմ ունենալ ։ բարձը ճայնով ասաց նա։ Ես էլ հիմիկվայ պէտ այնքան աշխատանքով չեմ ճարել ինձ համար ապրուստ։ այլ դուրս կգամ իմ աղայի մօտից (նա էլ Սաեփանի աղայի մօտ էր ծառայում)։ փոքրիկ առուտուր քայ կանեմ և լաւ կապրեմ։ Բէրզ էլ խորհուրդ կտամ։ Սաեփան ընկեր իմ։ դու էլ փորձիր քո բախտը վիճակումը։ մի՞թէ էն աւելի լաւ չի՞ լինիլ։ երբոր մենք ինքներս կլինինք մեր աղաները, և ի՞նչ կլինի մեզ մեր ծերութեան ժամանակը։ ո՞վ կհոգայ մեզ համար, ո՞վ։ ներութիւն կանի մեր տկարութեան ժամանակը։ եթէ մենք միշտ ծառայ մնանք։ — Սաեփանը գլուխը շարժեց, և չդիտէր։ թէ ինչ պատասխան տայ։ բայց Ագոնը էնպէս հաւատացրուց նրան, թէ անպատճառ վիճակումը կտանի։ էնպէս դեղեցիկ ցոյց տուաւ նրան անկախութիւնը, որ Սաեփանի սիրտը ուղեց մէկ քանի մանէթով փորձել իրա բախտը։ նա վերջապէս մէկ համարի փոքրիկ մասը, և առաջին վիճակ դնելումը ոչինչ չտարաւ։ Երբոր նա սկսաւ տխրել ։ Ագոնը խրախոյս (սիրտ) տուաւ և ասաց թէ պէ՛տք էր մանր մանր կտորները վեր առնել շատ համարներումը ։ և պէտք է այնքան ժամանակ շարունակես գրվելդ։ մինչև որ տանես 500 մանէթ։

Սաեփանը չէր կամենում 'ի զուր կորցնել իրա փողը և էնդուր համար կրկին գրվեցաւ։ Այսպէս շարունակեց նա շատ անգամ ։ և ամէն անգամ տանում էր տալիս։ Վերջապէս իրա սեփական փողերը աւարտվեցան։ բայց նրա սիրտը ուզում էր շարունակել այդ խաղը, որովհետև հատուստ կարծում էր։ թէ պէ՛տք է մէկ օր տանի։ Դէ ի՞նչ արաւ նա փող ճարելու համար։ Այս սկսաւ իր տիրոջը խաբել այդպիսի պատուհանների ծախսումը։ որ առաջ հիջեյ հաւատարիմ ծառան էր (տես ։ ինչքան փոխեց նրա բարքը խաղալու ցանկութիւնը)։ Բայց նրա խաբէութիւնը շուտով յայտնվեցաւ և պաղատեցաւ դուրս գնալ մօտից։

Այն ժամանակը գնաց իրա բարեկամ Պետրոսի մօտ, որ իրա տարած փողերը լաւ չէր պահել, և միշտ շարունակում էր խաղը, թէպէտ և շատ ժամանակ էր որ ո՛չինչ չէր տանում. Պետրոսը պարտքի տակ էր ընկել, և վերջապէս փախել էր իրա հայրենի երկրից։ Ստեփանն էլ ուրիշ ճար չգտաւ, բայց միայն հեռանալ իրա հայրենի տեղից, որովհետև նրան իբրու խաբեբայ մարդոյ և գողի, ոչ ոք չէր ուզում վերը առնել ծառայելու, և նա մեռաւ յետին աղքատութեան մէջ։ Ով որ իրա աշխատանքով, իրա քրտինքով չի ուզում փող վաստակել, նա վերջը տաքաքաղ կլինի։—

Լէ. Պոռնիկ պարշտամանին։

Սիմոնը այնքան շուտ հաւատացող էր, որ ամէն լսած բանին հաւատում էր, միտք չանելով ճշմարիտ է, թէ սուտ։ Այս շուտ հաւատալը նրան մոտիւսպաշտ արաւ։ Եթէ մէկը նրան ասէր, թէ այս ինչ կամ այն ինչ տանը հրաշք է երևում, նա էն սահաթին հաւատում էր և ուրիշներին էլ պատմում էր էնպէս, ինչպէս մէկ հաստատ բան. և եթէ մէկը ասէր, թէ էն տանը, որի վրա նստի և կանչի բու թռչունը (բայիղուշը), կամ որի առաջեվը շունը ոռնայ, անպատճառ մէկ մարդ կ'մեռնի, նա հաստատ հաւատում էր։ Մէկ օր նա վերը ընկաւ և ոտը քարին քսվելով քերվեցաւ։ Փոխանակ բժշկին ցոյց տալու և խնդրելու որ դեղ անի, նա լսեց մէկ պառաւ կնկայ խօսքը, որ նրան խորհուրդ տվաւ քերված ոտի վրա դնել Զղախտի տերևները։ Այս հաստատ յոյս ունէր, թէ եդ անելով նրա ոտքը կ'առողջանայ, որովհետև պառաւ կնիկը ասաց թէ էս դեղով շատերին առողջացրել է, և էնդուր համար Սիմոնը հաւատում էր նրա խօսքերին և ուրիշ դեղի համար միտք չէր անում։ — Բայց Սիմոնի վերքը (եարան) աւելի մեծացաւ և շուտով փոխվեցաւ ճէր ցաւ։ Այն ժամանակը նա հարկադրեալ գնաց բժշկի մօտ որ ուրիշ հնարք չգտաւ առողջացնելու, բայց միայն կտրեց նրա ոտը. և Սիմոնը շատ ուրախ էր, որ եդրով ազատվեցաւ և չ'մեռաւ։

Սնոտիապաշտութիւնը շատ մեծ մեծ տարաբախտութիւնների աղբիւր է։ բայց ի՞նչ անենք, որ շատ մարդիք Սխալների նման են։

Լը. Աշակերտութեան և ծուլութեան պատուոյ։

Տրդատը էր որդի Հայոց վաճառականի։ Նրա հետ միասին կենում էր Պետրոսը, որ էր որդի ալընձդորձի։ երկուսն էլ հասակով թէ մէկ հասակի էին, երկուսն էլ մեծանում էին միասին և Տրդատի հայրը սիրում էր Պետրոսին իրա որդուց պէս և՛ չ թէ միայն նստացնում էր սեղանի իրա մօտ և հագցնում էր, այլ և նրա ուսման համար էլ փող էր տալիս ուսումարանումը։ — Թէպէտ Պետրոսը շատ մեծ ընդունակութիւն չունէր, և ինդուր համար ինչ որ սովորում էր, մեծ նեղութիւնով էր սերտում, սակայն նա շատ աշխատասէր էր։ Մեծ մտադրութիւնով նա հաւաքում էր իրա մտքումը ամէն ուսուցչի ասածները, և ինչ որ ուսումնարանումը դաս էին տալիս, նա տանը մեծ աշխատանքով սերտում էր և կրկնում էր։ բաց յայտնապէս ինքը առանց ուրիշի ասելու միշտ պատրաստում էր իրա դասերը։ Լսելիս աշխատելով նա շուտով հասաւ իրա ընկերներին, մանաւանդ կնպէս ընկերներին, որք նրանից առելի ընդունակութիւն ունէին։ Սրանքը սիրում էին նրան և ասում էին թէ նրա հայրը բախտաւոր կլինի այսպիսի որդուց։ Իսկ Տրդատը խելօք չէր։ և ուսումնարանումը իրա վարժապետներին առելի պատիւ չէր տալիս։ Լսելը, ձիու վրա հեծնելը, ձուկը որսալը և ուրիշ կապէսի զբօսանքը նա ուսումից առելի էր սիրում։ Դրը որ նրան յանդիմանում էին, նա ասում էր՝ ես պէտք է վաճառական դառնամ, իսկ վաճառականութեան համար շատ գիտութիւն պէտք չէ։ Եթէ ես սովորեմ կարդալ, գրել և թուաբանութիւն, ինձ համար շատ բաւական է, և ինդունք սովորելու համար դեռ ժամանակ շատ ունիմ։—

Լսելիս անցնում էին տարին տարիի ետևից, և որովհետև նա կարծում էր միշտ, թէ դեռ ժամանակ շատ ունի, ինդուր համար կարդալը, գրելը և թուաբանութիւնն էլ

շատ վատ էր սովորում։ Ի հարկէ, նրա հայրը շատ զ-
բաղ կլինէր, եթէ նա աշխատասէր լինէր, բայց սակայն
չէր ուզում։ և բայց յայնմանէ ինքն էլ կարծում էր, թէ
նրա վիճակի համար շատ աւելի բան իմանալ պէտք չէ։
Էնդուր համար, որ որդին ամէն հարկաւոր բանը կունե-
նայ, երբ որ ինքը նրա համար կ'թողնի լաւ կարգած կալ-
վածք (միւլք)։ Բայց նրանք երկուսն էլ սխալվում էին,
Էնդուր համար որ միտք չէին անում, թէ անօգուտ բաներով
վրա ժամանակ անցնելու սովորութիւնը շատ մեծ վա-
տութիւններ առաջ կ'բերի, քան թէ հասարակ ուսում
չառնելը։

Երբ որ Տրդատը հասաւ էն հասակին, որ պէտք էր ու-
սումնարանից դուրս գար, հայրը կամեցաւ նրան տան և
առուտուրի կառավարութիւն սորվացնել և սկսաւ նրան
յանձնել զանազան գործեր։ բայց Տրդատը աւելի լաւ էր
համարում իրա սովորական զբօսանքը։ Փոխանակ արտը
գնալու և սակսելու մշակներին, որ լաւ բանկեն, նա հեծ-
նում էր իրա ձիուն և գնում էր քաղաք իրա ընկերների
մօտ, խնջոյք և հայկերոյթ էր տալիս նրանց, իսկ մշակ-
ները ինչքան կամենում էին պարապ էին մնում։ Թէ-
պէտ հայրը շատ յանդիմանում էր նրան էս բանի համար,
բայց ո՛չինչ չօգնեց, և խեղճ ծերը մեռաւ ցաւելով իրա
որդուց անկարգութեանց վրա։ Էն ժամանակը Տրդատը
լիակատար իշխան դարձաւ բոլոր հօրական կայքին և ինչ-
պէս ուզում էր էնպէս էր կառավարում իրա կամքով։—
Գաւած կայ ասած՝ թէ ինչպէս օրօրոցումը, էնպէս էլ գե-
ր ընդմնում։ Տրդատը մնաց առաջվայ պէս անկարգ.
կենում էր առանց միտք անելու վաղեան համար, և իրա
գործերը կառավարելու ամենևին հոգս չէր քաշում։
Բայց բաներով երկու տարուց ո՛չ թէ մենակ քանդեց
և փչացրուց բոլոր կայքը, այլ և էնքան պարտքի տակ
ընկաւ, որ վերջապէս նրա անշարժ կայքը ծախեցին ամ-
դաւ (հրապարակաւ)։ — Մեկ դրամի ապնուականն գնեց
այդ կալվածքները, և Պետրոսը, որ այսքան ժամանակ
էն ապնուականի տան կառավարիչն էր, և որ իրա աշխա-
տասիրութիւնով և վաղ պահելով իրա համար բաւա-
կան հարստութիւն էր հաւաքել, էն կալվածքը վեր ա-

գաւ աղնուականից կապալաւ (իջարայիւ)։ — Ծախած կալուածքի գինը բաւական չէլաւ բոլոր պարտքերը հատուցանելու համար, և ինդուր համար Տրդատը պարապ մանեկող և թափառական կ'դառնար, եթէ Պետրոսը։ իրա երախտագիտութեամբ և կարեկցութեամբ, վեր չառնէր նրան իրա տուն և չ'պահէր։

Աշխատասիրութիւնը և չափաւորութիւնը շատ փորձանքից պահում են, իսկ պարապութիւնք ամէն տեսակ մեղքի պատճառ կ'դառնայ,

ԼԹ. Քաղցրեղէն։

Աղգաղինէն շատ վատ սովորութիւն ունէր ամէն ուտելեղէնի և խմելու բաների համը տեսնել ինչ որ ձեռքը կընկնէր։ Հաստուր համար շատ անդամ ծնողքը նրան պատժում էին, էն պատճառով որ քաղցրեղէն սիրելը ոչ թէ միայն ինքն իրէն վատ բան է, այլ և փոխրեցնում է մարդուս անչափաւորը լինել ամէն ցանկութեան մէջ։ Ոչ մէկ տեսակ պատիժ չէր կարանում նրան զսպել, երբոր նա ուզում էր քաղցր բան ուտել։ նրա ձեռքից պարտէզի դուռը էնքան ժամանակ կողպած էր լինում, մինչև որ պտուղները բոլորը հաւաքէին։ Էնդուր համար որ նա ամէն ձեռքը ընկածը քաղում էր, թէ և խակ լինէին։ Խակ խնձորները, տանձերը կծում էր և յետոյ դէն էր գցում։ և էնքան միաս էր տալիս պարտէզին, ինչքան որդունքը։ Այս մեծ հնարքով թաքուն մտնում էր կաթը պահելու տեղը, և սերը ուտում էր։ Դռաջ կտրում էին, թէ էդ բանը կատուն է անում և էնդուր համար գուրս գձեցին կատուին, բայց շուտով իմացան, թէ Աղգաղինէն է գրտնում կաթի տան բանալիքը։ Ուրեմն զարմանալի չէ, որ ծնողքը չէին հաւատում նրան և ամէն բանը կողպում էին նրանից։ Մէկ օր նա գինիի համն էլ տեսաւ, որ հայրը կողպած պահում էր պահարանումը, բայց հարբեցաւ և շատ սատանայ հիւանդացաւ։

Մէկ օր նա մինուակ նստած էր տանը (էսպէս ժամանակը նա սովորաբար բանեցնում էր իրա ուտելու համար)։ փորձեց թէ ո՞ր պահարանն է բայց կամ ո՞ր տեղ են պա-

հած բանալիքը։ Յանկարծ տեսաւ որ պահարանի գլխին դրած է մէկ աման. խոկոյն ուզեց տեսնել, թէ ինչ կայ էն ամանի մէջ ուտելու։ Կա դրեց սեղանը պահարանի մօտ, բայց որովհետև էլի ցածր էր, սեղանի վրայ էլ դրաւ աթոռ, և բարձրացաւ վերը առաւ ամանը։ Ամանի մէջ մէկ ապիտակ բան կար մանր շաքարի նման. նա մատով համը վորձեց, տեսաւ որ քաղցր է, և սկսաւ ագահութեամբ ուտել։

Յանկարծ մայրը մտաւ տուն։ Մադդալենէն էնպէս վախացաւ, որ ոտքերը դողացին և քիչ մնաց որ պէտք էր վերը ընկնէր աթոռից։ Բայց մօր վախը աւելի սաստիկ եղաւ, երբոր տեսաւ, թէ Մադդալենէն ուտում էր մահաղեղը, որ դրած էր Հանձերի համար։ ,, Տարաբա՛խտ աղջիկ, էդ ի՞նչ ես անում, գոչեաց մայրը ,, Խոկոյն ներքև առաւ աղջիկան, ծառային ուղարկեց բժշկին կանչելու, և նրան տուաց կաթը խմելու, որ սիրտը խառնի և վերը ածի, և ամէն հնարքը գործ ածեց, որ աղատի նրան մահուան տանջանքից։ Շատ չանցաւ Մադդալենէն սկսաւ դղալ սաստիկ վորացաւ և էնպէս գոռաց որ բոլոր դրացիքը լսեցին։ Բժիշկը եկաւ, հրամայեց աւելի կաթը խմեցնել և ուրիշ դեղ էլ տուաւ. բայց երևի թէ Մադդալենէն շատ էր կերել մահաղեղից. էնդուր համար որ թէպէտ էնդամնի մեռաց, բայց խելքը գլխից թռաւ և բոլոր անդամքը դողում էին։ Այ՛ այսպէս Մադդալենէի քաղցրերէն սիսելը համարեա՛ թէ անձնասպան արաւ նրան։ Ով որ առանց մտածելու չար սովորութեան կը հետևի, էն սովորութիւնները նրան կհասցնեն չար վախճանի։

Լ. Ընտանեաց պանչելը լաւ բան չէ։

Փոքրիկ Պալուատը ուրախանում էր երբ որ տանջում էր անասուններին։ Նա կարծում էր, թէ իրաւունք ունի էնպէս բանով ուրախանալ, երբ որ իրան պատահում էր մէկ անասուն և՝ ի հարկէ երբ որ անասունը իրանից պակաս ուժ ունէր։ Առանց միտք անելոյ, թէ անասունն էլ ո՞ղ պէս զգում է ցաւ, նա շատ անգամ էնքան անխնայ տանջում էր նրանց, որպէս թէ նրանք նրա մեծ թշ-

նամիքն էին, թէ և նրանք ոչինչ վնաս չէին անում նրան։
Նա բռնում էր բղեղներին, թելով կապում էր ոտքից մէկ վայրկեան վերայ և ինքան պտոյտ էր տալիս, մինչև ողորմելիքը բոլորովին ուժից ընկնում էին։ Ընդհանուր դորտերին, որք փոքր ինչ հարկաւոր էլ են մեզ, նա թաւռում էր (մեխում էր) և ինքան ուրախանում էր նրանց տանջանքով, մինչև որ նրանք երկար և դառն տանջանքով մեռնում էին։
Ամենից տեսնելն նա իրա հնարքները բանացնում էր տանջելով փոքրիկ շանը, որ իրան ընծայել էր իրա հօրեղբայրն։ Խոլոր օրը քաշելով մանր էր ածում նրան, և ուրիշներին ցոյց տալու համար, թէ նա էս շան տէրն է, ծեծում էր նրան, ոտքով խփում էր և ականջներից քաշում էր ինքան, մինչև որ օտար մարդիք էլ յանդիմանում էին նրան էտուր համար։ Ձի հեծնելու ժամանակը, այնքան քշում էր, որ ձիերը սատակում էին և ծառաների հետ այնքան վատ էր վարվում, որ մէկ քանի լաւ ծառաները չուզեցին նրա մօտ կենալ, և դուրս գնացին նրա հօր տանից։ Խոյց ծնողքը ներում էին նրան այս բաները ինդուր համար, որ նա միակ որդի էր։ Վերջապէս երբ որ նա մեծացաւ և տարաւ լինքը կառավարել իրա գործքերը, ամենքը կարծեցին, թէ նա աւելի խելօք կվարվի, բայց նա շարունակում էր առաջվայ պէս, ինդուր համար որ ասած է՝ լինչպէս օրօրոցումը կլինի, ինպէս էլ դերեզմանումը։ Ամենքի հետ անդադար կռվում էր ինքան, մինչև որ մեծ հատուցանում էր էն վնասները, որ արել էր ուրիշներին, և բոլոր իրա կեանքը անցուց անհանգստութեան մէջ։
Խարեսիքտ մարդը ողորմած կլինի իրա անասունին էլ, իսկ անողորմ մարդու սիրտը ո՛չ ոքի համար չի ցաւիլ։ և առակ է ասած՝ չար մարդը ձանձով կսկսի, մարդով կվերջանի։

Լա։ Ամպոշտանին։

Ով որ ճանաչում էր Սովիսյին ամենքը նրան անուանում էին ամպոշտ և Ամենամոլ։ Այդպիսի անունը պատուաւոր անուն է թէ չէ։ Երբ որ կկարդաք այս փոք-

բիկ պատմութիւնը, ինքնեբրդ կարող էր ասել, թէ որ ժանիր էր նա այս անունին, թէ չէ.

Մէկ օր նստած էր նա սեղանի առաջին և գրում էր Օրինակից, որ ուսուցիչը տուել էր նրան տանը գրելու համար։ Յանկարծ նա լսեց որ մէկ մարդ ձիով եկաւ և կանգնեցաւ դրացի տան մօտ։ Սոփիան չկարաց համբերել հետաքրքրութիւնից, խնկոյն վազեց և այս շտապելու ժամանակը վերը գցեց թանաքամանը և աթոռը։ Թանաքը թափվեցաւ սեղանի վրա յատակի վրա։ Սոփիան շատ վախեցաւ երբ որ տեսաւ թէ ինչ արաւ իրա անզգուշութիւնով։ Հիմիկ ի՞նչ պէտք է անել, որ ծնողքը չտեսնեն։ Խնկոյն վերը առաւ նա առաջին ձեռքը ընկած աղլուխը և սկսաւ թանաքը սրբել, բայց միտը չարաւ առաջ մտել տալ, թէ ինչ աղլուխ է։ Յետոյ տեսաւ թէ այն իրա հօր վրի աղլուխն է։ Առաջ նա վախեցաւ, այժմ աւելի ևս։ Այս պատահեցաւ առաջի անգամը, և նա ուրիշ ճար չգտաւ, բայց եթէ հշմարիտը ասաց իրա մօրը և նրան ուրիշ ոչինչ չարին։ բայց միայն յանդիմանեցին։ Սոփիան խոստացաւ միւսանգամ զգոյշ կենալ։ բայց միւս օրը կրկին փորձանք պատահեցաւ։ Նրը որ մայրը հաշ էր պատրաստում, հրամայեց նրան, որ վերս առնի վաճառարանի վրայից փոքրիկ կաթսան (ղազանը), որի մէջ ջուր կար։ Ջուրը թափել և կաթսան իրան տայ։ Սոփիան գնաց, բայց փոխանակ վերը առնելու ջրով կաթսան, նա վերը առաւ էն կաթսան, որի մէջ կար հաւաքած կերակուրի իւղ և պատուհանից թափեց։ Այս ժամանակը պատուհանի մօտից անց էր կենում մէկ լաւ հագնված կին և այս ընկած իւղը թափվեցաւ նրա գլխին և բոլոր շորերը ապականեց։ Կինը եկաւ Սոփիայի մօր մօտ յանդիմանելով և նախատելով պատահանջեց իրա շորերի գինը։ Այս անգամ Սոփիային սատանի պատժեցին։ Ի՞նչ կարող էր նա ասել իրան որ դարպասնելու համար և ինչո՞վ կարող էր ազատվել։ Այս խոստացաւ աւելի զգոյշ լինել և ինչ որ անում է առաջ լաւ մտածել։ Մէկ շաբաթ անցաւ, նա մէկ հարկաւոր բան էր շինում, բայց ժամանակը քիչ էր մնացել։ Այս մեցաւ շտապով վազել խահանոյից տուն, բայց լաւ չնկատեց գետնի վրա գրած ամանը, որ ինքը լցրել էր ջրով

և դրել էր, ոտքը խլեց նրան, վեր ընկաւ և բերանը խը-
վելով ամանին երկու ատամը կոտրեց։ Ամիլ էր մեղաւոր
էր քանումը։ Այս լայ էր լինում և դանիատ էր անում իրա
անզգուշութիւնից, որովհետև այս երկու կոտրած ատամ-
ները շատ տգեղացրին նրա կերպարանքը։ Այժմ երևում
էր, թէ այս տարաբախտութիւնից յետոյ նա կխրատվի և
յիրաւի նա մէկ քանի շաբաթ զգոյշ էր, բայց յետոյ սկը-
սաւ կրկին մոռանալ։ Մէկ օր նա օդնում էր իրա մօրը
շորերին ութոյ քսելով։ Այս դրաւ արթուկի (ութոյի) մէջ
տաքացրած երկաթը և կամեցաւ դնել ափսէի վրայ։ Ապրը
նստած էր նոյն սեղանի մօտ և գրկած ունէր իրա տան-
ամնական տղին։ Աշրեխան խաղում էր ձեռքերով սե-
ղանի վրա և էն թոպէին ձեռքը դրել էր ափսէի վրա։
Ընդգոյշ Սոսիան առանց մտիկ անելու դրաւ տաքցրած եր-
կաթը երեխայի ձեռքի վրա։ Աշրեխան աղէողորմ գոչելով
սկսաւ լայ լինել։ Իսկ Սոսիան վախից մնայ անխելքի
պէս։ Աշրեխայի քիչը ձեռքը այրվեցաւ և ողորմելին տանջ-
վում էր անտանելի ցաւով։ Սոսիան էնքան լայ չէր լի-
նում նախատանքից և պատժից, որքան որոշ ներողանալուց,
տեսնելով թէ ի՞նչ տարաբախտութեան պատճառ դար-
ձաւ։ Այն օրից յետո նա սկսաւ զգոյշ լինել և թէպէտ չէր
լայ իսկոյն իրան ուղղել, բայց միշտ մտքին պահելով և
շարունակ հեռևելով փոքր փոքր սովորութիւն շինեց իրա
համար զգուշութիւնը և վերջապէս բոլորովին ուղղեցաւ։

Լը։ Պապ ջեղա։

Հախսիմէն շատ լաւ աղջիկ կլինէր, եթէ մէկ մեծ պա-
կասութիւն չունենար, որ նրան պատճառում էր շատ ներ-
գութիւն և ամօթ։ Այս պակասութիւնն էր—լեզու խառ-
նելը (խառնախօսութիւն)։ Այս ոչինչ չէր կարանում ծա-
ծուկ պահել. ինչ որ լսում էր կամ իմանում էր ու-
ղիշներից, իսկոյն պատմում էր և երբէք չէր կարանում
լուռ կենալ։ Ինչ որ դրացիներին տանը պատահում էր, նա
բոլորը գիտէր, հնդուք որ միշտ նստած էր պատուհանի մօտ
կամ դրան մօտ, և ինչպէս որ տեսնում էր մէկ ծանօթ
մարդ, էն սհաթին սկսում էր պատմել ամէն լսածը կամ

գրացիքի վրա կամ իրա ծնողաց վրա կամ առ Հաստատակ տանեցիքի վրա։ Ինչ որ ուսումնարանումը պատահում էր նա բոլորը պատմում էր, և եթէ աշակերտների մէկին պատժում էին, նա ամէն պատահող մարդու պատմում էր և պատմելու ժամանակը այնքան ուրախանում էր, որ սրած գործը միշտ երևում էր շատ մեծ։ Ինչ վատ լեզուի համար ամէն ընկերները նրան չէին սիրում, և միայն իրա նմանները նրա հետ ընկերութիւն էին անում։ Ինչ տեսնելով նա շատ նեղանում էր, բայց չէր հետևում այս վատ սովորութիւնը թողնել։ Երբ որ նա մեծացաւ, պէտք եղաւ որ գնայ ուրիշների տուն ծառայելու, ինդուր համար, որ նրա ծնողքը շատ աղքատ էին։ Գաւնի օրերը նրա ծառայութիւնից շատ բաւական էին լինում, ինդուր համար, որ նա շատ խստակ էր և աշխատասէր։ բայց շուտով իրա չար լեզուով բոլորին կռվեցնում էր և վերջապէս ինքան զզվեցնում էր, որ նրան դուրս էին գցում։ Այսպէս էր լինում նրան ամէն տեղ, ուր նա ծառայում էր և վերջապէս ինքան վատ անուն ստացաւ, որ էլ ծառայելու տեղ չգտաւ։ Ինչ պատճառաւ նա էլ շկարացաւ իրա քաղաքումը մնալ և գնաց ուրիշ քաղաք։ բայց որովհետև ինտեղ էլ իրա սովորութիւնը չթողաւ, ինդուր համար հասաւ էն դառն վիճակին, որ իրա օրական հացը հաշիւ գտնում էր դառն մշակութեամբ։

14/26 Լ։ Ասա խոսքը օգնում է կարիք ժամանակը։

Մէկ օր աշակերտները ուսումնարանումը լաւ չէին պատրաստել իրանց դասերը և ուսուցիչը պատմեց նրանց այս անցքը, որ պատահել է Աստրախանի մօտ մէկ քաղաքումը։

Մէկ երիտասարդ (ջահիլ) գիւղացի անունը Անդրեաս էր լաւ որդի վատ հօր, և դեռ ևս իր հօր կենդանութեան ժամանակը յանձն առաւ փարել և ցանել իրանց անտէր թողած արտը, որ կարանայ իրա ծերացած մօրը պահել։ Որդիական սէրը հարկադրեց նրան այս ծանր բանը յանձն առնուլ, ինդուր համար, որ նրա հայրը պարտքէր շատ էր թողել։ Տրտմութիւնով վեր էր կենում Անդ-

ընտանեաց առաւօտներին և հոգեւորական պատկերում էր երեկոյ-
ները։ Թէպէտ դրացին խնդալով նրան, խօսք տուաւ օգ-
նել նրան երկիրը վարելու, բայց ոչ կատար խեղճ Անդ-
րէասին փոշ, որ սերմերը առնէ ցանելու համար։ Նա շատ
բաներ միտք արաւ. փող խնդրել նա չէր ուզում, էն-
դուր համար, որ ոչ տեղաց կարող էր նա հատուցանել,
երբ որ առանց էն էլ նրա պարտքերը շատ էին։ Յան-
կարծ նրա միտքը ընկաւ մէկ բան։ Նա մտածեց, թէ կա-
բելի է գաշտի միան մօտ գտնի պահած ցորեն։ Սկսաւ մտա-
ծել և իրա բախտից գտաւ մէկ բուն, որի մէջ ենքան
ցորեն կար, որքան իրան պէտք էր։ Յորենները բոլորը ամ-
բողջ էին և շատ յարմար ցանելու համար։ Խեղճ Անդ-
րէասն մէկ ծանր հոգուից ազատուեցաւ. ուրախ ուրախ գնաց
յայտնեց իրան դրացիին, թէ գտել է ցորեն և նա խոս-
տացաւ օգնել նրան ցանելումը։ Մէս օրը գնաց նա իրա
արտը և լաց լինելով սկսաւ ցանել, որովհետև նրա վի-
ճակը դեռ շատ դառնէր. նա մտածում էր, թէ ի՞նչ
կլինի իրան, իրա ծերացած մօրը, իրա քուրերին և եղ-
բօրներին, եթէ այս ցորենը դուրս չգայ. կարելի է աւե-
լի լաւ կլինէր, եթէ նա ծառայէր ուրիշ մարդկանց մօտ,
քան թէ արտ ունենար և այսքան պարտք։ Բայց յան-
կարծ նա ուրախացաւ և ուժի եկաւ. միտքը բերեց այն
ուրախարար ոտանաւորը, որ մանկութեան ժամանակը սոր-
վել էր. «Ով որ արդարութիւնով ցանէ, ուրախութիւնով հնձէ։ Այս
ոտանաւորը նա համեմատեց իրա կեանքի հետ։ Այս մտա-
ծելով նա զգաց մէկ մեծ ուրախութիւն և ինքն իրան
ասաց՝ իմ տրտմութեան արտասուքներս էլ, եթէ Աստուած կամենայ, ուրախութեան արտասուք կդառնան,
երբ որ հնձելու ժամանակը կգայ։ Այս յոյս կունենամ
լաւ վիճակի և ինչ որ ձեռքիցս կգայ կաշխատեմ առանց
վատութիւնի։ Ամէն օր նա միտք էր անում էս ոտանա-
ւորի վերայ և մխիթարվում էր։ Պատուած յաջողեց. նրա
հունձը շատ առատ եղաւ և շուտով նրա գործերը էն-
պէս լաւացան, որ կարաց մէկ ձի առնել։ Էն ձիու օգ-
նութեամբ նա վարում էր իրա արտը, իսկ՝ ձմեռը նրա
վրա բեռներ էր կրում ուրիշների համար և վարձ էր ստա-
նում։ Էս ձին նրան այնքան օգուտ էր տալիս, որ նա

շուտով կարաց մեկ ուրիշ ձի էլ գնել, և քիչ ժամանակից երրորդ ձի էլ։ բոլոր պարագաները հատոյց և երեք չորս տարուան պարագաները վճարեց և իրա համար փող հաւաքեց։ Երկար ժամանակ ապրեց Ալնդրեասը հանդարտ և հարուստ, և ծերութեան ժամանակը իրա քաշած նեղութեանց վրա խօսելուց միշտ կրկնում էր՝ ով որ արտասուքով կցանի, ուրախութիւնով կհնձի։

Լգ. Փոքր Յոհան։

Մեկ արհեստաւորի որդի, անունը Ստեփան, էր առաջ և տանը չորս տարեկան ժամանակը ունէր կատարեալ մարդու հասակ։ Նրա երկու եղբարները քարտաշ էին, և Ստեփանն էլ կամեցաւ նրանց արհեստը սովորել, և էնդուր համար նրան էլ ծնողքը ուղարկում էին նրանց հետ բանելու։ Լաստեղ անդադար տեսնում էր նա անհանգիստ և կոպիտ մարդկերանց, որ անդադար կռվում էին և ծեծվում։ և եթէ կարճ ժամանակի հաշտվում էին, սկսում էին երդել զանազան վատ երդեր։ բայց յայտնի է օրէն (արարը) միշտ դրած էր նրանց առաջը սեղանի վրա։ Փոքր ժամանակից յետոյ սկսան նրանը Ստեփանին էլ հարկադրել, որ նրանց հետ խմի։ Նա առաջ չ՚կամեցաւ խմել, էնդուր համար, որ մեկ անդամ համը տեսաւ և բոլորովին ուշաթափվեցաւ։ բայց ընկերները ծիծաղում էին նրա վրա, և նրանցից մեկը ասաց՝ լսի՛ր, եղբայր, եթէ ուզում ես լաւ քարտաշ լինել, պէ՛տք է սովորես արաղ խմել։ (Ի՞նչ էք կարծում. Հշմարի՞տ էր ասում)։ Որովհետև այս բանը շատ անդամ կրկնում էին նրան, վերջը հասայրին էն աստիճանին, որ Ստեփանը սկսաւ արաղ խմել. թէպէտ առաջ չէր հաւանում, բայց փոքր ժամանակումը նախ էնպէս էր խմում, ինչպէս պիրաքնիկը նեղը։ (Լաւ բան էր էս։) Ստեփանը նկատեց, որ ուրիշ քարտաշ ներիբ բանում ծխեղէգն (չիբուխ) կայ. վատնաբոյ կարծեց, թէ ծխախոտ (թիւթիւն) ծխելն էլ լաւ քարտաշ լինելու համար անպատճառ պէտք է։ Էնդուր համար շուտով ձրիից էրա համար ծխեղէգն. բայց առաջ շատ տանջվեցաւ մինչև որ սովորեցաւ առանց դժվարութեան քաշել։ Հատ

անգամ էնպէս սիրտը խառնում էր և զզվում էր, որ մոքումը դնում էր միասնդամ չէքաշել. բայց ընկերները էնքան ծաղր էին անում նրան, որ նա կրկին սխալում էր և վերջապէս սովորեցաւ ծխախոտ քաշել։ Ա՛յժմ Ստեփանը իրան համարում էր կատարեալ չափահասակ մարդ, ինդուր համար, որ կարանում էր ամէն բան անել, ինչ որ ուրիշները անում էին։ Բայց փոքր ժամանակից յետոյ սկսաւ հասկանալ, թէ սառողջ չէ. երեսի զուարթ կարմիր գոյնը թռաւ, ինքը լղարեցաւ, ծուլացաւ և միշտ անբաւական էր. ախորժակը (իշտահը) կապվեցաւ, ստամոքսը շատ անգամ չէր կարողանում մարսել կերակուրը, որ առաջ նրան ոչինչ վնաս չէր տալիս. երբեմն գլուխն էր ցաւում, երբեմն փորը։ Շատ անգամ դողում էին նրա ձեռքերը և ոտքերը։ (Ինչից էին պատահում Ստեփանին այս տկարութիւնները։) Մէկ քանի անգամ մարդիկ խորհուրդ էին տալիս նրա ծնողացը, որ երբեմն նրան փոքր արաղ տան խմելու։ (Այս խորհուրդը ինչո՞ւ լաւ չէր։) Նրանք կարծում էին, թէ եգ հնարքով նա կառողջանայ, բայց աւելի թուլացրին, և Ստեփանը ցանկանում էր մոռացնել այս կարճ ժամանակումը անցկացրած կեանքը։ (Օ՜ որ մանչալի՜ է որ Ստեփանը երբէք կատարեալ առողջութիւն չի ունենալ։) Բայց այս դեռ ևս չէր բաւական, որ կարճամիտ Ստեփանը հասնի յետին անպատկառութեան։ Մէկ կիրակի օր, երբոր պարապութիւնից չէր իմանում թէ ի՞նչ պէս անցկացնէ իրա ժամանակը, տեսաւ, որ իրա ընկերներից մէկ քանիսը գնում են պանդոկ, որտեղ էն ժամանակը սաղ էին ածում։ Ստեփանը կարծեց, թէ էնտեղ զուարճալի կ'լինի և գնաց։ Նրա ընկերներից մէկ քանիսը նստած էին մէկ ցածր և մութ տանը և սաստիկ խմում էին, և որովհետև խմելու հետ միասին ծխախոտ (չերուխ) էլ էին քաշում, վանողոյ բոլոր տունը լցրած էր ծխով։ Դէ՛ ժամանակից յետոյ մէկը առաջարկեց թուղթ խաղալ. ումինքը ուրախութեամբ համաձայնեցան և Ստեփանին էլ հրաւիրեցին, որ ոչինչ չէր հասկանում խաղալումը. էնդուր համար մէկը յանձնառու եղաւ սովորցնել, և Ստեփանը մինչև երեկոյ լաւ սովորեցաւ խաղալը։ Մինչև կիրակի նա [illegible] գնաց նոյն պանդոկը և տեսաւ, որ թուղթ էին

խաղում փոքրով։ Այս ամօթ համարեց չխաղալը, մանա-
ւանդ, որ առաջին խաղալումը տարել էր։ Այս անգամին
էլ տարաւ Յոհաննէսը և շատ սիրեց խաղը. բայց միշտ էն-
պէս բախտաւոր չէր, ինչպէս առաջին խաղումը. շատ ան-
գամ նա տանուլ էր տալիս մէկ աբասի, երկու աբասի,
որ պահած էր ունենում իրա ուտելիքի համար, և էս պատ-
ճառի բոլոր օրը քաղցած էր մնում։ Դ հարիւ այս բանը
նրան ախորժ չէր, բայց նա չէր կարողանում թողնել խաղը,
էնքուր համար, որ թէպէտ քանիցս անգամ ինքն իրէն
ասում էր՝ էլ չեմ գնալ պանդոկը և չեմ խաղալ, բայց
եթէ գալիս էր ընկերներից մէկը և առաջարկում էր, նա
էն սահմանին գնում էր։ Այս ունենալով, թէ տանուլ
տվածը յետ կ'տանէ նա գնում էր պանդոկ խաղալու. բայց
ի՞նչ տրամաբանութիւնով էր վերադառնում իրա տունը, երբ
որ կրկին տանուլ էր տալիս կամ ոչինչ չէր տանում։
Այսպէս խաղալը մէկ օր գցեց նրան այնպիսի փողի կա-
ւիրի մէջ, որ չէր իմանում թէ ինչ անէ փող ճարելու
համար. և էն ժամանակը նրա միտքը ընկաւ զարհուրելի
գործ, ցի, մէկ բան գողանալ էն տունից, որ տեղ նա
բանում էր։ Այս գողացաւ մէկ չուխայ (մահուդ) կապոյտ
և արծաթի գդալ. բայց իրա խղճմտանքը շատ տանջում
էր իրան։ Ո՞հ... լաւ կ'լինէր որ նա քաղցած մնար կամ
սովորութիւն խնդրէր, քան թէ այս բանս անէր։ Երբ որ
նա կամեցաւ այն գդալը ծախել, նրան կարծիք տանելով
բռնեցին, գողութիւնը յայտնվեցաւ և նա երկար ժամա-
նակ մնաց բանդումը։ Այս բանը շատ կոտրեց նրա բնու-
թիւնը. էն օրից յետ նա երբէք բոլոր սրտով չէր ուրա-
խանում և երբէք չ'կարաց իրա վիճակը լաւացնել։ Տե-
սէք, թէ ի՞նչ տեղ է հասցնում խմիչք և խաղ սիրելը,
որմից համար ասում են, թէ ուրախացնող են և զուարա-
ճացնող։

Լե. Անէնորհնիկ աշակերտ։

Թէպէտ Անտոնի ծնողքը տվել էին նրան ուսումնարան,
բայց չէին մոռիկ անում, թէ նա միշտ գնում է, թէ չէ։
Այս շատ անգամ ուշ էր գնում, և երբեմն բոլորովին չէր
գնում ուսումնարան։ Թէ վարժապետը հարցնում էր,

թէ ո՞ւր էր, պատասխան էր ստանում, թէ հայրը ուզարկել է Նշոնոնին իրա կրպակը (դիւքանը), կամ թէ Նշոնոնը հիւանդ է, կամ թէ Նշոնոնը այսօր շատ հո�կաւոր բանունի տանը։ Ի հարկէ վարժապետը շատ անբաւական էր, որովհետև ի՞նչպէս կարելի էր յոյս ունենալ, թէ Նշոնոնը յառաջադիմութիւն ցոյց կ՚տայ, երբոր նա այնքան անգամ չէր գնում ուսումնարան։— Այդ վարժապետը աւելի բարկանում էր, մէկ էն պատճառի, որ Նշոնոնը բոլորովին ոչինչ էր համարում ուսումը, երկրորդ՝ որ նա առանց ստիպելու չէր սովորում։ և երրորդ՝ որ նա չէր սիրում ուսումը մանաւանդ երբ որ քիչ սովորեցաւ կարդալ և գրել։ որովհետև այս տղան այնքան յիմար էր, որ կարծում էր, թէ մեծ լաւութիւն է անում վարժապետին, երբ որ աշխատասէր է լինում։ իսկի չէր մտածում, թէ ան իրա յաւտուկ պարտաւորութիւնն է և ուսումը իրա օգուտն է։ Նա պատճառաւ նա վատ անցկացրուց իրա չորս տարին, որ ուսումնարան էր գնում, և շատ քիչ բան սովորեցաւ։

Մէկ օր Նշոնոնը եկաւ ուսումնարան և յայտնեց վարժապետին, թէ էլ չի գալ։ Վարժապետը զարմացաւ և հարցրաւ՝ մի թէ քո հայրը քեզ ուրիշ ուսումնարան է տալիս։ Ոչ, պատասխան տուաւ Նշոնոնը, ես էլ չեմ կարդալու։ ես տանը պէտք եմ։ Շատ զարմանում եմ, առաց վարժապետը։ թէպէտ դու չորս տարի է որ դալիս ես ուսումնարան, բայց էդ ժամանակումը մէկ շաբաթ չի անցել, որ երեք կամ չորս օր յետ չմնայիր, և ինքդ էլ աւելի աշխատասէր չէիր։— Այրս ասում է, թէ ես բաւական դիտում, և նա ինքն էլ մինչև 14 տարին է գնացել ուսումնարան։ այժմ ուզում է ինձ տալ մէկ արհեստ սովորելու, որ ինքս ինձ համար հաց գտնեմ։ — Դու ի՞նչ ես կարծում, առաց վարժապետը, մի թէ լաւ արհեստաւորը կուզի՞ժեր առնել այնպիսի աշակերտին, որ լաւ չգիտէ կարդալ, գրել և թուաբանութիւն։ Դու դու ինքդ էլ ի՞նչ կանես, երբոր կ՚դառնաս արհեստաւոր, և քեզ պէտք կլինի գրել քո հաշիւը կամ ուրիշ բան։ — Նշոնոնը ուրիշ բան չկարաց պատասխան տալ, բայց միայն, թէ հայրը հրամայել է, որ էլ չ՚գնայ ուսումնարան։

Պարժապետի ասածները Հշմարիտ էին, բայց չիարացին փոխել Պնտոնի հօր կամքը։ Պնտոնը Հարուստ էր շատ սակաւ հայ իրա արհեստից։ իսկ եթէ նա մանուրթեան ժամանակը լաւ ուսում առնէր։ ամէն բանը աւելով կունենար։— Պ.յսպէս Պնտոնը թողէց ուսումնարանը։ ՝ի էլ չեկաւ և իրա վարժապետներից շնորհակալ չեղաւ նրանց աշխատանքի և ուսում տալու համար։— Հաւանորեն դուք այս գործին։ Դուք էլ Պնտոնի պէս անխելք և անշնորհակալ պէտք է դուրս գաք մէկ օր ուսումնարանից։

ԼԶ. Աստ ոմն։

Ինչպէս մարդիք կան։ որք վայելուչ և լաւ բան անելուց ամաչում են, բայց անվայելուչ և վատ բան անելուց չեն ամաչում, և երբեմն պարծենում են էլ։ թէ էնպէս բան են արել։ որ արդեւսած է կամ ամօթ է։ Նապէս բնութիւն ունէր Փիլիպը։ որ մէկ վաճառականի որդի էր։ Այս երբէք չէր ամաչում փողոցներումը անքաղաքավարութիւն անել, գոռալ։ չարութիւն անել և ընկերների հետ ծեծվել։ նա չէր ամաչում յիշից տալ և վատ խօսքեր ասել։ և պարծենում էր։ թէ մէկ օր իրա ընկերներից մէկին, որ չէր ուզում նրան Հանապարհ տալ։ սաստիկ ծեծեց և վեր գցեց։ (Մի՞թէ այսպիսի գործերը գովելի գործեր են։) Մէկ օր նա Համարձակվեցաւ անհնազանդ լինել իրա վարժապետին։ Հայրը իմանալով այս բանը։ էնդուր համար որ նա ամէն տեղ պարծենում էր։ թէ վարժապետին անկարգ խօսքեր ասացի։ կարծելով։ թէ վարժապետի խօսքը չլսելով նա շատ լաւ բան է արել։ Հայրը հրամայեց։ որ նա վարժապետից ներողութիւն խնդրէ և խոստանայ մուսանդամ չանել։ բայց նա չէր կամենում. նա ամաչում էր իրա վատ գործը ուզղել և կարծում էր։ թէ շատ ամօթ բան է ներողութիւն խնդրելը։ և աւելի լաւ էր համարում ամէն տեսակ պատիժ ստանալ։ քան թէ ներողութիւն խնդրել։ (Հաւանորեն էք այս գործը Փիլիպի։ Կարծում էք թէ պէտք է նրան նմանել։) Ինչև իսկ վերջը հարկադրեցին Փիլիպին ներո-

զուԹիւն խնդրել. բայց նա էնպէս ակամայ խնդրեց, որ կարծես Թէ ամօԹ բանէր ղղջալով իրա պակասուԹիւնը ուղղել։ (Ասուք ի՞նչ կանէիք, եԹէ նրա տեղը լինէիք։) Փիլիպի եղբայրը Կարապետը, ԹէպԹէտ նրանից լաւ վարք ունէր, բայց երբեմն նա էլ ամաչում էր էնպիսի բաներից, որից երբէք ամաչել պէտք չէ։ Մէկ օր նրան հրամայեցին մերտել մէկ փոքրիկ գեղեցիկ պատմուԹիւն, դուրս գալ ընկերների առաջ և պատմել նրանց, էնդուր համար որ նա գիտէր ո՛չ միայն պարզ կարդալ, այլ և լաւ արտաբերուԹիւնով ասել։ Բայց Կարապետը ամաչեց, և առաջ չէր ուզում դուրս գալ աշակերտների առաջ, ԹԷպէտ և միշտ հնազանդ էր վարժապետին։ Երկար ժամանակ պէտք եղաւ նրան խրատել և յորդորել, և վերջապէս վարժապետը շատ բարկացաւ, մինչև որ կարաց նրան ասել տալ պատմուԹիւնը. բայց ասելու ժամանակին էլ Կարապետը գլուխը կռացրել էր և էնպէս ծանր էր ասում և անկարգ, որ վարժապետը շատ անբաւական մնաց նրանից։ Հիմիկ պէտք էր նա ամաչէր, որովհետև իրա գործը լաւ չկատարեց. իսկ առաջ ի՞նչ կար ամաչելու։

ԼԷ. Աղեքսանդրի հանգիստ։

Երբ որ Աղեքսանդրը լսում էր ալքերի կամ ուրիշ տեսիլքների պատմուԹիւն, բոլորը գիշերը չէր քնում, որովհետև շատ վախկոտ էր. և ԹԷպէտ ծնողքը և վարժապետները նրան հասկացնում էին, Թէ ինչքան յիմար բան է ալքերից վախենալը, բայց նա չէր կարողանում սրտից հանել վախը։ Երբ որ մեծացաւ, նրան տվին աշակերտ մէկ հիւսնի (դիւրկարի) մօտ, որ հրամայեց նրան քնել վերնատունը նրա երկու որդւոց հետ։ Այս տղերքը իսկոյն հասկացան, Թէ Աղեքսանդրը վախենում է ալքերից և մէկ օր խօսք կապեցին իրանց մէջ նրան խաղ առնել (օյն գալ)։ Այս դիտաւորուԹիւնով նրանցից մէկը երեկոյին ասաց, Թէ շատ դադրած է և ուզում է վաղ քնել. բայց իրա եղբօր հետ խօսել էր, որ կերԹայ Թախ կ'կենայ Աղեքսանդրի անկողնակալի (կարավատի) տակը, և

երբ Ալեքսանդրը կ'գայ կ'պատկի, նա առաջ շղթաները կ'շարժէ և յետոյ վերան կ'ծածկէ սպիտակ կտաւ, յանկարծ դուրս կ'գայ և կերթայ նրա անկողնակալն մօտ։ Իսկ եղբայրը պէտք էր սենեակի դուռը կողպէր, որ Ալեքսանդրը չ'փախչի։ (Ո՞նչ էք կարծում այս խորհուրդի համար)։ Ինչպէս որ խօսած էին, էնպէս կատարվեցաւ. և վախկոտ Ալեքսանդրը շղթաների ձայնից էնպէս վախեցաւ, որ սառը քրտինքը ծածկեց բոլոր մարմինը. նա սկսաւ դողալ, բայց պատասխան չ'կար։ Ոչն ժամանակը նրա վախը հասաւ յետին աստիճանը. նա վեր կացաւ տեղերից և կամեցաւ փախչել, բայց սպիտակ տեսիլքը եկաւ կանգնեց առաջին և ձեռքիցը բռնեց։ Ալեքսանդրը լեղուն կապված և խելքը կորած առանց ձայն հանելու վեր ընկաւ գետնի վրա։ Երջապէս անկարգ տղերքը տեսին, թէ ինչ են ասել իրանց յիմար հանակով և հետևում էին հաւատացնել Ալեքսանդրին, թէ նա խաբված է. բայց ժամանակը անցել էր։ Ալեքսանդրը պատկած էր նրանց առաջին անշունչ։ Յուսահատված սկսան նրանք օգնութիւն կանչել իրանց ծնողացը, որք վազելով եկան և շատ դժվարութիւնով ուշաթափ Ալեքսանդրին կարողացան շունչի բերել. բայց նա շուտ խելքի չեկաւ. վախից ընկաւ ողորմելին սառատիկ ջերմի մէջ։ Երկու տղերքը շատ փոշիման էին իրանց արածից, որովհետև չէին կարծում, թէ էդպէս վատ կ'վերջանայ։ Հայրը սաստիկ պատժեց նրանց և ամենայն հնարքը բանեցրուց, որ Ալեքսանդրին թողնուլ տայ իրա առանց պատճառի վախը։

ԼԸ. Ճշմարտութիւնը ամէն բանից լաւ է։

Սահակը տասներկու տարեկան էր երբ որ նրա հայրը վախճանեցաւ։ Ո՛չ ոք չ'մնաց, որ նրա համար հոգս անէր, որովհետև հիւանդ մայրը չէր կարողանում իրա ձեռքի աշխատանքով նրան պահել։ Ինդուր համար Սահակը յանձն առաւ ինքը իրա համար ապրուստ ճարել, որ ծանրութիւն չ'լինի իրա մօրը։ Նա գիտեմ կարդալ, գրել և թուաբանութիւն, միտք էր անում նա, մի՞թէ ես աշխատքումը ինձ համար ճանապարհ չեմ գտնել եթէ աշ-

խստասէր կ'լինիմ և Աշխարհիս։ Այս մեաս բարով ասաց իրա մօրը և գնաց մօտիկ քաղաքը, ուր կենում էր նրա հօր բարեկամ մէկ հարուստ վաճառական։ Սահակը գնաց նրա մօտ, պատմեց իրա դառն վիճակը և խնդրեց օգնութիւն։ Ամենայն ջերմեռանդութեամբ կ'ծառայեմ ձեզ առաւօտվանից մինչև երեկոյ, ասաց նա, եթէ դուք վերառնէք ինձ ձեր տուն։ Մուրադեանը (անուն վաճառականին) շատ ուրախութիւնով խոստացաւ վերառնել իրա տուն այս որքա տղին, միայն եթէ կ'խոստանայ հաւատարիմ և աշխարհիս ծառայել։ Սահակը էնպէս խստակ որոշով խոստացաւ, որ Մուրադեանը հաւատաց նրան, վերառաւ իրա տուն և սկսաւ մանր գործեր յանձնել նրան, որոնց մէջ Սահակը կարճ ժամանակումը կարաց ցոյց տալ իրա հաւատարմութիւնը և հոգացողութիւնը։ և Մուրադեանը ոչինչ պատճառ չէր գտնում նրանից անբաւական լինել։ Ամենի հաւանում էր նա Սահակի խստակ սիրտը, որով նա շատ անգամ ինքը իրանից դանկատ էր անում երբոր մոռանում էր մէկ բան։ Նմանապէս սիրում էր նրա ջանքը, որով նա հետևում էր միշտ բան սովորել։ Կարճ ժամանակումը էս տղան այնքան հաւատարմութիւն ցոյց տվաւ իրա բարեբարին, որ նա իրա դրան բանալիքներն էլ թողնում էր Սահակի մօտ։ Մինչ բանիւ Սահակը շատ բաղդաւոր կ'լինէր, եթէ նրան անհաշտ թշնամի չդառնար տան կառավարիչ կնիկը, որ ամէն տեսակ հնարներում էր չար խօսել նրա վրա և տունից դուրս գցել, որովհետև նա դարձել էր էնպէս պահապան, որի մօտ այս կնիկը իրա առաջվան սովորութիւնով չէր կարողանում տիրոջ ծախսովը հրաւիրել իրա բարեկամներին։ Սահակի բաղդն էր, որ Մուրատեանը կատաղած մարդ չէր և էնդուր համար միշտ նկատում էր Սահակի լաւութիւնը և էնքան չէր հաւատում, մինչև որ բաւական պատճառ չունենայ իրա միտքը փոխելու։ Այս պատճառաւ նա չէր հաւատում պառաւ կառավարիչի չարախօսութիւնին, բայց զգուշութեան համար աւելի նկատում էր Սահակի վարքը և շատ անգամ փորձում էր նրա աշխատութիւնը։ Որովհետև երբէք չէր տեսել նրա մէջ ատելութիւն, վասնորոյ կարծիք չէր տանում, թէ նա կ'խաբի իրան։ Շատ անգամ,

երբ որ ուղարկում էր նրան բաներ առնելու, գիտութեամբ աւելի փող էր տալիս. բայց Սահակը միշտ ամբողջ (թամամ) յետ էր բերում աւելացածը և շատ անգամ սովորական գնից էլ էժան էր առնում։ Մէկ օր Մուրադեանը գիտութեամբ թողուց իրա հին քսակի մէջ մէկ արծաթ մանէթ, որպէս թէ մոռացած է, որ տեսնի, թէ Սահակը կ'պահպանի իրա շնմարտութիւնը, թէ վեր կառնի իրա համար։ Սահակը գտաւ էն մանէթը էն ժամանակ, երբ որ Մուրադեանի միւս ծառան էլ սենեակումն էր։ Ահա՛ լաւ գիւտ, ասաց ուրախանալով ծառան. էդ փողով մենք կարող ենք այսօր լաւ ուրախութիւն անել, սիրելի՛ Սահակ. ես կարծեմ, որ դու այնքան յիմար չես լինիլ, որ յետ տաս էդ մանէթը աղային։ Ինչպատճառ կտամ, ասաց Սահակը, էնդուր համար որ էս մանէթը նրանն է, և ո՛չ թէ մերը։ Խղճմտանքը արգելում է մեզ թաքցնել, և ես չեմ ուզում, որ իմ խնճմտանքս ծանրանայ։ Դա ասելով նա իսկոյն տարաւ մանէթը Մուրադեանի մօտ, որ այնքան ուրախացաւ, մինչև ընծայեց նրան էն մանէթը։ Էն օրվանից յետ Մուրադեանը բոլորովին հաւատաց նրան, և որովհետև էնքը որդիք չունէր, վճռեցրոյ իրա մեռնելու ժամանակը շնմարիտ և հաւատարիմ Սահակին կարգեց ժառանգ բոլոր իրա կայքին։

ԼԹ. Մանկական անհոգութիւն։

Գրիգորի հայրը շատ խիստ մարդ էր, բայց շնմարտասէր։ Դա անդադար հրամայում էր իրա որդուն աշխատել և շատ քիչ ժամանակ էր տալիս զբօսանքի համար. որով հետև նա միտք էր անում, թէ շատ օգուտ բան է, որ պզտիկ տղերքը իրանց մանկութիւնից սովորեն միշտ աշխատանք անել և աշխատութիւնը իրանց համար ծանր չ'համարեն, և էնդրով ժամանակաւ հետ կ'լինի իրանց համար ամէն վիճակի ծանրութիւնը քաշել։ Գրիգորին մէկ քանի ընկերներ ունէր, որոնք լաւ սննդած չէին։ Էս ընկերները նրա գլուխը մտցրին, թէ հայրը շատ խիստ է վարվում նրա հետ և թէ նա պարտական չէ ամէն հրամանքը դրուստ կատարել։ Դպրէս ասրելով քու կեանքդ

եւ քեզ համար ուրախութիւն չէ , ասում էին նրանք. քեզ տրգելած է շաբաթը մէկ անգամ եւ , կիրակի օրն եւ տունից դուրս գալ , ասաց մէկը։ Լաթէ ես քու տեղը լինէի , ասաց միւսը , ես վաղուց էն կանէի , ինչ որ շատերը արել են , և կերթայի աշխարքումը ինձ համար գործ հարել. շատերը էսպէս բանով իրանց համար բաղդ են գտել. նորումն եւ ասլսեցի, թէ մէկ մարդ էդպէս բանով մեծ հարստութիւն է գտել Պետերբուրգումը։ Յիմար կ'լինես, եթէ կ'թողնես որ էսպէս տանջեն քեզ։ Գրիգորը այս ամէն յիմար խօսքերը և դատողութիւնները հաւաքեց իրա գլխումը , և փախաւ իրա ծնողքի մօտից. և որովհետև բաւական հաւաքած փողունէր, վասնորոյ կարծում էր, թէ ոչինչ բան չի պակասիլ իրան։— Մէկ առաւօտ վաղ հաւաքեց նա իրա բոլոր փողերը և սկսաւ Հանապարհ գնալ, բայց սիրտը դողաց, որովհետև հասկանում էր, թէ մեղաւոր է ծնողաց առաջին։ Սակայն իրան միխիթարում էր էն դարդակ յուսով , թէ բաղդաւորութիւն կ'գտնէ և էն ժամանակը շուտով կ'ստանայ իրա ծնողքից ներողութիւն։ Մէկ քանի օր գնաց նա հեռու, բայց երբ որ տեսաւ, թէ իրա փողերը պակասում են, շատ վախեցաւ։ Սկսաւ խնդրել, որ իրան մէկը վեր առնի ծառայելու, Բայց ո՛չ ոք չէր կամենում վեր առնել , ինդուր համար , որ հասակ չունէր և տկար կազմվածք ունէր։ Գիտու ամենայնիւ Գրիգորը շարունակում էր իրա Հանապարհորդութիւնը, ինդուր համար, որ վախենում էր իրա հօրից և ամաչում էր յետ դալ տուն։ Վերջապէս քաղցածութիւնը հարկադրեց նրան խնդրել մէկ գեղացիից , որ իրան վեր առնէ ծառայ , և գեղացին ուրախութիւնով վեր առաւ . բայց ծանր մշակութիւն էր անել տալիս և ինպէս վատ և քիչ կերակուր էր ուտեցնում, որ Գրիգորը էլ չ'կարաց համբերել։ Այն ժամանակը նա խելքը գլուխը հաւաքեց , դառն արտասուքով ղջաց և մաքին դրեց, ինչպէս որ լինի , գնալ տուն իրա հօր և մօր մօտ։ Յետին թշուառութեան մէջ , դեղնած, ուժից ընկած և կորտած շորերով , եկաւ նա իրա քաղաքը և սպառեց մինչև երեկոյ, որ մ'թնով գնայ իրա ծնողաց տուն։ Բայը առաջ չ'Հանդիպեց նրան և վախա-

ցաւ նրա ողորմելի վիճակից. յետոյ ընկուլաւ նրան ողոր-
մած սրտով, բայց խիստ բարկանալով։ Այրը ուրախու-
թեան արտասունք էր թափում կորած և կրկին գտնը-
ված որդւոյ համար։ Ճշմարիտ զղջմամբ առում էր Գրի-
գորը, թէ արժանի չէ նրան որդի յիշվել, և առանց սրը-
տունջի յանձն առաւ իրան արժանի պատիժը։ Պարիժն
էլ այս էր՝ բաւական ժամանակ նրան արգելած էր հօր և
մօր հետ սեղան նստիլ և կամ նրանց մօտ լինիլ, այլ
ոչխարք էր նստէր և աշխատէր առանձին սենեակումը։ Սրա-
նից յետոյ Գրիգորը մոռացաւ իրա ընկերների յիմար դա-
տաղութիւնները։

Խ. Լինայողութեան և ծլոպութեան մէջ զանազանութիւն։

Մէկ վորբիկ քաղաքի կառավարութիւնը ընտրեց մէկ
քանի քաղաքացիք, որ ման գան ամէն տեղը և փող հա-
ւաքեն էն քաղաքի աղքատ ընտանեաց բաժանելու համար։
Այս քաղաքացիքը ման գալով մէկ օր առաւօտը վաղ
եկան մէկ հարուստ դիւղացի տուն։ Նրանց գալու ժա-
մանակը դիւղացին ձիւնոցի մօտ էր կանգնած, և նրանք
լսեցին, թէ նա ինչպէս բարկացած անարգում էր իրա
ծառային հնդուք համար, որ նա գիշերը թոկը դուրս էր
թողել անձրևի տակը և չէր դրել ցամաք տեղ։ —
Էնմեն տեղ ենք եկել հա՞, ասաց մէկ քաղաքացին միւսին.
ելևի սա շատ ժլատ մարդ է, էստեղ մենք ոչինչ չենք
կարող ստանալ։ — Փորձենք, ասաց միւսը. և գնացին մօտ,
Տանուտէրը ուրախութեամբ առաջ եկաւ և խնդրեց, որ
տուն հրամմեն։ Գնալու ժամանակը նրանք յայտնեցին,
Թէ ինչի են եկել։ Դիւղացին ուրախութեամբ սորա-
գրեց մեծ գումարը և իր տացաւ ամէն տարի էս ժամանա-
կին նոյն գումարը հատուցանել։ Քաղաքացիքը գարմացան,
և շնորհակալ լինելով չկարացին թաքցնել, թէ երբէք
այս չունէին այսպէսի օգնութիւն ստանալ, որովհետև
լսեցին, թէ ինչպէս կուլում էր նա այնքան հնդնի բանի
համար, որով նրանք կարծեցին, թէ նա շատ ժլատ մարդ
է։ — Որովհետև ես միշտ հոգս էի քաշում ամէն բանի հա-
մար, պարոնա՛յք, պատասխան տուաւ դիւղացին, հնդուք

համար ես այժմ ինքան կարողութիւն ունեմ, որ կո-
կող եմ ուրիշներին էլ օգնել։ Մի ամաչիր բան պա-
հելից, և էդ մի՛ համարիր ժլատութիւն. ամաչի՛ր միայն
ժլատութիւնից։ Խարեպարութիւն անելից մի՛ վախեր և
բարերարութիւնը փուչութիւն մի՛ համարիր. բայց բարե-
րարութիւն արա՛ յարմար ժամանակին և մեծ զգուշա-
թեամբ։

Խա. Գէղեակ։

Մոմիկոնեանը ունէր չորս զաւակ՝ Մկրտչէլ, Պետրոս,
Հեղինէ և Աննա։ Մէկ օր ասաց նրանց՝ ո՛ղջիր, ով որ ձե-
զանից վաղը վեր կ'կենայ վեց սահաթին առանց զար-
թեցնելու, նրա համար ոսկի կլինի։ Մանկունքը զարմա-
ցած ականջ էին դնում։— Ի՞նչ ոսկի կ'լինի, հա՛յրիկ,
ասաց Հեղինէն։— Դու իրա ժամանակին վեր կաց, ա-
սաց հայրը, ինքդ կ'տեսնես ինչ ոսկի կ'լինի։— Այս կ'զար-
թեմ վեց սահաթից առաջ, ասաց Հեղինէն, առանց ձեր
զարթեցնելու։— Այո՛, ես էլ, ասին միւսները։— Գիշերը-
վայ տասը սահաթը խփեց. հասաւ ժամանակը որ նրանք
գնան քնելու։ Ամենքը իրանց ծնողաց ձեռքը համբուրե-
լով ասային բարի գիշեր և ամէն մէկը ասաց՝ կ'տեսնէք,
հա՛յրիկ, որ վաղը վեց սահաթին ես վեր կացած կ'լինիմ։
Նրանք պառկեցան քնելու և ամէնը քնելուց առաջ կրկ-
նեց՝ վեցի՛ հէռը, վեցի՛ հէռը։ Մկրտչէլը դրեց ես իրա անկող-
նակալը (կարասատի) վրա՝ վաղը վեց սահաթի կէսին Մկ-
րտչէլը վեր կ'կենայ։ Ա՛հա՛ քեզ ապացոյց, թէ մարդս ա-
մէն բան կարող է անել, ինչ որ սրտով կամենայ։ Միւս
առաւօտը ինչպէս վեցերորդ սահաթի առաջին քառորդը
խփեց, մանկունքը վեր կացան, հագնվեցան և դուրս եկան
իրանց սենեակից առանց խօսելու, որովհետև ամէն մէկը
կարծում էր, թէ ինքը առաջ է վեր կացել. բայց հա-
մարեա՝ թէ ամէնքը միասին հաւաքվեցան սեղանատանը։
Խարի լոյս, ասում էին նրանք մէկ մէկու. այժմ տես-
նենք ի՞նչ ոսկի է պատրաստել մեզ համար վեր հայրը։
Նրանք գնացին հօր մօտ։ Ա՛հա՛, ասաց նա, երևի թէ,
երբ հայրը ոսկի է խոստանում, որդուց համար դժվար չէ
վաղ վերկանալը։ Ուրեմն ես էլ իմ խօսքս կ'կատարեմ։

Բայց, ո՛ղջիք, առաջ կատարեցէ՛ք ամէն պարտաւորու-
թիւնները, ինչ որ անում են լաւ մանկունքը առաւօտը
վերկենալուց յետոյ։ Նոքա գնացին, երեսները լուացին,
բերանները մաքրեցին խստակ ջրով, գլուխները սանդրեցին,
աղօթք արին և կրկին եկան հօր մօտ։ Ինչպան անհամբե-
ռութիւնից հարցնում էր, երբ կ'լինի տօնը։— Ա՜հա՛ ձեզ
տօն, ասաց հայրը, ծածկելով նրանց գլխին փոքրիկ գդակ-
ներ սղնձի թելից շինած մաղի պէս ծակ ծակ, որ ծածկում էր աչքերը, քիթը, բերանը և բոլոր երեսը, իսկ մնացեալ մասը գլխին ծածկվում էր մահուտով։— Հիմիկ հասկանո՞ւմ էք, հարցրաւ Մկրտչէլը մուսներին. ես կարծում եմ, որ այսօր մեր հայրը կամենում է մեզը հանել։— Յիրաւի՛, էդպէս է, ասաց հայրը. դուք ի՞նչ էք կարծում, լաւ տօն չէ՞։— Ա՞խ, ինչպէս գեղեցիկ տօն է, ասացին ամէնքը, և վազելով գնացին հօր ետևից, որ նմանապէս ծածկեց իրա գլխին այն գդակից և ամէն մէկին տվաւ մէկ մէկ բան տանելու։ Պետրոսին տվաւ կրակարանը (մանղալը) վառած գործելով։ Մկրտչէլին մէկ կապ ափսէնդ (խոտ), աղջկերքին երկայն դանակներ։ Նրանց ետևից հայրը և մայրը տանում էին մաղ և ամանները։

Կրկին պարտէզը և տօնը սկսաւ։ Հայրը բաց արաւ ցանկը, որ տեղ կենում էին մեղրաճանճերը, և փեթակները վեր առաւ իրանց տեղերից. յետոյ վեր էր առնում մէկ կապ ափսէնդ, դնում էր վառած ածուխի վրա և ծուխը մօտեցնում էր փեթակներին։ Երբոր մեղուները մուխից փախան թռչելով, հայրը առաջ կտրեց մեղրամոմը, դարձեց մաղի վրա, և յետոյ կտրեց և հանեց մեղրը մեծ մեծ կտորներով։ Ի՞նչ ուրախութիւն էր։ Մեղրը տարան տուն, մանկունքը հաւաքվեցան. իսկ մայրը բերաւ սպիտակ հաց, կտորեց, կտորների վրա քսեց մեղր և տվաւ մանկանց։ Հայրը նմանապէս եկաւ և ասաց՝ ո՛ղջիք, ձեզ համար եկաւ տօն կ'լինի. քսեցէք մեղրը հացի վրա և կերէք։ Բայց ո՛չ ոք խորխսին ձեռք չ'տայ։ Ամէնքը լսեցին հօր խօսքը, բայց 'ի Պէնայից։ Նա շատ ուզում էր խորխսի համը տեսնել. դնաց սեղանի մօտ, ամանի մէջից մէկ կտոր խորխսի վեր առաւ և բերանը դրաւ։ Յանկարծ էնպէս դառաց նա, որ բոլոր տան մէջ լսվեցաւ ձայնը։ Երդբարքը

և քոյրը սկսան վախենալով հարցնել — ի՞նչ եղաւ քեզ, Ագնա՛ Ջան։ Հայրը և մայրը վազելով եկան և նմանապէս հարցրին՝ ի՞նչ եղաւ քեզ Ագնա՛։ Բայց Ագնան բերանը բռնած գոռում էր և չէր կարողանում խօսել։ Պարը բաց արաւ նրա բերանը և մտիկ տվաւ։ Բայց ի՞նչ տեսաւ .... մէկ փոքրիկ մեղրաճանճ նստած էր նրա լեզուի վրա և իրա խայթը ցցել էր լեզուի մէջ։ Թէպէտ մայրը էն սահմանին վեր առաւ մեղրաճանճին, բայց ողորմելի աղջկայ լեզուն էնպէս ուռաւ, որ նա բոլոր օրը ոչինչ չ՚կարաց ուտել։ — Միւս տղերքը կերան իրանց մեղրը հացով, որ նրանց շատ ախորժ թվեցաւ և Պետրոսը ասաց, թէ շատ հաւանում է այս տօնին։ — Հեղինէն դուրս մտիկ տրաւ պատուհանից և տեսաւ, որ իրանց դրսէի աղջիկ Պարիամը անց էր կենում։ ԼսեղՀ Պարիամ, ասաց նա, նրա հայրը մեղրաճանճերը չունի և չէ կարողանում տալ նրան սպիտակ հաց մեղրը քսած։ Պա՛յր իմ, մա՛յր իմ, չէ՞ կարելի Պարիամին տալ մեղրով հաց։ — Մեծաւ ուրախութեամբ, որդեակ իմ, ասաց մայրը, և տվաւ նրան մէկ ամբողջ հաց մեղրով, իսկ Հեղինէն վազելով տարաւ տվաւ Պարիամին։ Ի՞նչպէս ուրախացրուց նա էն աղջկան. ի՞նչպէս նա շնորհակալ էր Հեղինէից։ Էն ժամանակը Հեղինէի համար մեղրը աւելի քաղցր թվեցաւ։

խբ. Լճակ ցէՈՈՒՂՅ։

Կամաբականի լճակումը շատ մանր ձկներ կային։ Դրը որ հայրը կամենում էր ուրախացնել իրա որդկերանցը, տանում էր նրանց լճակի մօտ։ Մէն մէկը վեր էր առնում մէկ կտոր սև հաց, բերում էր և մանր կտորներով գցում էր ջրի մէջ և ձուկները սկսում էին ուտել էն կտորտանքը։ Ետեղ նստում էին նրանք երկար ժամանակ և մտիկ էին անում, թէ ինչպէս ձուկները խաղում էին, ինչպէս մանր մժեղները թռչտում էին ջրի երեսին և ինչպէս գորտերը հանում էին գլուխները ջրից և կրկին մտնում էին ջուրը երբոր տղերքից մէկը մօտենում էր լճակին։ — Մանկունքը շատ անգամ խօսում էին իրարու հետ՝ ա՞խ եթէ մէկ անգամ պատահէր՝ մեղ բբռ-

նել էս ձկներից մէկին, կամ այս գորտերից, որ մօտիկից տեսնէինք. բայց Կամսարականը չէր թողնում նրանց։ (Արաւորնք է էս չթողնելը։ Այս կարծում եմ որ իրաւունք է. մանկունքը գորտ չեն, ձուկը չեն, և նրանց նման չեն կարող կենալ ջրի մէջ. իսկ եթէ տղան ջուրը ընկնի, էն ժամանակը լա՞ւ կ'լինի։ Այնպէս էլ ձկան համար է ջուրից դուրս եղած ժամանակը։) Մէկ օր Կամսարականը առաց իրա որդկերանցը՝ ուզում էր գնալ լճակի մօտ։ Ուզում ենք, ուզում ենք, ձայն տվին ամէնքը, և վազեցին հօր ետևից։ Կոստանդինը վազեց առաջ և ողջից առաջ հասաւ լճակի մօտ։ Ինչպէս հասաւ լճակին, իսկոյն յետ դարձաւ և սկսաւ գոչել՝ Ա՛սիլ, Այլնաբէ՛թ, Ա՛դրիա, մեր հայրը հանակ է առում, շուտով եկէ՛ք։ Ամէնքը վազեցին ով ինչպէս կարաց, և տեսան որ բոլոր ջուրը թողած էր լճակից և յատակումը շարժում էին մեծ և մանր կենդանիք։ Մէկ տեղ շարժում էր մեծ ձուկը, միւս տեղ ուրիշ ձուկը հետևում էր մանել ցեխի մէջ. ուրիշ մանր ձուկներ, գորտեր, ղեռունեներ, որդներ, և այլն ծածկել էին բոլոր լճակի յատակը։ Էն ժամանակը պէտք էր տեսնելու տղերանց ուրախութիւնը. մէկը ձայն էր տալիս՝ հա՛յրիկ, տեսէք ինչ մեծ գորտ է. միւսը՝ Ա՛դրիա, Ա՛դրիա, տես ինչ մեծ խեցգետին է։ Այլնաբէթը դուշում էր՝ ո՞վ է կարող ինձ համար հանել էն ձիձուն, ա՞յ, էն ձիձուն, Կոստանդին, որ մեծ ձկան մօտ է, նրա թևերի ծայրերը դեղին են։ Վերջապէս Կոստանդինը առաց՝ ա՞խ հայրիկ, եթէ դուք ուզում էք մեզ ուրախացնել, հրաման տուէք մեզ մանել լճակի մէջ։ Այրանից յետոյ միւսներն էլ սկսեցին խնդրել՝ ասելով՝ հայրիկ, հրաման տուէք, մենք ձուկներ կ'բռնենք, խեցգետիններ և գորտեր, կարծեմք որ շատ ուրախ կ'լինեմք։— Գնացէ՛ք, առաց հայրը, բայց առաջ հանեցէ՛ք ձեր կոշկները և գուլպէքը. հանեցէ՛ք ձեր վարտիքը և բարձրացրէ՛ք ձեր շրջերի թևերը, որ չ'աղտոտէք։ Էն տեղ դրած են սակառիք (սելենթներ), դուք կարող էք նրանց մէջ ձուկներ հաւաքել. մէկ սակառի կայ, որի մէջ պէտք է դձէ՛ք խեցգետիններ, իսկ ուրիշ ամանների մէջ դձէ՛ք գորտեր, ձիձուներ և ուրիշ ինչ որ կ'գտնէք ցեխի մէջ։— Ի՞նչ ա-

ըսխուԹիւն եղաւ։ Ամէնը սահԹ է քաշում, երբ որ նրանք հանում են շորերը քնելու ժամանակը. իսկ այժմ մէկ ըսպէի մէջ ամէնքը պատրաստ էին, և ինչպէս հայրը հրաման տվաւ, իսկոյն վազեցին լճակի մէջ։ Դա ի՞նչ մեծ ուրախուԹիւն էր։ Ինչպէս մէկը բռնում էր կամ մէկ ձուկը, կամ մէկ գորտ, կամ մէկ խեցգետին և կամ ՀինՀաւ, իսկոյն ուրախուԹիւնից գոչում էր և խմոց էր անում միւսներին։ Երկու սահԹ հրաման տվաւ նրանց հայրը զբօսանք անել էս զուարՀուԹիւնով. յետոյ ծոսի տվեց և հրամայեց նրանց դուրս գալ լճակից. բայց դուրս գալը էնպէս շուտ չէղաւ, ինչպէս մտնելը. ամէնը ուզում էր էլի մէկ բան բռնել. մէկը ձայն էր տալիս՝ էլի մէկ խեցգետին, միւսը՝ էլի մէկ ձուկը, սիրելի՛ հայրիկ. բայց հայրը ասաց՝ մէկ, երկու, երէք, և էս նշան էր, Թէ որ դէրը պէտք է հնազանդին։ Յետ այնորիկ նրանք ամէնքը դուրս եկան լճակից, բայց ինչի՞ նման էին. ամէնքը ցեխոտ և աղտոտ։ Այրը վազուց գիտէր, որ այսպէս կ՚լինին, և էնդուր համար հրամայել էր բերել խոտակ շապիկներ և ուրիշ շորեր։ Հայրը տարաւ նրանց ապրիւրի մօտ. էնտեղ նրանք լվացին իրանց ոտքերը, ձեռքերը և երեսները. յետոյ ամէն մէկը վերս առաւ իրա շապիկը, վարտիքը և շորերը, գնաց մէկ Թուփի ետև և էնտեղ շորերը փոխեց։—

Այժմ, որդիք, ասաց հայրը, դուք բռնեցիք այսօր շատ ձկներ. բայց տեսնենք էն դեբիներին համար էլ լա՞ւ է, Թէ չէ։

—Լաւ է, ասացին ամէնքը։

Հայրը։ Դուք կարծում էք, Թէ նրանց համար էլ էնպէս հեշտ է շունչ քաշել սակաւիներին և ամանների մէջումը, ինչպէս ջրո՞ւմը։

Կոստանդին։ Դա չեմ կարծում։

Հայրը։ Աբեմն անիրաւուԹիւն է երկար տանջել նրանց։ Ամմուել (այս էր ձկնորսի անունը, որ ջուրը Թողել էր լճակից.) Բէր էստեղ ամէնը, ինչ որ բռնեցին տղերքը. մենք կ՚խօսենք նրանց մէջ։ Դուք, որդիք, Կոստանդին, Վասիլ, Երվասարդ և Դաւիթ, և դու սիրելի՛ կին իմ, նստեցէք ինձ մօտ և ասացէք ՀՀմարիտ կ՚խօսիմ, Թէ չէ։ Կոստանդին. Երբ մարդս հրաման ունի տալու անասունին։

Կոսոմոպոլինը։ Երբ որ նա ֆնասում է մեզ։

Հայրը։ Ուրեմն ես երբէք պէտք չէ սպանեմ կովին, որով հետև կովը ինձ ֆնաս չէ տալի։

Կոսոմոպոլինը։ Կովին մենք սպանում ենք էնդուր համար, որ նրա միսը ուտում ենք։

Հայրը։ Ուրեմն ես կարող եմ սպանել անասունին, երբ որ նա ինձ ֆնասում է, կամ երբ որ պէտք է նրա միսը ուտեմ։ Բայց ինչի համար են սպանում կէտ ձուկինը նա ֆնաս չէ տալիս և նրա միսը չենն ուտում։

Կոսոմոպոլինը։ Շմարիտ է, բայց նրա իւղը պէտք է մարդուն։

Ղոքիա։ Ոսկորներն էլ։

Հայրը։ Ուրեմն երկու պատճառ կայ, որ մարդու համար մեղք չէ անասուն սպանել. մէկ՝ երբ որ նրանք ֆնաս են մեր կեանքի համար, և երկրորդ՝ երբ որ օգուտ են բերում իրանց մեռնելուց յետոյ։ Հրամայեցէք բերել էստեղ գատաստան անելու բոլոր մեր դերիները՝ տեսնենք իրաւունք ունե՞նք նրանց սպանելու։ Ա՛հա՝ երկու սակառի լիքը ձկներով. էս ձուկները մեզ ֆնաս տուե՞լ են։

Ա՛ֆնոյը։ Ո՛չ։

Հայրը։ Օգուտ կ՚լինի՞ մեզ, եթէ մենք սրանց սպանենք։

Կոսոմոպոլինը։ Կ՚լինի. էնդուր համար որ մենք կուտենք սրանց միսը. սրանց միսը շատ համեղ է։

Հայրը։ Մի և նոյնը կարելի է ասել միւս ձկների համար և խեցգետիններին. կարելի՞ է ուտել սրանց միսը։

Ղոքիա։ Փորձի՛ր, մայրիկ, եփել սրանց, դու կ՚տեսնես, թէ ինչպէս համեղ են։

Հայրը։ Ուրեմն էս խեղճերը պէտք է ամենքը մեռնեն։ Բայց որովհետև մենք բոլորին միասին մէկ անգամումը չենք կարող ուտել, էնդուր համար, դու Սամուէլ, մեր ցածներին ածա՛ սակառներին մէջ, որ յատուկ շինած են ձուկների և խեցգետինների համար։ Իմ կինը կ՚հոգայ, որ սրանք ամէն օր ուտելիք ստանան։ Ա՛յժմ կարդը հասաւ պարոն զորտերին՝ սրանք մեզ ֆնաս տուե՞լ են թէ չէ։

Ա՛ֆնոյը։ Ո՛չ, ո՛չ։

Հայրը։ Օգուտ կ՚լինի՞ եթէ մենք սպանենք սրանց. կամ՚ք որ ձեր մայրը հրամայի տապակել սրանց ձեզ համար։

Դշխոյեանը։ Ֆո՛ւ. ես չեմ ուտիլ զորտեր։ Դու չ՚ես

ուզում, Դարիա։

Դարիա։ Թո՛ղ ուրիշները ուտեն գորտերը. ես սիրում եմ խեցգետիններ։

Հայրը։ Ուրեմն թո՛ղ կենդանի մնան գորտերը։

Ա. Յսպէս էլ վնասեցին կենդանի թողնել բոլոր ձիձաղներին և զեռուններին։ Յետոյ Կամսարականը վեր առաւ ամէն մէկ տեսակից մէկ մէկ հատ, ցոյց տվաւ որդուցը և պատմեց, թէ ի՞նչպէս են նրանք կենում, ի՞նչ են ուտում և ինչի՞ համար պէտքական են մեզ։

Երբոր այս ամէնը վերջացաւ, հայրը ասաց՝ հիմիկ, ո՛ղջիք, որովհետև այս ամէն անասունները մեզ ո՛չինչ ինչպէս չեն անում իրանց կեանքովը, և իրանց մահովն էլ ոչինչ օգուտ չեն բերիլ, ուրեմն թողնենք սրանց ազատ։

Ա. Յո՛, այո՛, ձայն տվին ամէնքը. եղպէ՛ս անենք։

Այն ժամանակը ամէնքը կրկին գնացին լճակի մօտ և իրանց հետ տարան ամէնները, որոնց մէջ կային զանազան կենդանիք, և թափեցին լճակի մէջ։ Ուրախութիւնն վերջ չկար։ Ի՞նչպէս ուրախանում էին նրանք տեսնելով, թէ ի՞նչ ուրախութիւնով սկսան կենդանիքը ազատ թռչտել և սողալ։ Յամանակը հասաւ տուն գնալու. բայց ճանապարհ ընկնելուց առաջ հայրը հարցրաւ Կոստանդինին՝ մենք ինչի՞ համար կրկին թողնք էս կենդանիներին լճակի մէջ. ապրելո՞ւ թէ մեռնելու համար։

Դ հարկէ, ապրելու համար, պատասխան տուեց Կոստանդինը։

Ուրեմն մենք պէտք է հոգանք, թէ ինչո՞վ պէտք է նրանք ապրին։— Այս ասելուց յետոյ հայրը հրամայեց փակել այն ծակը, որ տեղից դուրս էր գնացել ջուրը, և շուտով ջուրը կրկին սկսաւ հաւաքվիլ։

Սրանց խօսելու ժամանակը մայրը առաջուց գնացել էր տուն, պատրաստել էր լաւ ճաշ, և հրամայել էր ևս եփել ձուկներ և խեցգետիններ։ Որովհետև տղայք բաւական ժամանակ մնացին բայց օգուտը, ենդուր համար ամէն կերակուրը նրանց շատ ախորժ թուեցաւ։

Ճաշից յետոյ, ամէնքը գնացին հօր մօտ, ձեռքը համբուրեցին և ասացին՝ շնորհակալ ենք ձեզանից, հա՛յրիկ, դուք այսօր մեզ համար պատուական տօն արիք։

Խդ. Պէտք է խաղալ հրացան պէտքով։

Մէկ որսորդ գնաց մէկ օր որս անելու, բայց որովհետև ոչինչ չ՚պատահեցաւ նրան, որ սպանի, նա տուն եկաւ և քաշ արեց լքցրած հրացանը (թիւֆենկը) պատի վերայ միւս գարդակ հրացանի մօտ։ Մէկ երիտասարդ տղայ 13 տարեկան, որ կենում էր որսորդի հետ մէկ տանը, եկաւ կաշկանդերը սրբելու համար։ Նա շատ ժամանակ էր որ ուզում էր որսորդ դառնալ, և եթէ գտնում էր հրացան, իսկոյն սկսում էր խաղալ, թէ և ամենքը շատ հետևում էին այդ սովորութիւնը նրան թողնուլ տալ ծեծելով և սպառնալով։ Այս անգամն էլ նա չ՚կարաց համբերել և վերը առաւ պատից հրացանը, քաշեց չարխմախը, թողուց և արձակեց հրացանը։ Նրա տարաբախտութիւնից պատահեցաւ լքցրած հրացանը։ գնդակը (գիւլլան) անցաւ պատուհանից և գիպաւ մէկ փոքրիկ աղջկայ։ Այս աղջիկը թէպէտ վերը կացաւ վերը ընկած տեղից և անցաւ մէկ քանի քայլ մնքալով, բայց աւելի չ՚կարաց առաջ գնալ և կքկին վերը ընկաւ։ Այն ժամանակը նրան օգնութիւն հասաւ կառավարը։ Աղջկան դրին կողնքի մէջ և խսկոյն ձիաւոր մարդ ուղարկեցին քաղաք բժիշկ բերելու. բայց նա կէս տհպթից մեռաւ առանց օգնութեան։ Այրիասարդը, որ խաղճմտանքից տանջվում էր, վերը ընկաւ պատուհանից պարտիզի մէջ և փախաւ. բայց միւս օրը բռնեցին նրան, և իրա անզգուշութեան պատճառաւ, որով մարդասպան եղաւ, երկար ժամանակ մնաց բանտումը։ Երջն էլ նա երբէք չէր կարողանում հանգիստ մնալ, ինդուր համար որ բողոր կեանքումը չ՚կարաց իրա մտքից հանել այն պարհսրելի պատահմունքը։

Խդ. Այնմայ բարի Գործ։

Մէկ այլասան, որ դարդակ այլով գնում էր վատ ճանապարհից, հասաւ մէկ ուրիշ այլասանի եռևից, որի այլը խուվել էր ցեխի մէջ, և որ նրան աղաչեց օգնել նրան։ Դարդակ այլն տեր մարդ տրաւ նրա երեսին, և

առանց խօսելու բաց արու իրա ձիերը, լծեց խուված սայ-
լին և հանեց ցեխից։ Ինչ որ ասում էր շնորհակալ սայ-
լապանը, նա բարկացած պատասխան էր տալիս նրան, և
երբ նա առաջարկեց նրան փող, նա բարկութեամբ պա-
տասխան տվաւ՝ չեմ ուզում։ Մէկ Հանապարհորդ, որ էդ
ժամանակը անց էր կենում էնտեղից, հարցրաւ թեթև
սայլապանին, թէ ինչի՞ համար նա այնպէս չուզելով օգ-
նեց։ Մէկ փոքր ժամանակ նա պատասխան չտվաւ, բայց
վերջապէս ասաց՝ էդ մարդը, որին ես այժմ հարկադրե-
ցայ օգնութիւն անել, պատահեցաւ ինձ մէկ օր էնպէս
տեղումը, որ տեղ ես չէի կարող նրան Հանապարհ տալ
առանց վնաս տալու իմ սայլին, և որ տեղ նա նստած
դարդակ սայլի մէջ, շատ լաւ կարող էր իրա Հանապարհը
ծռել, բայց նա հարկադրեց ինձ Հանապարհից դուրս գալ։
Եթէ ես չպատահէի այսօր սրան այսպիսի կարիք տեղը,
նա պէտք էր ինձ հետ հաշիւ տեսնէր։ և կարելի էր։
որ այսօր բոլոր օրը ոչ ոք չանցկնէնար էստեղից, որ կա-
րանար օգնել սրան։ իմ մեղքս եկան նրա անմեղ ձիերը։
Հաւանո՞ւմ էք դուք այս սեչապանի դատողութեանը։

խե։ Ինչպէս խաղալու պրպտալի վնասները։

Մէկ աղքատ այրի կնոջ որդի անունը Մարկոս, մղեմիկ
ժամանակից չոր էր, անհնազանդ և անզգայ։ Նրա հայրը,
որ նրան սատած էր պահում, մեռաւ էն ժամանակը։
երբ որ Մարկոսը 5 տարեկան էր։ իսկ մայրը այնքան փափ-
կասիրտ էր, որ չէր կարողանում պատժել չար Մարկոսին
նրա անհնազանդութեան համար։ Նա կարծում էր, թէ
բաւական է քաղցը խօսքերը և խրատները, բայց անզգամ
որդին չէր հասկանում։ Շատ անգամ արտասուքով
խնդրում էր նրանից մայրը, որ չթռչի և չկոծայ բարձը
բաների վրա և կնդրով իրա կեանքը չդնի վտանգի մէջ։
բայց ինչպէս մայրը հեռանում էր նրա մօտից, նա խիստ
սկսում էր ելի թռչոտել, բարձրանալ առաջվայ պէս, և
շատ անգամ տուն էր դալիս էնպէս թուլացած և դաղ-
բած, որ խեղճ մայրը վախանում էր մտիկ տալով նրա
երեսին։— Քանի անգամ խրատում էր նրան մայրը քրտ-

նած ժամանակը ջուր չ'խմել. բայց նա չէր կարանում համբերել և խսկոյն ջուր էր խմում էն ժամանակն էլ, երբ որ քրտինքը վազում էին երեսից։ Այ ի՞նչ եղաւ այս ամէն բանի վերջը։ Մէկ շաբ օր նա տուն եկաւ սաստիկ քրտնած և լայ լինելով ասաց, թէ կողքը ցաւում է և սիրտը խառնում է։ Ախտացած մայրը 'ի զուր աշխատեց օգնել նրան, բայց որովհետև նրա դռռալը սաստկացաւ, նա բժիշկ կանչեց։ Բժիշկը լաւ հարցուփորձ անելով և մարմինին մտիկ տալով, յայտնեց, թէ Մարկոսը սաստիկ թռչելով շատ վտանգաւոր ոսկոր է կոտրել։ Կարո՞ղ էք երևակայել ձեր մտքումը, սիրելի՛ մանկունք, թէ ի՞նչպէս վախացաւ նրա խեղճ մայրը։ Յողնենք դեռևս էն խարջերը (ծախսերը), որ նրա համար անհնազանդութեան պատճառաւ քաշեց խեղճ մայրը։ Լաւ էր, որ բարեսիրտ բժիշկը բան չառաւ կոտրած տեղը կապելու համար։ Բայց էս չէր նրա միայնակ և ողջից մեծ տարաբախտութիւնը, որ նա բերաւ իրա գլխին իրա չարութիւնով։ Ճուտով սկսաւ նրա կուրծքը ցաւիլ և առողջութիւնը թուլացաւ։ Այս կարող էր իրա ծերութեան ժամանակը օգնել նրան, իսկ այժմ նա պատճառ դարձաւ իրա մօր տարաբախտութեանը և տրտմութեանը։ Ասացէք, ի՞նչ օգուտ բան էք քաղում այս պատմութիւնից։ Ամբիսի խաղերից դուք հեռու կ'կենաք։ Ի՞նչ բանին ականջ կ'դնէք և ինչի՞ն կ'հետևիք։ Ինչի՞ համար պէտք է այդպէս անէք, և ո՛չ թէ նմանիք չար Մարկոսին։

Խզ. Թռչնաբնների բուն։

Մէկ երեկոյ Կատարինէն իրա մօր հետ ման էր գալու տարիւմը, և մայրը սովորեցրել էր նրան ամէն բանի վրա մտիկ անել ուշադրութիւնով։ Հիմիկ էլ նա էնպէս էր անում։ Յանկարծ նա կանգնեցաւ և ձայն տվաւ՝ մայրիկ, մա՛յրիկ, ասի՛ էստեղ շուտով և տե՛ս թէ ի՞նչ է։ Մայրը եկաւ և տեսաւ որ մէկ եղինջի (ձինձառի) թուփ բոլորովին ծածկած էր թրթռունների։ Նստած էին տգեղ որդունք մազոտ մէջքերով և կանանչ խաղերով մազերի

մէջ։ Պրանեմ էս թրթուրները, ասաց Կատարինէն։ Ոչ, ասաց մայրը, դու տեսնում ես, որ թրթուրները հաւաքված են եղինջի վրա, ուրեմն անվնաս են. բայց որ ժամանակ տեսնես նրանց նստած կեռասի վրա, կամ ուրիշ պտղաբեր ծառի վրա, էն ժամանակը կարող ես ասանել իրրև ինքասարեր զեռունները։ Բայց այս որդունքը կարող են քեզ մեծ ուրախութիւն տալ։ Վեր առ դրանց, տա՛ր տուն, և կերակրէ։

Կատարինէն խակոյն ձեռքը ձգեց որ մէկին վեր առնի, բայց խակոյն ձեռքը քաշեց դուրս հելով, որովհետև մինչ բրաւ, թէ եղինջը ձեռքը կ'ծակէ։ — Մի թէ դու չ'գիտես ինչպէս պէտք է վեր առնել եղինջը, որ ձեռքդ չ'ծակէ, հարցրաւ մայրը։ Կատարինէն մոռացել, հանեց իրա ձեռքի աղլուխը, փաթաթեց նրա մէջ իրա ձեռքը և կտրեց եղինջը։ Ուրախութեամբ տարաւ նա թրթուրները իրանց տուն, դրաւ եղինջով մէկ մեծ շուշայ ամանի մէջ, որ նրան տվաւ մայրը և ամանի բերանը կապեց թղթով։ Մի թէ դա՞ ուզում ես, որ դրանք խեղդվին, հարցրաւ մայրը։— Ամենևին չեմ ուզում, պատասխան տվաւ Կատարինէն։ Ուրեմն մանր ծակեր շինիր թղթի վրա, որ ամանի մէջ օդ անց կենայ։ Կատարինէն մոր ասածը արաւ և ուրախութիւնով մտիկ էր անում, թէ ինչպէս թրթուրները ուտում են եղինջը։ Մինա՞ օրը երբ որ Կատարինէն ուտում էր իրա նախաճաշիկը, մայրը հարցրաւ՝ մոռացել ես քո թրթուրներին, և նրանց էլ տուել ես այսօր նախաճաշիկ։— Օ, ասաց Կատարինէն, թրթուրներին ամանը լեքն է եղինջով։— Բայց մտիկ արա, ասաց մայրը, կարելի է եղինջը չորացած լինի. էս խեղճ կենդանիքը չորացած եղինջ չեն ուտում։ Որովհետև դու նրանց բերել էս քո տուն հիւր(ընդաղ), ուրեմն քո պարտաւորութիւնն է հոգալ նրանց կերակուրի համար և ամէն օր նրանց տալ կանանչ եղինջ. նրանք իրանք չեն կարող հիմիկ իրանց համար կերակուր ճարել, էնդուր համար, որ դու զրկել ես նրանց աղատութիւնից։ — Արանից յետոյ Կատարինէն էլ չէր մոռանում իրա մանր հիւրերին։ Էնդ օր շարունակ տալիս էր նրանց ուտելիք և ուրախանում էր մտիկ տալով նրանց ուտելուն։ Այ եղերորդ օրը նա ուզում էր նրանց կերա-

կուբ տալ, բայց, ո՛վ զարմանք... երբ որ ուզում էր բացանել թուղթը, տեսաւ որ բոլոր թրթուրները կպած էին թղթին. եւ թէ ոտքերով ամանք բռնած էին շուշան, ամանք թուղթը, և կարծես թէ մեռցած էին նրանց հետ։ Պաղելով գնաց Կատարինէն իրա մօր մօտ և ցոյց տուաւ կանխ ընկած թրթուրներին։— Ի՞նչ եղաւ դրանց, սիրելի մայրիկ, ես սրանց ամէն օր բաւական կերակուր էի տալիս, բայց սրանք մեռել են։— Հանգիստ կացի՛ր, պատասխան տուաւ մայրը, սրանք մեռած չեն, և դեռ քեզ երկար ժամանակ կուրախացնեն. թո՛ղ մնան կախ ընկած, ձեռք մի՛ տուր դրանց։ Կատարինէն իրա մօր հրամանը կատարեց և զգուշութեամբ վանկեց շուշայ ամանի բերանը։ Միւս օրը ինչպէս զարթեցաւ Կատարինէն, խոկցն վազեց և տեսաւ որ շուշայի մէջ նոր բաներ է եղել. թրթուրները կորել էին, իսկ թուղթի վրա կախված էին երկայն մաշկեր, դլխներին մանր սրակ։ Լրանք կենդանի էին և շարժվում էին։ Կատարինէն զարմացած չէր իմանում ի՞նչ անել. յանկարծ ծաղի տվեց և զարմացած մնաց անխօս։ Երջապես ձայն տվաւ՝ մա՛յրիկ մա՛յրիկ, շուտով եկ էստեղ. տես թէ ի՞նչ են եղել իմ թրթուրները։ Այս քեզ չէ՞ի ասում, թէ թրթուրները դեռ շատ կուրախացնեն քեզ։ Հիմիկ լաւ մտիկ արա. տես նրանք հանել են իրանց վրայի մորթը, որ նրանց մօտ կախված է, և իրանք, դարձել են ուրիշ կենդանի, որ կասեն կիսաթիթեռ. թո՛ղ կախ ընկած մնան, և դու ամէն օր մտիկ տուր շուշային. կարելի է շուտով ուրիշ բան էլ կ'տեսնես, որ քեզ կ'զարմացնէ։ Լռեցէք էլ եղաւ։ Յամառակը շատ երկար էր երևում անհամբեր Կատարինէին, և նա սկսել էր յոյսը կտրել։ Մէկ քանի շաբաթից յետոյ, Կատարինէն մէկ օր գնաց տեսնելու իրա շուշան։ Այս ի՞նչ տեսաւ... բոլոր շուշան լեցն էր գեղեցիկ թիթեռներով։— Ա՞խ, մտիկ արա, խնդրում եմ, սիրելի՛ մայրիկ, ասաց նա, ի՞նչ ունեմ ես իմ շուշայի մէջ։ Մայրը ուրախ դէմքով եկաւ, և երբ որ երկուսն էլ լաւ մտիկ, արին, ուրիշ նոր հրաշք էլ տեսին։ Մէկ թրթուր, որ դեռ փակված էր իրա բժժումը, ոտքերով հանել էր իրա վրայից և դուրս եկաւ մէջից. նրա թևերը դեռ փափուկ էին և ծալած էին միա-

սին ինչպէս մէկ թուղթի կտոր։ Շատով նա սկսաւ վա-
ղել շուշայի վրա և կախ ընկաւ թուղթից. նրանք տեսան,
թէ ինչպէս բացվում էին նրա թեւերը և կէս սահ-
թումը բոլորովին կտրվեցան։ Այսպէս անցաւ բոլոր
առաւօտը մինչև ճաշ. անդադար թիթեռները մէկ մէկու
հետից դուրս էին գալիս իրանց բժժոնելից, և ճաշից յե-
տոյ ամէնքը դուրս եկան։— Այժմ քեզ համար նոր ու-
րախութիւն կ'լինի, ասաց մայրը, ա՛ռ քո շուշայի ամանը,
տար պարտէզ, բա՛ց սրա թուղթը և թող թիթեռնե-
րին որ ազատվին։— Կատարինէն մոր հրամանը կատարեց,
և անպատմելի եղաւ նրա ուրախութիւնը, երբ որ տե-
սաւ, թէ թիթեռները սկսան դուրս գալ և թռչել մէկ
ծառից միւս ծառի վրա։ Այս բանից յետոյ երբ որ Կա-
տարինէն գնում էր պարտէզը և տեսնում էր սեւագոյն
թիթեռն սեաւ սեաւ նաշխերով, միշտ ասում էր՝ կարը-
ցեմ որ դու իմ շուշայ ամանի մէջնցն ես։

խէ. Մի՛ անորվեր զոյ յոր Ի նչէ Վիճակէ։

Մէկ քաղաքական ուսումնարանումը կարդում էին դե-
ղացիների տղերքը։ Քաղաքացիների տղերքը միշտ կարծում
էին, թէ իրանք գեղացոց տղերքից լաւ են, իսկ գեղացոց
տղերքը ծիծաղում էին քաղաքացւոց տղերքի վրա։ Այս
բանները այնքան երկարեցան, որ վերջը կռիւ բացվեցաւ։
Պարժապետը խնդրաւ այս բանը և պարզ մեկնեց նրանց,
թէ ինչքան յիմար բան է այսպէս վարվելը։ Դուք ամէնքդ
գեղ մանկունք էք, ասում էր նա. և երբէք չէք կարող
խնամով, թէ ի՞նչ վիճակումը կ'լինէք ժամանակաւ։ Կա-
րելի է որ շատ քաղաքացւոց որդիք իրանց համար ապրուստ
ճարեն գիւղումը, և շատ գեղացւոց որդիք իրանց համար
հաց ճարեն քաղաքումը։ Ինձ համար աշխատասէր և բարի
վարքով տղան ամենից լաւն է, ի՞նչ վիճակից ուզում է
լինի։ Մենք ամէնքս մարդիք ենք. մեզ ամենքիս Աստ-
ուած է ստեղծել և ամէնքի վրա հաւասար ողորմած է։
Լաւ մի՛տք արէք. եթէ իսկի մէկ մարդ չ'կամենար էն դոր-
ծով պարապել, որ մարդիկ հասարակօրէն վայելուչ չեն
համարում, ի՞նչ մեծ դժվարութիւնները կ'բաշխենք մենք։

Բայց էս անխելք տղերքը ակամէ չ'դրին այս խօսքե-
րին։ Նրանք պատասխանեցին այս բանը իրանց տունները մտնելու և

երկու կողմից էլ դանվեցան այնպիսի ծնողք, որք իրանց աղջիկի նման էին հասկանում բանը։ Կռիվը և անբաւականութիւնը հասաւ այն աստիճանը, որ քաղաքացիք չկամեցան թողնել գեղացոց որդիներանցը դալ քաղաքի ուսումնարան։ Այն ժամանակը, գիւղացիք խօսք կապեցին, որ մէկ փոքր ժամանակ ոչինչ բան չտանին քաղաք։ Երկու կողմից անբաւականութիւնը սաստկացաւ, և քաղաքացիքը և գիւղացիքը միմեանց յիշոց էին տալիս։ Այս պատճառաւ շուտով երևեցաւ մեծ պակասութիւն և բաներքը խառնվեցան։ Քաղաքացիք ալիւր չունէին, ուրեմն հաց էլ չունէին։ Մորթողները չունէին արջառ մորթելու համար։ Փողոցներումը չկար ո՛չ կաթ, ո՛չ ձու, ո՛չ խոտ, ո՛չ վայտ և ո՛չ ուրիշ շատ հարկաւոր բաներ, որք բերում են գեղերից քաղաք ծախելու համար։ Գեղացիքի համար էլ այս կռիւներքը մեծ վնաս բերին։ Ճշմարիտ է, թէպէտ նրանք ամէն շատ հարկաւոր բաներքը ունէին, բայց շատ էին հաւաքվում այն ուտելեղէն բաներքը, որ նրանք առաջ տանում էին քաղաք ծախելու։ Էս բաներից շատը փչացան և փտտեցան, որից նրանք միշտ փոդ էին ձարում։ Շատ բանումը սկսան շուտով պակասութիւն քաշել, որ առաջ էն բաներքը շատ էժան առնում էին քաղաքումը։ Ենդուր համար, որ քաղաքը բերում էին շատ ապրանք, և երբ պէտք եղաւ հատուցանել դուրբլինին, դերձիկին և մշակներին, էն ժամանակը թէպէտ նրանք շատ աւելորդով ունէին հաց, կաթ, իւղ, խոտ և փայտ, բայց փող չունէին։

Երկու կողմից էլ տեսան, որ քաղաքացիք չեն կարող կենալ առանց գեղացոց, իսկ գեղացիք առանց քաղաքացոց։ Համաձայնեցան որ թողնեն ամէն ծաղրածութիւնը, նախատինքը և պարծենալը։

Ամէնքը վերջապէս համաձայնեցան, թէ քաղաքներումն էլ, գեղերումն էլ կան բարի և չար մարդիք, բարեմտնդ և անբաղաքավար մարդիք, խելօք և յիմար մարդիք։ Թէ բնակիչներ պէտք է լինին քաղաքումն էլ, գիւղումն էլ և թէ քաղաքացիքն էլ, գիւղացիք էլ պէտք է կատարեն իրանց պարտաւորութիւնները։ Եթէ ժամանակը երկուսն էլ կ՚լինին հաւասար պատուելի։

Г.Ս.Խ.Հ. Հայկական Գրքի Պալատ
С.С.Р.А. Государственная Библиотека
7/II 1922
Именная Масниковская
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

20201

4182

2-41